ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
NATIONAL
LIBRARY
OF ARMENIA

Սույն ստեղծագործությունը հասանելի է Հայաստանի ազգային գրադարանի թվային շտեմարաններում՝ համաձայն դրա իրավատիրոջ հետ կնքած Համագործակցության պայմանագրի, և կարող է օգտագործվել բացառապես օրենքով նախատեսված կարգով՝ պահպանելով հեղինակի և իրավատիրոջ հեղինակային իրավունքները

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՍԻ ԴԱՓՆԵՃՅՈՒՂ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՀԻՇԱՏԱԿԻՆ

16 MAY 2018

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՄԻ ԴԱՓՆԵՃՅՈՒՂ ՎԱՉԳԵՆ Ա-Ի ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Հոդվածներ, հարցազրույցներ)

ԵՐԵՎԱՆ, «ՆԱԻՐԻ», 2004

ՆՎԻՐՎՈՒՄ Է

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՎԱԶԳԵՆ Ա-Ի

ՄԱՀՎԱՆ 10-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ

Գիրքը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի աղոթք-խոստովանությունն է, որի սրտի մատուռում մոմ է վառվում գերված Պատմական Հայաստանի հողերի համար, որի հույսի հորիզոնները տանում են Վանա ծով, որպեսզի պապակ հոգուն մի ափ ջուր տա, որի լույսը բացվում է «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ» փափագով: Իսկ առաջին անգամ տպագրվող փաստաթուղթ-նամակները՝ անաղարտ բարեխոս են Հայոց հայրապետի ու նրա կենաց փիլիսոփայության միջև:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

11-39938գր

20-ՐԴ ԴԱՐԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԱԿ ԱՂԲՅՈՒՐԸ

Հայաստանյայց եկեղեցու փառապանծ Հայոց հայրապետներից այսօր պատմությունը հաճախ է անդրադառնում 20-րդ դարի առաքինապաշտ, հրապարակագիր ու գիտնական, լուսաճաճանչ հումանիստ ու հայրենասեր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի կյանքին ու գործունեությանը: Երևույթը բնական է ու օրինաչափ, քանզի շնորհազարդ հայրապետը տակավին իր կենդանությանը դասական էր, իսկ այսօր, վախճանից մեկ տասնամյակ անց, դասականն ավելի քան խորհրդավոր ու առեղծվածային է թվում: Եվ եթե հազարամյա հեռավորությունից Գրիգոր Նարեկացուն սեփական զգացումներով ընկալելու հնարավորություն ունենք, նշանակում է՝ Վազգեն Առաջինին՝ Ամենայն Հայոց հայրապետին, որին այցելել եմ հաճախ, տեսել իր հպարտ մենության մեջ, ունկնդրել նրա թևավոր խոսքը, հաղորդակից դարձել հուշերին ու գալիքի հեռուները գնացող իմաստուն խոհերին, բնականաբար թղթին պետք է հանձնեմ այն, ինչը ապրում է իմ մեջ իբրև մասունք: Մասունքներ են դրանք, որից վերզգույշ ընտրությամբ առնված խոյակները կարող են ինչ-որ չափով հստակել նրա դիմանկարը:

Գեղեցիկ, հավատացնում եմ, շատ գեղեցիկ շուրթերով, հայակերտ քթով, կամար հոնքերի տակ խոր, ինչ-որ

առինքնող կայծով փայլուն, խոհուն աչքերով և մի քիչ ետ ընկած կզակը փոքրիկ մորուքով, մագնիսական զորությամբ բոլորից սիրվելու սահմանված բարձրահասակ, բարեձև մեկն էր նա: Արարիչ բնությունը, կարծես, նրան ստեղծել էր՝ մարդուն մարդկանց ցույց տալու համար:

Երբ հանդիպեցի Վազգեն կաթողիկոսին, ծեր էր, գլուխը ճերմակ էր ձյունի պես, և դա հատուկ գեղեցկություն էր տալիս նրան: Բացի այդ՝ կանոնավոր դիմագծերը աչխույժ ու վառ աչքերը ավելի շատ հիշեցնում էին նրբահոգի գեղանոսի: Բնավորությամբ ծանրախոհ էր, խորաթափանց, հաղորդական ու պայծառատես: Յուրաքանչյուր խոսքը տրամաբանված էր: Արտահայտությունները ինքնատիպ էին, պարզ, խորը մտածված: Այդ է պատճառը, որ նրա հետ մեկ անգամ զրուցողներն իսկ միշտ հիացմունքով են հիշում իրենց հանդիպման մասին:

Նա մեծ էր իր խոնարհությամբ, սրտի անսպառ բարությամբ, վարակիչ կենսասիրությամբ, պայծառ լավատեսությամբ: Բաց էր Հայոց հայրապետի դուռը, սեղանը, քսակը, սիրտը: Եվ նա, կենցաղագետ մարդուն հատուկ, ի բնե կիրթ ու քաղաքավարի, անում էր՝ ինչ պահանջում էր հյուրասիրության ընդունված կարգը: Նորին Սուրբ Օծությունը վերին աստիճանի զգայուն ու նրբակիրթ, աստվածապաշտ ու արվեստապաշտ, փայլուն շնորհներով օժտված հոգևորական էր:

Ստեղծարար աշխատանքի ճանապարհով որոնեց ու հասավ իր հարազատ ժողովրդի կյանքի ու հոգու ամենախոր ակունքները և դարձավ նրանց վավերական ու ինքնատիպ արտահայտիչը իր եկեղեցաշեն գործերով, մտատիպարների խոյանքով և իր ժայռակերտ հայրենասիրությամբ:

Հաճախ Հայոց հայրապետը որպես աղոթք մրմնջում էր բանաստեղծի սրտահույզ տողերը. «Երնեկ, հազար ու մի կյանք ունենամ, հազարը քեզ տամ, մեկը պահեմ քեզ երգելու համար»: Այո, եթե նա հազար ու մեկ կյանք ունենար, հազարն էլ կնվիրեր իր ժողովրդին ամբողջությամբ, առանց սակարկության:

Հայոց հայրապետը գուրգուրանքով էր վերաբերվում մեր հին արվեստի նմուշներին, ճարտարապետական կոթողներին, պայքարում էր դրանց պահպանման ու վերականգնման համար և միշտ ձգտում էր կատարյալին:

Թերևս, սա հենց նրա ներքին կյանքի շարժման օրենքն է, օրենք, որը օգնեց նրան բացահայտել և սրբագրել ուրիշների գործած մեղքերն ու սխալները: Ինչպես հայտնի է, դեռ 17-րդ դարում Նաղաշ Հովնաթանը և իր որդին՝ Հակոբ Հովնաթանը, ս. Էջմիածնի Մայր տաճարի ներսը՝ պատերը, կամարները, առաստաղը զարդարել էին նուրբ, բազմերանգ զարդապատկերներով, որոնք չգիտես ինչու դուր չէին եկել Խրիմյան Հայրիկ կաթողիկոսին, և նա կարգադրել էր՝ դրանք քերել և ճերմակեցնել, որի վերաբերյալ ժամանակին իր վրդովմունքն էր արտահայտել տաղանդավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանը. «Վեհափառ հայրապետը աչքի լույսի պես պիտի պահեր այդ նկարները, իսկ երբ նա կարգադրել է քերել և ոչնչացնել՝ դա բարբարոսություն է և մի բան էլ ավելի»: Ինչո՞ւ... Սա կյանքի առեղծվածներից մեկն է, որ տակավին անկարող է լուծել, պարզել մեր միտքը: Մինչդեռ բարձրաճաշակ Վազգեն կաթողիկոսի իղձն է եղել ներքնապես ու արտաքնապես հիմնովին վերանորոգված տեսնել հայ ճարտարապետության կոթող ս. Էջմիածնի Մայր տաճարը:

Ուստի՝ արդարամիտ կաթողիկոսը, շնորհիվ մեծ բարերար Գալուստ Կյուլպենկյանի տրամադրած միջոցների (400 հազար ԱՄՆ դոլար), ոչ միայն հաջողությամբ պսակեց ոմնանկարների վերականգնման աշխատանքները, այլև տաճարի ներքին բարեզարդման մաս կազմեցին Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցած Ավագ Խորանի մարմարակերտ խաչկալը, Իջման սեղանը, դասը ատյանից անջատող մարմարյա բազրիքներն ու բրոնզաձույլ դռնակները, մկրտության նոր ավազանը և այլն: Վերականգնվեց տաճարի հարավային զանգակատունը. հին զանգերը փոխարինվեցին երաժշտական նոր զանգերով, բարեկարգվեց շրջապատը:

Եվ. հիրավի. շուրջ 40 տարի նա իր բոլոր շնորհները ընծայաբերեց հայ եկեղեցու ծառայության ճանապարհին. ճանապարհ, որ հաճախ եղել է փշոտ, երբեմն նույնիսկ տառապալից, մեր ազգի փոթորկահույզ կյանքի ընթացքին:

Աստվածամերժության տարիներին նա ոչ միայն դժվարությունների դեմ պայքարել կարողացավ, այլև քաջալրի ու անշփոթ հաղթահարեց բոլոր խոչընդոտները հոգու խաղաղությամբ ու կենսափիլիսոփայությամբ, մտատիպարներով ու անսահման սիրով:

Եվ բյուր անգամ իրավացի էր Արշակ Ալպոյաճյանը, երբ գրում էր. «Սակավաթիվ են անոնք, որոնց համար ըսեինք՝ իր կյանքը եղավ հայտնաբերումը իր ազգի կյանքի... Այն վեհ ու ընտիր հոգիներեն մին, որ իրենց արթուն մտքով, լուրջ ջանքերով և անխոնջ աշխատասիրությամբ տիպար գործիչը կկազմեն և իրենց ժամանակի տիրապետող դեմքը կդառնան»:

Նա դիմագիծ ու հմայք, գույն, լույս ու ջերմություն էր տալիս Սրբություն Սրբոցին: Եվ սիրում էինք նրան, սիրում ամբողջ հոգով: Սակայն ինչքան էլ սիրես այդպիսի մեծությանը, միևնույն է, անհասանելիության գաղափարը շատ ավելի չափերով ծնում է պատկառանք, ակնածություն:

Հայոց հայրապետը հուշ պատմող էր, երբեմն դառնում էր անաչառ դատավոր երևույթների ու դեպքերի նկատմամբ: Նրա պատմածը մեծ պաթոսով, գեղեցիկ սիմֆոնիաներ, կտավներ են կարծեք, որ ձոնվում են հայոց մեծերին: Հաճախ կրկնում էր Վազգեն վեհափառը. «Պետք է սիրել. եթե կուզեք՝ պաշտել մեր մեծերին: Նրանք արժանի են, քանզի կատարել են իրենց պարտքը հարազատ ժողովրդի հանդեպ: Ազգի մեծերը հավետ պետք է ապրեն գալիք սերունդների հոգում և լսեն նրանց «ողորմիսը»:

Շատ անգամներ Հայոց հայրապետի զրույցները լսելիս ինձ միշտ թվում էր, թե հայ ժողովուրդը իր դարավոր գիտության, արվեստի շտեմարանի բանալիները և գեղեցիկ մատուցելու շնորհքը կտակել էր նրան՝ իր ծոցից ելած արժանավորագույնին. և այդ իմաստուն, լայնահորիզոն ներկայացուցիչը հարազատորեն ու շռայլ գործադրում էր շնորհի ստացած ժառանգությունը փոխանցել՝ հիացնելով իր ունկնդիրներին:

Քարոզելիս իր նպատակին հասել է հիմնականում խոհ ու խոսքի միջոցով: Նրա քարոզներում արտացոլվում է մարդու հանրագումարը՝ իր նախասկզբնական մաքրությամբ: Բառերի արժեքը միշտ կշռող վեհափառ հայրապետը նախադասության մեջ նրանց տեղն իմացող վարպետ ոսկերչի հմտությամբ քնարական նրբերանգներով զարդարում էր իր պերճ արևմտահայերենը, նրանց լույսով իմաստավորում և ամենահասարակ

նյութն անգամ մատուցելիս գեղեցկացնում էր այն արվեստագետի խորունկ մեկնաբանությամբ:

Նրա ոճի վսեմությունը ոչ թե արտաքին պաճուճանքի, այլ պարզության մեջ է, իսկ լեզուն հարուստ է և արտահայտիչ, ներքաճաշակ արվեստագետի վարպետությամբ է նա օգտվում հայոց լեզվի գանձարանից:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին... որ այն բոլորը լինելուց բացի՝ եղավ անխորտակ խարիսխը Մայր Աթոռ ս. Էջմիածնի և Սփյուռքի, ոսկեբերան ձայնափողը համայն հայության կյանքի և իղձերի:

«Ոմանք ծնվում են մեծ, ոմանք հասնում են մեծության, ոմանց տրվում է մեծություն»: Վազգեն Առաջինը ծնվել էր մեծ... մնաց մեծություն և անցավ անմահների շարքը: Ուստի պատահական չէ, որ մինչև այսօր էլ Մոսկվայի և Համայն Ռուսիո պատրիարք Նորին Սրբություն Ալեքսի Բ-ն հարգանքով և ակնածանքով է արտահայտվում հոգելույս Վազգեն վեհափառի մասին. «Լավագույն տպավորություններով եմ հիշում երանելի Վազգեն վեհափառին, չափազանց խելացի և իմաստուն հոգևորականին»:

Խորապես արդիական, բառի բուն իմաստով գեղեցիկ, քնարական ու խոհական Վազգեն Առաջին կաթողիկոսը հայ ժողովրդի ոգու լուսավոր արտահայտություններից է և ապրելու է գալիք բոլոր ժամանակներում:

Ծանր կսկիծով հողին հանձնեցինք նրան: Նյութ աճյունը իր հանգիստը գտավ հայ ժողովրդի համար այնպիսի նվիրական անունների կողքին, ինչպիսիք են հայրենյաց պաշտպան Ներսես Աշտարակեցին, Գևորգ 6-րդ Չորեքչյանը...

Ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանը միայն կարողացավ իրեն հատուկ տաղանդի ուժով մարմնավորել վեհափառի վիթխարի կերպարը: Այսօր երկուսն էլ կան, կան իրենց գործերով: Ապրում են ժողովրդի սրտի զարկերի մեջ: Իսկ ժողովուրդն անմահ է:

Տխուր բան է գերեզման այցելելը: Երբեմն «հուսկ բանքը» ամփոփված է հիշատակի տաճարում, որի առաջ ծնրադրելը մնացողներիս համար մխիթարանք է: Եթե այցելես նրա շիրմին՝ դաշտային վայրի ծաղիկների մի փունջ դիր այդ դամբարանին, հայրենի հողից քաղցված կարմիր ծաղիկներ:

ԱՄԵՆ ԻՆՉ ՀԻՇՈՂ, ԱՄԵՆ ԻՆՉ ՀԱՏՈՒՑՈՂ ԺԱՄԱՆԱԿԸ

Մեծերը երջանիկ են: Նրանք չգիտեն՝ ինչ ասել է մահվան օր, որովհետև երախտապարտ մարդկությունն իր սրտում հավերժ է պահում նրանց ծննդյան օրը: Այդպիսի մեծություն էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, որի ոգեղեն կերպարը ներկայացնելու համար հարկ կլինի ի մի բերել նրա ժամանակակիցների կարծիքները:

Երջանիկ էին նրանք, ովքեր աշխատանքային կամ մտերմության բերումով տեսել են Հայոց հայրապետին կյանքում, սրտամոտ զրուցել, շփվել հետը: Ահա այս երջանիկների պարտքն է՝ գրի առնել՝ ինչ լսել են ու տեսել:

Մի այդպիսի պարտքի տակ է 90-ամյա գեղանկարիչ Էդուարդ Իսաբեկյանը, որը մեր օրերի ամենաժողովրդական նկարիչն է: Այդ համբավին ու սիրուն նպաստել է, անշուշտ, և այն, որ նա իր արվեստով զբաղվելուց զատ շուրջ քսան տարի ղեկավարել է Հայաստանի ազգային պատկերասրահի տնօրենի պաշտոնը, դասավանդել է Հայաստանի պետական գեղարվեստի ակադեմիայում, մամուլում հանդես է եկել պատմվածքներով, հոդվածներով ու հարցազրույցներով, հրատարակել է «Իգդիր» պատմական վեպը, կազմակերպել է ցուցահանդեսներ:

Ժողովրդական ակունքներից է սնվել Իսաբեկյանի բյուրեղային, վճիտ արվեստը՝ իր մեջ առնելով հայ ժողովրդի իմաստությունը, հույսերն ու երազանքները, նրա դրամատիկ ցնցումներով լի պատմությունն ու բարգավաճ հայրենիք ունենալու ձգտումը:

Ահավասիկ, արվեստագետը, ձեռքը հողի շուրթին դրած, երակներով հոսող արյամբ զգում է հողի շնչառությունը, իսկ մեկ ուրիշ կտավում գույնի և գույների զուգադրումով կարողացել է վրձնի մի քանի հարվածով կենդանություն տալ պատմական թեմաներին, ուրվագծել դեմքերն ու դեպքերը, սրտի խորքից բխած զգացմունքներով նպատակ է դրել ոգեկոչել պատմական հերոսների հիշատակը, խոսել նրանց հետ, ողբալ նրանց մահը: Ստեղծագործության անսկիզբ ու անվախճան անջրպետի մեջ ստեղծագործող հոգիները կարող են մոտենալ իրենց սահմանող ընթացքի ծիրին:

Արդ, այսօր կյանքի ճախարակի ոսկե թելերի մեջ գեղանկարիչ Իսաբեկյանը փնտրում է իր համար այնքան սիրելի մի կերպարի հիշողությունը, որպիսին էր արթուն խղճի, ազնիվ հոգու և իր կոչումին անսակարկ նվիրյալ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը:

– Դժվար է անցյալից վերհիշել այն ամենը, ինչ կապված է ազգի կողմից սիրված Ամենայն Հայոց հայրապետի հետ, որ լցված էր կյանքով, և որի մեջ անթեղված էր մեր մեծագործ հայրապետների ոգին ու շունչը:

Ընտրյալները միշտ էլ սակավաթիվ են: Ամբողջ կյանքում ապրում, խորհում, տառապում են եկեղեցու, ազգի ու հայրենիքի համար՝ մնալով անանձնական ու կատարյալ՝ մարդկանց վճիտ հայացքով նայելու, բարություն և արդարություն ցանելու համար:

Վազգեն Առաջին վեհափառ հայրապետը այդ ընտրյալներից էր: Ուստի, կփորձեմ հոգեխույզի վրձինով խնամքով մաքրել ժամանակի փոշին, որպեսզի նրա հիշատակը տեսանելի, շոշափելի իրականություն դառնա ընթերցողի համար: Նրան հիշելիս ամենից առաջ ինձ պատկերանում է նրա ժպիտը, այն ճառագայթող ժպիտը, որ մշտապես լուսավորում էր Հայոց հայրապետի խորապես իմաստուն դեմքը: Զրուցելիս լիներ, թե քայլելիս՝ այդ ժպիտը շարունակ ծաղկում էր նրա դեմքին և նրան հաղորդում արտակարգ բարեհամբույր ու սիրալիր արտահայտություն:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի ժպիտը... Դա մի հմայիչ գեղեցկություն էր, որ նա իր գեղեցիկ արտաքինի և զրուցելու տաղանդի հետ պարգև էր ստացել ի վերուստ:

Առաջին անգամ նրան տեսել եմ համերգի ժամանակ, Երևանի հայֆիլհարմոնիայի Արամ Խաչատրյանի անվան համերգային մեծ դահլիճում: Հանկարծ օթյակում երևաց հոգևորականների մի խումբ՝ Հայոց հայրապետի գլխավորությամբ:

– Վեհափառը, Վազգեն վեհափառը,– լսվեցին այս ու այն կողմից:

Մինչ կկարողանայի ուշքս կենտրոնացնել՝ նրան ավելի լավ տեսնելու, դահլիճում ներկաները ոտքի կանգնեցին և բուռն ծափերով ողջունեցին Նորին Սուրբ Օծությանը: Նույնպիսի ջերմ ընդունելություն էին ցույց տալիս նրան ամեն տեղ՝ հոտնկայս, բուռն ծափերով ու օվացիաներով:

Որքան սիրում էր պատմություն ու գրականություն, նույնքան սիրում էր երաժշտություն ու նկարչություն: Բնական է, որ սիրում էր ծաղիկներ ու երեխաներ:

Առաջին հանդիպումը Վազգեն վեհափառի հետ տեղի է ունեցել իմ արվեստանոցում: Այցելության էր եկել՝ ծանոթանալու իմ աշխատանքներին: Օրերից մի օր իմ արվեստանոցում, բազկաթոռին նստած, խորհրդաստ զրույց սկսեց: Ինձ թվաց, թե ես ոչինչ չգիտեմ և կյանքում իմ ողջ ապրածը վերապրեցի վերստին: Չեմ հիշում մի դեպք, որ խոսելիս հարցից շեղվեր, բայց ինչի մասին էլ խոսեր, արտահայտվում էր պարզ, հասկանալի: Չկար խնդիր ու հարց, որի շուրջ չխոսեր, լիներ դա հուշամատյանում գրանցված երկիր՝ Բաբելոն, Կիլիկիա, լիներ Ակրոպոլիսի նման ճարտարապետական մի կոթող կամ Աղթամարի վանք, լիներ Ֆրիդրիխ Նիցշեի, Մարկիզ դը Սադի կամ Զիգմունդ Ֆրոյդի փիլիսոփայությունը, լիներ գրականություն՝ Հոմերոսից մինչև Գրիգոր Նարեկացի ու Պարույր Սևակ, նաև երաժշտություն՝ ժողովրդական մեղեդիներից մինչև Մոցարտ ու Կոմիտաս: Դատում էր ու խորհրդածում:

Արվեստապաշտ հայոց վեհափառը, խորապես ըմբռնելով մշակույթը, հեռատես խոհեմությամբ հասկանում էր նաև արվեստագետների իղձերն ու ձգտումները, հոգսերն ու ցավերը:

Մեր գնահատականը ճիշտ կընկալվի, եթե պատմության անիվը ետ պտտենք և տեսնենք, թե ինչ ժառանգություն հասավ Վազգեն Առաջինին, և ինչպիսին էր իրավիճակը Մայր Աթոռ ս. Էջմիածնում:

Աստվածամերժության տարիներին արգելափակումների և վախի մեջ հազիվ լսվում էր Հայ Առաքելական Եկեղեցու զարկերակի բաբախյունը: Ամենայն Հայոց հայրապետը ամենից առաջ պետք է գտներ և ապա փորձեր շարունակել անցյալից եկող կապերը, առանց որոնց անհնարին էր եկեղեցու լիարժեք գործունեությունը:

Գահակալության երեսունհինգ տարիներին ստեղծվեցին եկեղեցական արվեստի բազմաթիվ գործեր, որոնք թանգարանային բացառիկ նմուշներ են: Հայոց հայրապետը ամենից առաջ ձեռնամուխ եղավ դուրս մղելու եկեղեցիներից օտար, պատահական, ցածրաճաշակ գործերը՝ սկսելով Մայր տաճարից: Նրանց տեղը գրավեցին հայտնի հայ դասական նկարիչների սրբապատկերները, ճանաչված հեղինակների ժանյակագործ վարագույրները, խաչվառները, մոմակալներ և եկեղեցական այլ պարագաներ:

Հավատի տները անհրաժեշտ արվեստի գործերով հարստացնելու համար Ազգային պատկերասրահից Մայր Աթոռին վերադարձվեց եկեղեցական նկարչության զգալի թվով գործեր (բռնազավթվել էին ժամանակին), որոնք վերականգնման ու նորոգման աշխատանքներից հետո զետեղվեցին համապատասխան տեղերում:

Այս աշխատանքները կատարեցին Սանկտ Պետերբուրգից հրավիրված մասնագետները:

Իմ աշխատանքներից Մայր Աթոռին նվիրեցի երեք կտավ՝ «Բջնիի վանքը», «Գարունը Աշտարակում» և «Նամակ Հազկերտին»:

Վազգեն վեհափառի անմիջական հովանավորությամբ Էջմիածնում կատարվեցին առաջին և լուրջ փորձերը՝ ստեղծելու հայաոճ կահույք՝ թե եկեղեցիների ներքին հարդարման և թե վանական շինությունների համար: Այդ հիմքի վրա ստեղծվեցին այնքան հայկական, այնքան պատմական և այնքան ժամանակակից ս. Հռիփսիմե վանքի դռներն ու մոմավաճառի սեղանը, վանքի բակում գտնվող վանատան և սեղանատան կահույքը, Մայր տաճարի ներքին կահույքը և այլն: Կարող եմ ասել, որ սա զարթոնք է փայտարվեստի ասպարեզում:

Աննախադեպ ծաղկում ունեցավ ոսկերչական և արծաթագործական արվեստը: Բարձրաճաշակ Հայոց հայրապետը չէր հանդուրժում միջակությունը: Արվեստի արժեքների նկատմամբ վեհափառ հայրապետն ուներ ուրույն մոտեցում, ամենից առաջ նա զգում էր նյութական և հոգևոր մշակույթների արժեքների միասնականությունը:

Ուստի՝ բազմաթիվ եկեղեցական արժեքավոր սպասքների ու զարդերի (գավազաններ, մատանիներ, խաչեր, պանակներ, կաթսաներ, աղավնիներ) թվում գեղարվեստական մտատիպարով և կատարողական բարձր վարպետությամբ Բաղդասար Արզումանյանը և Ժիրայր Չոլոյանը ժամանակի և պատմության համար ստեղծեցին «Հայոց այբուբեն», «Խորհրդային Հայաստանի զինանշանը» և «Ոսկյա խաչ» արվեստի գանձերը:

Հայ ժողովուրդը դարեր շարունակ հպարտացել է իր գորգարվեստով: Այսօր կարող ենք հպարտանալ ժողովրդական նկարիչ Գրիգոր Խանջյանի «Վարդանանք», «Հայոց այբուբեն» գոբելեններով, որոնց գաղափարը և թեման Վազգեն վեհափառինն են: Նրա օրոք մի նոր թափ և որակ ստացավ հրատարակչական գործը: Մեր ժողովրդի համար մեծ նվեր էր Լ. Ազարյանի հեղինակությամբ հրատարակված «Խաչքարեր», «Արարատ», «Աղթամար», «Էջմիածնի գանձերը» արվեստի գրքերը: «Խաչքարեր» ալբոմը հնարավորություն է տալիս լայնորեն ծանոթանալու և գնահատելու քանդակագործական արվեստի այդ յուրահատուկ ստեղծագործությունները, որոնք միայն, մասնագետների գնահատությամբ, բավական պիտի լինեին մի ամբողջ ժողովրդի ճարտարապետության համար:

Սրտացավ Հայոց հայրապետը հայրենիք վերադարձրեց արվեստի բազմաթիվ գործեր՝ նկարներ, քան-

դակներ, ձեռագրեր, նշանավոր հայ գործիչների արխիվներ: Այդ գործերի թվում են եղել Հովհաննես Այվազովսկու, Վարդան Մախոխյանի, Էմանուել-Մանուկ Մահտեսյանի, Հովհաննես Ալխազյանի և այլոց գեղանկարները, ինչպես նաև Թորոս Ռոսլինի և անանուն գրիչների ու մանրանկարիչների ձեռագրեր:

Կատարվել է մեծ աշխատանք՝ շնորհիվ Վազգեն վեհափառի իմացության, իմաստության, նվիրումի, անխախտ հավատի և անձնական հմայքի:

Ուստի՝ հիշատակը նրա թող լինի ոսկեհատիկ ցորենի նման, որ բազում արդյունք է տալիս իր մահով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆԻ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 35-ԱՄՅԱԿԸ

«...Այսօր մեր հին արժեքներու մեկ տասներորդը թերևս կրցավ փրկվիլ, սակայն մեր ժողովրդի, Հայաստանյայց եկեղեցւոյ պատմությունը ամենամեծ փառքի տիտղոսն է քրիստոնեության պատմության մեջ»:

«Վազգեն Ա Հայրապետ Հայոց» գրքից

11-39938 գրք

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու հոգևոր և եկեղեցավարչական գերագույն կենտրոնական իշխանությունը պաշտոնապես հիմնադրել է Գրիգոր Լուսավորիչը, Երբ 301 թվականին Տրդատ թագավորի հրամանով քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվեց: Գրիգոր Լուսավորիչը Վաղարշապատում 303 թվականին հիմնել է Կաթողիկե ս. Էջմիածին տաճարը և դարձել հայոց առաջին կաթողիկոսը: Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև, Հովհաննես Մանդակունի, Կոմիտաս, Ներսես Շնորհալի, Ներսես Աշտարակեցի, Խրիմյան Հայրիկ, Գևորգ 6-րդ Չորեքչյան, Վազգեն Շինարար՝ անուններ, որոնցից յուրաքանչուրը այլ մի ժողովրդի ոգեղեն արժեքների անդաստանում կաղնի կհամարվեր... Հավուր պատշաճի չէ, որ ես Վազգեն Շինարար կաթողիկոսին թվարկեցի մեր մեծագործ կաթողիկոսների շարքում, նա այդ իրավունքը վաստակել է իրավամբ, և ապագայի վարքագիրները կվկայեն այդ, կարձանագրեն հպարտությամբ ու ակնածանքով:

Դեռևս 1935 թվականին Բուխարեստում հրատարակվող «Հերկ» ամսագրում երիտասարդ ապագա կաթողիկոսը մարգարեաբար գրել է. «Հայ ապագայի համար ատաղձ կառուցանել, նյութական և մանավանդ մտավոր ու հոգեկան իմաստով, ահա մեր օրերուն մեծ խնդիրը: Կառուցել՝ ցեղին հոգիեն բխող գգացումներու թելադրանքին տակ...»: Եվ սա այն ժամանակ, երբ չարը հայոց աշխարհի մեծագույն մասը ավերակների էր վերածել, երբ ժողովրդի զգալի մի հատվածը օտարված էր հայրենի հողից ու տնից, երբ հայրենիք կոչված այս սրտաչափ հողում հայ «մնացորդացը» մեծ, աներևակայելի դժվարություններ էր ապրում: Սակայն հայոց պատմության ոգին խորասպես ըմբռնած ազգի լինելիության գաղտնարանները ներթափանցած ապագա կաթողիկոսը, որ 1935 թվականին, դեռևս երիտասարդ էր, անփորձ և նոր էր սկսում իր ազգային-քաղաքական գործունեությունը, ի լուր ամենքի հայտարարում էր ազգի ոգու վերանորոգման մասին:

Եվ հետագայում, տասնյակ տարիներ հետո, երբ Վազգեն նորընտիր կաթողիկոսը, դեռևս ոտքը հայոց չարչրկված հողին չդրած, կառուցելու, վերաշինելու, շենացնելու ոսկեղեն տեսիլքներ էր տեսնում, ուղեցույց ունենալով Լուսավորչի մշտավառ ջահը, մտովի հաղորդակցվում Զվարթնոցը կերտող Ներսես Շինողի, Հռիփսիմեն հրաշակերտող Կոմիտասի, Անին հրաշակերտող Մեծն Տրդատի, Աղթամարի քարեղեն երազը մարմնավորող Մանվելի, կառավարական տունը, օպերան երկնող հանճարեղ Թամանյանի մեծ ավանդներին: Եվ այսօր, երբ նայում ենք Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 35-ամյա կառուցողական գործունեությանը, նոր ենք միայն հասկանում, որ 1935 թվականին մարգարեացած «Հայ ապագայի համար ատաղձ կառուցանել...» տողերը կարող են բանալի լինել հասկանալու, թե այդ ի՞նչ հրաշքով Վազգեն Առաջին կաթողիկոսը գահ բարձրանալու առաջին իսկ օրից սկսեց կառուցել, ստեղծել ու հրաշակերտել անսպառ եռանդով, անվերջ ու անդադրում և որքան խորհրդանշական է, որ Ներսես, Կոմիտաս, Տրդատ, Մանվել, Թամանյան մեծ ճարտարապետների աշխարհաշեն երկրում ժողովուրդը Վազգեն Առաջինին պատվեց ամենամեծ տիտղոսով՝ «Շինարար»: Հայոց հյուրընկալ աշխարհում սրանից ավելի մեծ սիրո և հարգանքի այլ դրսևորում դժվար է գտնել: Վեհափառը իր գահակալության 35 տարիների ընթացքում անմնացորդ նվիրվեց հայ ժողովրդի, նրա մշակույթի ծաղկմանն ու հաստատմանը:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջին (Լևոն-Կարապետ Աբրահամի Պալճյան) ծնվել է Բուխարեստում, 1908 թվականին: Սկզբնական կրթությունը ստացել է Բուխարեստի Միսաքյան-Քեսիմյան ազգային վարժարանում: Այնուհետև սովորել և ավարտել է Բուխարեստի համալսարանի գրականության և փիլիսոփայության բաժինը: 1929-43 թվականներին դասավանդել է Բուխարեստի հայկական դպրոցներում: 1943 թվականին Աթենքում ձեռնադրվել է վարդապետ և նշանակվել Ռումինիայի հայոց թեմի առաջնորդական տեղապահ, իսկ 1951 թվականին ձեռնադրվել է եպիսկոպոս: 1955 թվականին օծվել է Ամենայն Հայոց Հայրապետ:

Հայրապետական օծում ստանալուց չորս օր հետո Վազգեն Առաջին կաթողիկոսը եպիսկոպոս է ձեռնադրում յոթ վարդապետների և երկու օր հետո 12 եպիսկոպոսների ընկերակցությամբ և շքեղ հանդիսավորությամբ կատարում է սուրբ մյուռոնի օրհնություն, որը 30

տարիներ ի վեր չէր կատարվել Էջմիածնի Մայր տաճարում:

Երբ 1914 թվականին հայտնի բարերար Մանթաշյանի նվիրատվությամբ երկհարկանի վեհարանի կառուցումն ավարտվեց, ցարական կառավարությունն այն խլեց եկեղեցուց, այդպես գրավված մնաց մինչև 1957 թվականի հունվարը և միայն Վազգեն Ա կաթողիկոսի համառ ջանքերի շնորհիվ շենքը վերադարձվում է Մայր Աթոռին: Նոր վեհարանը վերանորոգվեց և դարձավ շքեղ պալատ, իսկ հին վեհարանը ծաղկյա դահլիճով վերածվեց «կաթողիկոսաց» թանգարանի:

Վազգեն Առաջին Հայրապետը իր անմիջական հոգածությամբ սնանձնեց Մայր Աթոռի հոգևոր ճեմարանը, ինչպես նաև տեսչական ու դասախոսական կազմի նորացնելու գործը: Ամեն ինչ արվեց, որպեսզի հոգևոր ճեմարանն ավարտած ուսանողները, որոնք կոչված են դառնալու հովիվներ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու, լինեն զարգացած, բարձր ճաշակի տեր, հոգով մաքուր և ազնիվ հոգևորականներ, հայ ժողովրդի դարավոր երաժշտական գանձերի և մշակույթի քաջ գիտակ, սեփական ժողովրդին մաքուր սրտով և խղճով ծառայելու պատրաստակամ մշակներ:

Վեհափառը տնտեսապես ապահովեց ճեմարանը, համալրեց աշակերտներով, բարձրացրեց ուսումնական մակարդակը՝ աշխատանքի հրավիրելով և պաշտոնի կոչելով մի շարք վաստակաշատ գիտնականների:

1961 թվականին Վազգեն Առաջին կաթողիկոսի նախաձեռնությամբ ու սփյուռքահայերի անշահախնդիր նվիրատվությամբ վերազինվեց ժամանակակից սարքավորումներով Մայր Աթոռի նոր տպարանը, որը հիմնադրվել էր 1771 թվականին Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի ջանքերով: Կանոնավոր կերպով սկսեց հրատարակվել «Էջմիածին» ամսագիրը, որը լուսաբանում է Մայր Աթոռի և հայ եկեղեցու թեմերի կյանքը, հրապարակում կոնդակներ, եկեղեցական ժողովների արձանագրություններ: Հրապարակում է հայ ձեռագրագիտության, աղբյուրագիտության, գաղթավայրերի պատմության, վանքերի վերաբերյալ ուսումնասիրություններ, հայ մատենագիրների անտիպ գործեր, ինչպես նաև անդրադառնում է հայոց լեզվի, հայ դպրոցի, տպագրության և մամուլի, խաչքարերի, եկեղեցական և ժողովրդական երաժշտության պատմությանը:

Վեհափառ հայրապետը նախաձեռնեց բազմահազար տպաքանակով «Նոր կտակարանի» հրատարակությանը՝ արևելահայերեն թարգմանությամբ: Ընթացքի մեջ է «Աստվածաշնչի» արևելահայերեն հրատարակությունը:

Վեհափառ հայրապետն իր անդրանիկ կոնդակում գրել է. «Պիտի տքնինք վերանորոգելու և վերազարդելու մեր հայրենի սրբավայրերը՝ վանքեր ու եկեղեցիներ, ինչպիսին են ս. Հռիփսիմեն, ս. Գայանեն, Խոր Վիրապը, Օշականը, Գեղարդը և ուրիշներ, որոնք մեր հոգևոր կյանքի սյուները կիանդիսանան ու հռչակված տաճարները աղոթքի և ուխտի, և զմայլելի հուշարձանները հայ ճարտարապետության փառքի»:

Այդ մեծ նպատակն իրագործելու համար Վեհափառ հայրապետի հրավերով կազմվեց անվանի հայ ճարտարապետներից բաղկացած մի հանձնաժողով, որն ինքնաբուխ նվիրումով և մեծ սիրով իր վրա վերցրեց Մայր Աթոռի և վանքերի ու եկեղեցիների շինարարական աշխատանքների կազմակերպումը Նորին Սրբության անմիջական հսկողությամբ, Գերագույն Հոգևոր Խորհրդի

համագործակցությամբ և Հայաստանի կառավարության աջակցությամբ: Հանձնաժողովը, որի կազմի մեջ էին անվանի ճարտարապետներ Միքայել Մազմանյանը, Կարո Ղաֆադարյանը, Վարազդատ Հարությունյանը, Ռաֆայել Իսրայելյանը, Կոստանդին Հովհաննիսյանը, մանրազնին ուսումնասիրեց և պատրաստեց բազմաթիվ նախագծեր՝ վերանորոգելու և բարեզարդելու ավերակ կամ կիսավեր եկեղեցիներ, վանքեր, համաշխարհային ճանաչում ձեռք բերած անկրկնելի կոթողներ:

Ամփոփ ներկայացվում է ոչ լրիվ ցանկը վերանորոգված, շենացած, նոր շունչ ու կյանք ստացած կառույցների՝ Էջմիածնի Մայր տաճար, ս. Հռիփսիմե, ս. Գայանե, Շողակաթ, Աստվածածին, Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց, Երևանի ս. Սարգիս, ս. Զորավոր, ս. Հովհաննես, Հրազդանի, Բաքվի, Մոսկվայի, Ռոստովի և Արմավիրի եկեղեցիները, Գեղարդի, Խոր Վիրապի վանքերը: Մայրավանքի շրջակայքում կառուցվեցին Եղեռնի հուշարձանը, Խրիմյան Հայրիկին նվիրված աղբյուր-կոթողը, Գալուստ Կյուլպեկյան վանատունը, Ալեք-Մարի Մանուկյան գանձատունը, հուշարձան աղբյուրը: Բյուրականում կառուցվեց հանգստյան տուն:

Վերջին յոթանասուն տարիներին եկեղեցին մեկուսացվեց պետությունից, և ժողովուրդը հետզհետե հեռացավ հայ եկեղեցուց: Շնորհիվ Վեհափառ հայրապետի իմաստուն քաղաքականության և Խորհրդային Հայաստանի բարեհաճության՝ Հայաստանյայց եկեղեցու և պետության հարաբերությունները մտան ողջմիտ ընթացքի մեջ՝ փոխըմբռնման բարենպաստ հող ստեղծելով հայ եկեղեցու գոյատևման և բարգավաճման համար:

Բազմավաստակ Հայրապետի հարաճուն ջանքերով արթնացավ հայ ժողովրդի ազգային ոգին Մայր եկեղեցու նկատմամբ, և այսօր հայ ժողովուրդը վերադառնում է իր արմատներին, խոնարհվում նախնյաց սրբությունների առաջ:

Նորին Սրբությունն էր, որ միանգամայն ճիշտ գնահատեց Սարդարապատի ճակատամարտի պատմական նշանակությունը, նպաստեց հուշարձանի կառուցմանը, հրապարակեց 1918 թվականի մայիսի 28-ը Հայաստանի պետականության վերականգնման օր հռչակող սրբատառ կոնդակը:

Հայ եկեղեցին եղել է «Հայ ժողովրդի հոգու գանձարան», որի հնամյա հաստարմատ կաղնին 1700 տարի ի վեր դիմադրել է բռնության արհավիրքներին, Արևելքից թե Արևմուտքից եկած քաղաքական և կրոնական փոթորիկներին: Եվ բնական է, որ աշխարհի բոլոր կողմերից բազմաքանակ հայեր, հայրենաբաղձ տարագիրներ գալիս էին «Հայոց ժողովրդի գանձարանից» տանելու առատորեն օրհնություն ու լույս, ոգի և կորով՝ հայորեն ապրելու, հպարտ ապրելու, հայ մնալու իրենց ամենօրյա դժվարին պայքարում:

Ամենայն Հայոց կաթողիկոսն իր գահակալության 35 տարիների ընթացքում կատարել է շուրջ 30 հովվապետական ուղևորություններ արտասահմանյան զանազան երկրներ, լույս ու հավատք շնորհել իր ցիրուցան հոտի բոլոր անդամներին, և, հակառակ իր ունեցած բազում մեծ ու փոքր դժվարություններին, տրտմություններին, կորուստներին, հոգեկան շռայլումներին՝ Վազգեն Առաջինը, թերևս, 130 կաթողիկոսներից ամենաբախտավորն էր, ինչպես ժամանակին արձանագրել էր. «Այսօր հայ շինականի արտը դալար է, պարտեզը՝ ծաղկուն, տունը՝ շեն, պայծառ, ու սեղանին վրա լեցուն հաց և լույս», եթե վրա չհասներ 1988 թվականի փետրվարի 27, 28, 29-ը,

երբ ոխերիմ թշնամին խուրձ-խուրձ մահ ու ավեր էր շաղ տալիս, արյուն ու հրդեհ, եթե չլիներ նոյեմբերը, եթե վրա չհասներ դեկտեմբերի 7-ը, երբ ահավոր երկրաշարժը ավերեց Խորհրդային Հայաստանի մեկ երրորդը:

Եվ, բնականաբար, Ամենայն Հայոց Հայրապետը անմասն չմնաց՝ 1988 թվականի դեկտեմբերյան աղետի ժամանակ նյութական և բարոյական օգնություն բաշխելով հազարավոր աղետյալների: Վեհափառ հայրապետը օգնության ձեռք մեկնեց նաև Սումգայիթից, Կիրովաբադից և այլ տարածքներից մազապուրծ փախած հայ փախստականներին:

Վեհափառ հայրապետի համառ ջանքերի շնորհիվ կյանքի կոչվեցին Սյունյաց, Գուգարաց և Արցախի թեմերը: Արցախում ողողանջեցին Գանձասարի, Ամարասի, Դադիվանքի զանգերը:

Ամենայն Հայոց կաթողիկոսի գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման գործում, ինչպես նաև միջեկեղեցական (էքումենիկ) շարժմանը իր բերած դրական մասնակցությունը:

1962 թվականին հայոց կաթողիկոսի հանձնարարությամբ Հայաստանյայց եկեղեցին անդամ դարձավ Ժնևում կենտրոնացած Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, իսկ հետագայում՝ Եվրոպական Եկեղեցիների Համաժողովին և Կանադայի Եկեղեցական Խորհրդին: Վեհափառ հայրապետի և քույր եկեղեցիների հոգևոր ղեկավարների միջև կայացած բազմաթիվ հանդիպումներն ու փոխադարձ այցելությունները ամրապնդեցին էքումենիկ հարաբերությունները:

Պատմական հատուկ նշանակություն ունի 1970 թվականի մայիսին Վազգեն Առաջին կաթողիկոսի այցելությունը Վատիկան և հանդիպումը Պողոս Զ սրբազան պապի հետ: Կաթողիկոսը հանդիպումներ է ունեցել բարձրաստիճան քաղաքական գործիչների հետ: Մասնակցել է բազմաթիվ խորհրդաժողովների: Մասնակցել է Պրագայի (1961), Ստոկհոլմի (1962), Հելսինկիի (1965), Մոսկվայի (1982-83), Թբիլիսիի և Երևանի մեջ գումարված միջազգային խորհրդաժողովների, միշտ խորիմաստ ելույթներով զորավիգ կանգնելով խաղաղության և ժողովուրդների միջև եղբայրության օգտաշատ գործին: Խաղաղության պաշտպանությանը մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է Խաղաղության համաշխարհային խորհրդի Ժոլիո Կյուրիի անվան ոսկե (1962) և խաղաղության պաշտպանության խորհրդային կոմիտեի ոսկե մեդալներով (1968) և բազմաթիվ շքանշաններով՝ որպես արդար գնահատանք իր երկար, բեղմնավոր գործունեության:

Հիրավի, Վազգեն Շինարար Հայրապետը այն մեծագործ կաթողիկոսներից էր, որ կարողացավ հայ եկեղեցին փառավորել և ժողովրդի համար մեծամեծ ծրագրեր իրականացնել, ինչպես որ խոստացել էր դեռևս 1935 թվականին. «Հայ ապագայի համար ատաղձ կառուցանել, նյութական և մանավանդ մտավոր ու հոգևոր իմաստով, ահա մեր օրերուն մեծ խնդիրը»:

ԽՈՒՆԿ ՈՒ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՎԱՊԵՏԻ ԵՎ ՎԱՐՊԵՏԻ ԱՆԹԱՌԱՄ ՀԻՇԱՏԱԿԻՆ

«Եթե այսօր հարց տրվի, թե որտեղ եք հրաշքների հանդիպել, ես, ամենից առաջ, կասեի՝ Հայաստանում... Քեզանից անկախ զարմանում ես, որ աշխարհի մի փոքրիկ անկյունում կարող ես հանդիպել այնպիսի հուշարձանների և այնպիսի մարդկանց, որոնք կարող են լինել ողջ աշխարհի հպարտությունն ու զարդը: Թող երիցս օրհնված լինի հայոց հողը՝ տաղանդների օրրանը, մեծ իրագործումների օրրանը»:

Այսպես է իր հիացմունքը հայտնել հայ ժողովրդի մասին ամերիկացի գրող, նկարիչ, աշխարհագրագետ, հայագետ Ռոքուել Քենտը, երբ այցելել էր Հայաստան՝ մոտիկից ծանոթացել հայ ստեղծագործ ոգուն, ուսումնասիրել մեր բազմադարյան մշակույթը, զրուցել Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի, ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանի և այլոց հետ: Վարպետ Սարյանի արվեստանոցում նա ուսումնասիրեց, ճանաչեց արվեստագետի աշխարհը՝ վառվող մի կարմիր-կարմիր արև, կորուսյալ երկրի թախիծ և բովանդակ աշխարհին իր սրտում կուտակված մղկտացող ցավն ու մաշող կարոտը պատմող վրձին:

Այո, գեղանկարիչ Սարյանը նախախնամության ընտրյալն է, որը փառաբանում է իր ժամանակը և իր հայրենիքը, իր ժողովրդի իղձերն ու սպասումները: Նա

այն արվեստագետն է, որ հասկացավ իր ժամանակի ասելիքի գույնը՝ դեղինը, կարմիրը, կապույտը, կանաչը. ստեղծեց նոր ոճ, որը միայն իրենն է՝ սարյանականը: Սա էլ հենց հայտնությունն է արվեստի մեջ: Նա այդ հայտնության նկարիչն է:

Վարպետը իր կտավներում տաղանդի ուժով ազգայինը անցկացրել է իր երևակայության խառնարանով, դարձրել համամարդկային, որոնք կարծես գույնով ու գծերով կազմված, ամենաբազմազան մտահղացումներով ու՝ դրանց ճշգրիտ վերլուծումով հարուստ մի աշխարհ լինեն, կախարդական վրձնով կյանքի կոչված, բայց վերին աստիճանի բնական: Ինչ թեմա էլ ընտրել է տաղանդավոր նկարիչը, նա միշտ կարողացել է ապրել իր ստեղծագործությամբ, գրավել, հուզել դիտողին, վարակել իր հույզերի, որոնումների, արտակարգ անմիջականությամբ, բնականությամբ: Ահա սրա մեջ է Սարյանի մեծությունն ու ժողովրդայնությունը, որի պարզ մեկնաբանությունը կարող ենք գտնել Վարպետի հարց ու պատասխանի խոկումներում:

– Ո՞ւմ եք համարում Ձեր ուսուցիչը:

– Ուսուցի՞չ, ի՞նչ ուսուցիչ: Ես ինքս եմ միշտ սովորում: Մարդ ինքը պիտի սովորի, ճանաչի, սիրի, տեսնի իրեն ու անկեղծ լինի: Իսկ սովորել պետք է բնությունից: Նրանից մեծ ուսուցիչ չկա:

– Ո՞րն է Ձեր հավատամքը:

– Ես մարդ եմ:

– Ազդեցությո՞ւն:

– Մեզ բոլորիս բնությունն է ստեղծել: Ազդվել կարելի է միայն բնությունից:

Վարպետը ոչ միայն իրեն հատուկ երփներանգներով ստեղծեց բարձր արվեստով հագեցած կառուցվածքային

խոշոր կտավներ՝ նոր ակոս բացելով հայ գեղանկարչության ասպարեզում, այլև աճեցրեց նկարիչների մի մեծ սերունդ, որոնք մեծ հաջողությունների հասան կերպարվեստի բնագավառում:

Վարպետ Սարյանը մեծ բարեկամն էր Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի և երկար տարիներ զբաղեցրել է Մայր Աթոռին առընթեր ճարտարապետների հանձնաժողովի պատվավոր նախագահի պաշտոնը: Մարտիրոս Սարյանն իր ընտանիքով հաճախ էր Մայր Տաճարում հափշտակված, հուզումով մասնակցում ս. պատարագին, վեհարանում ընդունելության սեղանների շուրջ Հայոց հայրապետի կողքին խանդավառում էր իր մտատիպարներով, հեռուները տեսնող փիլիսոփայությամբ:

Ակամա հիշեցի Մարտիրոս Սարյանի տուն-թանգարանի տնօրեն, արվեստաբան Շահեն Խաչատրյանի զրույցը. «Մարտիրոս Սարյանը ցանկալի հյուրն էր Վազգեն վեհափառի: Հերթական այցելությանը հանդիպում է Տիրամորը, որը ընթերցանությամբ էր զբաղված, հարցնում է.

– Ի՞նչ գիրք եք կարդում:

– Սուրեն Այվազյանի «Ճակատագիրն հայոցը»: Կարդում եմ, կարդում, չի վերջանում:

Սարյանը խոնարհում է ալեհեր գլուխը ու մրմնջում.

– Մի՞թե հնարավոր է վերջ ունենա հայոց ճակատագիրը:

Եվ այդ մեծ բարեկամությունը ներքին մղումների պատճառ դարձավ, որպեսզի Վարպետը նկարեր Վազգեն վեհափառի դիմանկարը: Ուստի, բնավ էլ պատահական չէ, որ Սարյանը խոստովանում է. «Ես շատ դիմանկարներ ունեմ: Դրանք միանգամայն տարբեր են:

Պրոֆեսոր Մանուկ Աբեղյանին նկարել եմ այլ կերպ, քան ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանին, Վազգեն կաթողիկոսին՝ էլ ավելի: Յուրաքանչյուր դիմանկար, որ անում եմ ես, ուզում եմ հաղորդել ամենից առաջ տվյալ մարդու ոչ թե արտաքին նմանությունը,այլ ներքին նկարագիրը, աշխատում եմ ստիպել նրան մոռանալ, որ ինքը բնորդ է, զրուցում եմ հետը: Ուրեմն ես նկարում եմ կենդանի. շարժուն, իր հետաքրքրություններով ապրող մարդուն»:

Առաջին դիմանկարը կատարված է Սարյանի գունանկարչությանը հատուկ նուրբ ճաշակով, որտեղ Հայոց հայրապետը պատկերված է գեղաքանդակ գլխով ու մտքառատ ճակատով, սուզված մտքերի մեջ: Նայում է տիրական հայացքով, ինչպես մի հին նահապետ: Ինչի՞ մասին է խորհում արդյոք: Տխո՞ւր է, նոր հղացումնե՞ր են զբաղեցնում նրան, թե... Վեհափառի նայվածքը... Աչքերը... այն ոսպնյակն է, որն իր մեջ ընկալել ու քողարկել է գողգոթա անցած ազգի պատմությունը, որի համար Աստծուց «անանձնական» ուրախություն աղերսեց.

Տուր ինձի, Տեր, ուրախությունն անանձնական,
Զայն սրբասաց իմ հոգյակիս ընեմ խորան՝
Զայն իմ մտքիս ծխեմ՝ զերթ խունկ բազմաբուրյան:

Խոշոր սև աչքերում կան մշտավառ, նույնիսկ ցոլուն կայծեր, որ ասես մոգիչ զորություն ունեն, մի զորություն, որը տպավորվում ու դաջվում է մարդու հիշողության մեջ՝ մնալով անմոռանալի: Ամեն մի վրձնահետք, գիծ՝ արդեն բնավորություն է: Նմանողության հետ մեկտեղ վեհափառի դիմանկարում կարելի է տեսնել նաև նրա հոգու տվայտանքները. ծերունական դիմագծերի վրա թեպետ

ոչ շեշտված, բայց կարելի է նկատել բնավորության խստություն, կամքի վճռականություն, ազգի ճակատագրով ապրող հովվապետի կենսափիլիսոփայությունը:

Կաթողիկոսի դեմքը նկարված է այնպիսի ճշմարիտ անմիջականությամբ, ինչպիսի մոտեցում պահանջվում է ռեալիստական դիմանկարից: Ընդհանրապես, դիմանկարից ստացված տպավորությունը վկայում է նրա հոգևորականի աստիճանը:

Տաք և սառը գույների, ինչպես նաև լույսի և ստվերների հակադրումները՝ որպես ծավալային ու տարածության արտահայտման միջոց, ավելի շեշտված են: Նկարիչը բանիմացությամբ ու ճաշակով է ներդաշնակել մարմնի, սև գույնի կապայի, մայրավանքի և կապույտ երկնքի գունային հարաբերությունները: Դիմանկարն ունի մի խոշոր առավելություն. այն ընկալվում է կերպարի ամբողջականությամբ: Դիմանկարի համար, որպես ֆոն ծառայող սբ. Էջմիածնի Մայր Տաճարը, բնանկարը նույնպես շախկապված է կաթողիկոսի էության հետ, ինչ որ չափով քննարական տրամադրություն հաղորդելով նրա մտախոհ հայացքին:

Նախորդ դիմանկարի հետ համեմատած՝ երկրորդ դիմանկարի գեղանկարչական միջոցներն ավելի կատարյալ են: Վազգեն կաթողիկոսը պատկերված է իր ընդունարանում, նստած բազկաթոռին, պաշտոնական տոնական զգեստով և տարբերանշաններով: Սև վեղարի վրա փայլում է ադամանդակուռ խաչը, կրծքից կախված է հայոց եկեղեցու զինանշանը (զույգ արծիվներ):, մատին՝ կաթողիկոսական թանկագին մատանին, որը տիրաբար հենել է բազկաթոռի հենակին: Չնայած իր շեշտված պերճության, դիմանկարը հոգեբանական և խորն է կերպարային տվյալներով, սուր է նմանողությամբ, արտահայտիչ է նկարագրով: Եթե փորձենք համեմատել դիմանկարից ստացված տպավորությունը Վազգեն վեհափառի անձնավորության հետ, կտեսնենք, որ դրանք նույնությամբ համընկնում են: Դա գրավական է, որ նկարիչը լավ է հասկացել Հայոց հայրապետի էությունը:

Սարյանը նրան պատկերել է բնավորությամբ խիստ, վճռական, եռանդուն, գործունյա, ներքնապես անհանգիստ, մտահոգ: Վազգեն վեհափառի ներքին նկարագիրը ամբողջացնում են երկարավուն դեմքը, շեշտված արծվաքիթը, աշխույժ աչքերը: Դիմանկարի թե՛ կոմպոզիցիոն լուծումը, թե՛ գունային շեշտված խտությունը պատկերին տվել են հանդիսավոր տոնական շքեղություն:

Այս դիմանկարը մի խորհրդավոր հոգեհանգիստ է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի լուսավոր հոգու համար:

«ԳԵՐՎԱԾ ԽԱՉՔԱՐԵՐԸ»

Հայոց խաչքարերն ունեն ձգողական ուժ: Այդ ուժի փյունիկորեն վերհառնումը, որպես հայ ստեղծագործ մտքի ու ոգու ճիչ, տեսնում է Հանրային ռադիոյի տնօրեն Արմեն Ամիրյանը Վազգեն Ա-ի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հուշերում:

– 1990 թվականն էր...

Վազգեն Առաջին կաթողիկոսի հետ նշանակված էր հանդիպում:

Վեհափառը խոստացել էր իր խոսքն ասել «Հոգեզարթնում» հեռուստատեսային հոգևոր ֆիլմի համար:

«Հոգեզարթնումը» իմ առաջին ինքնուրույն ռեժիսորական աշխատանքն էր:

Ճիշտ ժամանակին նկարահանող խումբը վեհարանում էր:

Վեհափառ Հայրապետն իրեն հատուկ գեղեցիկ ժպիտով ընդունեց մեզ: Նկարահանումը շատ կարճ տևեց՝ մի քանի րոպե: Շտապում էինք, սակայն Վեհը որոշել էր անպայման հյուրասիրել մեզ: Հետաքրքիր զրույց սկսվեց:

– Անջատիր տեսախցիկը, հետաքրքիր պատմություն եմ պատմելու, երբեք ոչ մի տեղ չեք լսի,– ասաց վեհափառը:

Ես օպերատորին աչքով արեցի, որ անջատի միայն տեսախցիկի լույսը (Աստված թող ներողամիտ լինի):

– Գիտե՞ք, ես երիտասարդ տարիքում գողություն եմ արել...

Մենք ուղղակի ապշեցինք: Ես ինձ շատ վատ զգացի, որ չեմ անջատել տեսախցիկը, և Վեհափառի գողության մասին անկեղծ խոստովանությունն այլևս իմ սեփականությունը չէ, այն կարող է տարածվել, և դրա մեղավորը ես եմ...

Ուզում էի ներողություն խնդրել Վեհափառից և ջնջել ժապավենի վրայից այդ հատվածը: Սակայն Վեհափառն այնքան էր ոգևորվել իր պատմությամբ, որ ուղղակի վրա բերեց պատմության շարունակությունը:

Ձեր տարիքի երիտասարդ էի: Սովետական Միության սահմանից այն կողմ, Թուրքիայի տարածքում էի:

Ճիշտ սահմանամերձ գոտում մի քանի բացառիկ խաչքարեր կային, որի մասին ինձ պատմել էր սահմանապահ զորքի ռուս սպան: Խնդրեցի, որպեսզի հնարավորության դեպքում լուսանկարի խաչքարերն: Իսկապես դրանք բացառիկ հոգևոր և մշակութային արժեք էին ներկայացնում հայ ժողովրդի, հայ առաքելական եկեղեցու համար: Ոգևորությունս այնքան մեծ էր, որ պատրաստ էի ամեն ինչի, միայն թե գերությունից փրկեի խաչքարերը:

Դրանք կարծես եղեռնի ժամանակ սպանված ու անարգված իմ ազգակիցների աճյունները լինեին, որոնց հոգիները թափառում էին՝ չգտնելով համբարձման ճանապարհը...

Գնացի ռուս սպայի մոտ: Կովկասյան հյուրասիրությանը հատուկ սեղան բացեցի: Հաճելի երեկո անցկացրեցինք: Կերանք, խմեցինք, կյանքից պատմություններ պատմեցինք, կենացներ ասեցինք և հարազատացանք: Հրաժեշտից առաջ ռուս սպային համաձնակ առաջարկ արեցի. Միասին անցնել սահմանը և գողանալ ու բերել խաչքարերը: Ռուս սպան, հանուն մեր բարեկամության,

պատրաստ էր նույնիսկ «պատերազմ» հայտարարել Թուրքիային:

Մի քանի օրից գիշերով սահմանապահ զորամիավորման բեռնատար մեքենայով պետք է անցնեինք սահմանը: Հագուստս պետք է լիներ շատ գործնական՝ ջինսեր, մուգ գույնի վերնաշապիկ և սպորտային կոշիկներ: Սպասեցինք մինչև մթնեց: Նախ սահմանն անցանք ոտքով՝ ռուս սպան, չորս սահմանապահները և ես: Հետո պիտի մոտենար բեռնատարը, որի մեջ պիտի բարձեինք խաչքարերը և անցնեինք սահմանը: Չնայած որ բոլորս էլ երիտասարդ էինք, միևնույն է, խաչքարը ծանր էր: Բարձեցինք... Քիչ հեռվում լսվեցին ձայներ: Հավանաբար թուրք սահմանապահներն էին... Այլևս հապաղել չէր կարելի: Սահմանն անցանք բարեհաջող, այնուամենայնիվ կրակոցներ եղան:

Մեզ նկատել էին: Մի քանի օր հետո ռուս սպան եկավ ինձ հրաժեշտ տալու: Բանակի ղեկավարությունը որոշել էր նրան տեղափոխել: Մենք խախտել էինք օրենքը: Ռուս սպան մեկնեց՝ թողնելով քաջ, բարի, ազնիվ և Աստվածահաճո մարդու հիշատակ, իսկ խաչքարը տեղադրվեց այստեղ՝ վեհարանի մուտքի աջ մասում:

Հիմա դու գիտես, որ Վեհափառ Հայրապետը երիտասարդ տարիներին գողություն է արել,– ձեռքն ուսիս տմբտմբացնելով՝ ավելացրեց,– իսկ տեսախցիկն այնուամենայնիվ պետք է անջատեիր...

Այդ օրվանից անցել է 14 տարի: Տեսաերիզը որպես սուրբ հիշատակ Վազգեն Վեհափառից պահում եմ տանը և մինչև օրս չեմ համարձակվում դիտել այդ ժապավենը:

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆ ՈՒ ԴԻՏՆԱԿԱՆԸ ՔԱՅԼԵՑԻՆ ԱՆԿՈԽ ԱՐԱՀԵՏՆԵՐՈՎ

Բնական և մարդկային է, որ անձնյուր ժամանակի ու տարածության մեջ առանձնացնի բաժանումներ և մի պահ կենտրոնանա, որպեսզի առավել ամբողջական ու ճշգրիտ վերլուծի իր անցած կյանքի ուղին, քանզի տարիները, ժամանակը նորանում են անհատի կյանքում հավատի, հույսի, սիրո և գործի մեջ. «Չի հինն անց, և արդ նոր եղև ամենայն»:

Ահավասիկ, 2003 թվականի սեպտեմբերի 18-ը պատմական հանգրվան է Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանի համար, որն իր ազազուն ուսերին կրում է 80 տարվա բեռ: Ծննդյան տոնի այգաբացին ազգի ճակատագրով ապրող գիտնականն ու հասարակական գործիչը, անսալով իր խղճմտանքի ձայնին, խորհրդածում և հանրագումարի է բերում իր կյանքից խլված օրերի թվաբանությունը. «Այն հարցին, թե ինչ է կյանքը, ես կպատասխանեի՝ իրական երազ: Ոչ երազ, ոչ իրականություն, այլ երազ-իրականություն, որտե՞ղ հաղթողը մտքի ու հոգու դաշնությունն է»:

Սակայն կարելի է՞ երազ-իրականությունը պատկերացնել նրանից դուրս՝ ոչ: Ֆադեյ Սարգսյանին պետք է փնտրել Ֆադեյ Սարգսյանի մեջ՝ մասնագիտությամբ Գիտնական, Պետական գործիչ, Մարդ: Արդարև, խոսել

նրա մասին՝ նշանակում է նկատի ունենալ մի աշխարհ՝ իր ուրույն նկարագրով, երևույթների և նրանց շարժման պարտադրված օրենքներով, անհրաժեշտորեն սկզբնավորված և բնականորեն ավարտին ձգտող նպատակներով ձևավորված, որի առաջընթացը օրգանապես պայմանավորված է նրա կամքի ու սկզբունքների հետ՝ մի կողմից, և ապրած դարաշրջանի ու նրան շրջապատող միջավայրի փոխազդեցության հետ՝ մյուս կողմից:

Մինչդեռ 20-րդ դարը նշանավորվեց պատերազմների ու հեղաբեկումների, աննախադեպ աղետների ու ավերածությունների, հույսերի ու սպասելիքների պաթետիկ վիճակներով: Ժամանակին ճիշտ է նկատել Սարգսյանի կյանքն ու գործունեությունը ուսումնասիրողներից մեկը՝ գրող-հրապարակախոս Ժիրայր Ավետիսյանը՝ գրելով, որ գիտնականի կյանքը պատմություն է՝ շաղախված իր ժողովրդի հոգսերով. «Կազմակերպչական խոշոր տաղանդը, լայն գիտելիքները, անխոնջ աշխատասիրությունը, մարդկանց հետ հեշտությամբ հարաբերակցություններ հաստատելու և ստեղծված կապերը պահպանելու զարմանալի կարողությունը, մարդկանց աշխատանքի գնահատումների անկողմնակալությունը մեր հանրապետությանը վիթխարի ծառայություններ են մատուցել:

Միամտություն կլիներ մտածել, որ պարոն Սարգսյանը այս ամենը հեշտությամբ է նվաճել: Բնությունն ու պատմությունը կոփել են խոչընդոտներից չընկճվող հայի ցայտուն տեսակ: Անձնազոհ քաջություն (1942-1943 թվականներին մասնակցել է Արևմտյան ռազմաճակատի մարտերին), գործունեության լայն թափ (1946-1963 թվականներին ԽՍՀՄ պաշտպանության նախարարության գլխավոր հրթիռահրետանային վարչության հրետանային գիտատեխնիկական կոմիտե, 1963-1977 թվականներին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտ, 1977-1989 թվականներին՝ ՀԽՍՀ կառավարության նախագահ (վարչապետ), 1993-ից՝ ՀՀ ԳԱԱ նախագահ), ինքնավստահություն, հաստատակամություն (ռադիոլոկացիոն սպառազինությունների նոր տեսակների ստեղծում և արտադրություն), ավանդապահ ընտանեկան կյանքում, ահա սարգսյանական հատուկ գծերը:

Նրա անունը անխզելիորեն կապված է գիտության մի ստվար ժամանակաշրջանի հետ, որտեղ հավերժական ու անփոփոխ արձանագրված է ազնիվ անուն ու բարի գործ՝ վեհ ու վսեմ ապրումներով ու մտատիպարներով. «Մենք ապրում ենք Արևելքի և Արևմուտքի, Եվրոպայի ու Ամերիկայի քաղաքակրթությունների մերձեցման ու համադրության հետաքրքիր ժամանակաշրջանում, որտեղ ծնվում են նոր կոնցեպցիաներ:

Ուստի՝ ամեն կերպ պետք է նպաստել այդ գործընթացների ընդլայնմանն ու արագ զարգացմանը և զգալ ժամանակի զարկերակի բաբախյունը ու հասու լինել ժամանակակից մարդու հոգեբանությանն ու մտածողությանը, քանզի իմ խորին համոզմամբ՝ դրանով է պայմանավորված ապագայի համաշխարհային գիտության առաջընթացը»:

Ավելի քան հիսուն տարի նա եռանդուն կերպով մասնակցել է մեր ժողովրդի գիտական, հասարակական կյանքին, նաև հոգևոր մշակույթի ստեղծման ու զարգացման շնորհակալ գործին:

Ակնարկս ծանրաբեռնելու գնով իսկ ուզում եմ ներկայացնել որոշ փաստեր, որոնցով կարող ենք միայն հպարտանալ: Ֆաղեյ Սարգսյանին շնորհվել է ԽՍՀՄ կառավարության կողմից սահմանված բոլոր բարձրա-

գույն շքանշաններն ու մեդալները, պարգևատրվել է «Ոսկե աստղ» և «Ոսկե մեդալ» նշաններով, Միջազգային կենսագրական կենտրոնի կողմից (Քեմբրիջ, Մեծ Բրիտանիա), ՉԺՀ երկու մեդալով, Ռուսաստանի Դաշնության գիտությունների ակադեմիայի անդամ, Վրաստանի գիտությունների ակադեմիայի անդամ...»:

Դժվար է, եթե ոչ անհնար, թվարկել այն բոլոր պարգևներն ու շնորհները, որոնց արժանացել է պրն Սարգսյանը, որն այսօր էլ պատնեշի վրա է և թանձրույթի մեջ իրեն զգում է ամեն դիպվածի մասնակից: Նման դեպքում հիշում ես Սաղմոսերգուի հետևյալ տողերը. «Ընդ առաւօտս որպէս դալարի զուարճասցին և ծաղկեսցին»:

Թող որ Ֆադեյ Սարգսյանի ծննդյան օրվան հնչած բանախոսությունները, շնորհավորանքներն ու մաղթանքները նրա կյանքի պարզ շարադրանքը լինի, մինչդեռ պատմությունն անսխալական է և իր տարեգրության էջերում յուրաքանչյուրին հատկացնում է այն ստույգ տեղը, որին նա արժանի է: Վստահ եմ, որ բանասիրական միտքը կանդրադառնա նրա կյանքի պատմությանը՝ մի մարդու, որը միայն փառք ու պատիվ է բերել իր ժողովրդին: Իսկ նրա ալեկոծ հոգին կխաղաղվի, երբ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդնորդական փոխանորդ Նավասարդ եպիսկոպոս Կճոյանի օրհնությամբ գիտության և մշակույթի կերոնը կվառի Արարատի փեշերին: Այնժամ, բանաստեղծի խոսքը քիչ փոխելով, կազդարարենք. մեր բոլոր ռահվիրաները՝ Մովսես Խորենացուց մինչև Գրիգոր Նարեկացի, Նարեկացուց մինչև Վազգեն Առաջին Ամենայն Հայոց վեհափառ և Արամ Խաչատրյան ու Մարտիրոս Սարյան, սրանցից մինչև Վիկտոր Համբարձումյան, Էդուարդ

Իսաբեկյան, Նավասարդ սրբազան ու Ֆադեյ Սարգսյան՝ «Բոլորն անխտիր և յուրաքանչյուրն

Անպայման պիտի
Ծնվեր նույն տնից
Նույն ցեղից սերեր
Եվ պատվով, փառքով,
Վեհությամբ կյեր
Նույն տոհմանունը՝
Մեսրոպ Մաշտոցյանք:

Այստեղ առանց երկընտրանքի կարող եմ ասել, որ ընդհանուր մի բան ունեին Վազգեն վեհափառը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ (վարչապետ) Ֆադեյ Սարգսյանը՝ հաղորդակից բնավորություն և սրտացավ հետաքրքրություն դեպի ազգային արժեքները, դեպի եկեղեցին, հայրենիքը:

Ահավասիկ, Ֆադեյ Սարգսյանի մտորումները երջանկահիշատակ Վազգեն կաթողիկոսի մասին.

– Ասում են՝ առաջին տպավորությունը, սխալ թե ուղիղ, երբեք չի մոռացվում: Եվ այդ ճշմարիտ է: Ես գոնե իմ առաջին հանդիպումը նրա հետ և նրանից ստացած տպավորությունը հիշում եմ ամենայն պայծառությամբ: Հիշողությանս մեջ մնացել է երկու տպավորություն՝ մեկը գեղեցիկ մի մարդու դիմապատկերից, իսկ մյուսը՝ ավարտված մեր զրույցներից, որոնցով կփորձեմ ոգեկոչել այդ պատկերը կենդանացնող հոգին:

Դեռևս 49 տարի առաջ, երբ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Վազգեն Առաջին հայրապետն ընտրվեց Ամենայն Հայոց կաթողիկոս, մեծ ուրախություն ունեցանք նրան տեսնելու ս. Էջմիածնի կամարների տակ: Այն ժամանակ

նա հավաստիացրեց, որ Մայր Աթոռը, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին իր մեկուսացված, անշուք վիճակից բարձրանալու է համաշխարհային ճանաչման աստիճանին: Կաթողիկոսական գահակալության անցած 39 տարիների ընթացքում հայ ժողովուրդը ականատես եղավ վեհափառ հոր ամբողջական նվիրվածությանը՝ ի սեր Աստծո, ի սեր հայրենիքի և ի սեր ազգի: Աշխարհով մեկ կատարած իր շրջագայություններով և ոգեշունչ խոսքի զորությամբ, ճգնելով ու տառապելով, նա բարձրացրեց հայ անունը, ճանաչել տվեց ամենուր նրա մեծ ցավը:

Այսօր ի սրտե կարող ենք ասել, որ մենք ազգովին հպարտ ենք մեր սիրելի վեհափառ հայրապետով, ազգովին երախտապարտ ենք նրան՝ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած իր մեծ նվիրվածության համար:

Դեռևս 1937 թվականին Բուխարեստում, տակավին երիտասարդ ուսուցիչ, Լևոն-Կարապետ Պալճյանը, խորապես համոզված, կոչ էր անում իր հայրենակիցներին՝ լինել ժողովրդի հետ՝ որպես կենսաբանական արժեք, նույնանալ ազգի և մշակույթի հետ՝ որպես բարոյական, հոգևոր արժեք, նույնանալ հայրենիքի հողի, ջրի հետ՝ որպես աշխատող, ստեղծագործող արժեք, վերջապես նույնանալ հայ պետությունն ամրացնող և նրա ապագան իրականացնող իդեալների հետ՝ որպես քաղաքական ուժ:

Ահա, մեր կարծիքով, պատկերը ճշմարիտ հայի: Այսպիսի հասուն, կարգավորված գաղափարներով ս. Էջմիածնի նվիրական միջավայրում փայլատակեց Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի միտքը:

Եկան և անցան տարիները, և ձյունն Արարատի գագաթից իջավ նաև Ամենայն Հայոց հայրապետի գլխին՝

ավելացնելով նրա իմաստությունը, սերն իր ժողովրդի հանդեպ: Ամենայն Հայոց կաթողիկոսին սովորաբար կոչում են «շինարար» և չեն սխալվում: Իրավամբ նա հայ եկեղեցու պատմության մեջ հանդես եկավ որպես բացառիկ շինարար կաթողիկոս, ի կատար ածեց հայի շինարարական ու կառուցողական սխրանքները:

Վազգեն Առաջինի ղեկավարությամբ են վերականգնվում և կյանքի կոչվում կիսակործան ու լքված մեր վանքերը, որոնց կամարների տակ կրկին հնչեցին հայոց շարականները: Նրա բարձր ճաշակով վերականգնվեց վեհարանը, նրա նախաձեռնությամբ կառուցվեց «Ալեք և Մարի Մանուկյան գանձատունը»: Վեհափառը վառվում էր աշխատանքի մեջ՝ ունենալով այն մեծագույն հատկանիշը, որը կոչվում է պարտքի գիտակցում ազգի նկատմամբ: Չէր հուսահատվում, պայքարում էր:

Հայաստանի կառավարությունը՝ Կարեն Սերոբի Դեմիրճյանը և ես, հասկանում և ամեն կերպ աջակցում էինք նրան:

1988 թվականի աղետի օրերին նա իրեն դրսևորում էր բացառիկ ձևով: Ծանր լուրերի, դեպքերի ազդեցության տակ շատերն ընկճվում էին, հուսահատվում և այլևս կարծեք ելք չէին տեսնում մեր ժողովրդի համար: Վեհափառ հայրապետը, սակայն թեև տխրում էր, տանջվում, բայց երբեք չէր կորցնում հույսն ու հավատը:

– Եղել են ավելի ծանր օրեր և աղետներ, բայց մեր ժողովուրդը գտել է մի ելք և բուժել է իր վերքերը,– ասում էր իմաստուն հայրապետը ամեն անգամ, երբ զգում էր, որ շուրջը՝ զրուցակիցները ընկնում են հուսահատության մեջ:

Այդ օրերին սրտապնդիչ էր լսել այդպիսի խոսքեր, մանավանդ Ամենայն Հայոց կաթողիկոսից: Նրա իմաստուն խոսքերը ասվում էին այնպիսի հավատով ու համոզիչ շեշտով, որ մարդը թեթևություն էր զգում և ինքը ևս տոգորվում էր հույսերով: Նա անողոք անալիտիկ էր և ստույգ փաստերի երկրպագու: Երբ գալիս էին և հայտնում որևէ լուր՝ միշտ հարցնում էր. «Ստուգե՞լ եք...»: Եվ դա մարդկանց ստիպում էր, նրա հետ խոսելիս, լինել ճշմարտապատում: Սրանից չպետք է մակաբերել, թե նա խիստ մարդ էր:

Երբ զրուցում էինք, զգում էինք նրա ներքին բարեկրթությունը, կարեկից սիրտը: Զրույցների ժամանակ նա սրտաբաց պատմում էր ինձ իր մանկությունից, ուսանողական տարիներից: Վեհափառ հայրապետը շատ կարդացած մարդ էր, գիտեր թե դասական և թե նոր գրականությունը՝ իր լավ նմուշներով: Նրա գրական դաստիարակությանը նպաստել էին, անշուշտ, նախ ուսուցչուհի մայրը և ապա Բուխարեստի պետական համալսարանի գրականության և փիլիսոփայության ֆակուլտետում ուսանած տարիները՝ մասնագիտություն ընտրելով մանկավարժությունը, հոգեբանությունը և հասարակական գիտությունները: Հայոց հայրապետը իր իմաստությամբ ժողովրդին է ներկայանում նաև որպես մտավորական և գիտական գործիչ: Բավական է նշել, որ ստեղծագործական 60 տարիների ընթացքում նրա գրչի ուժով ստեղծվել են մոտ երկու հարյուր տարբեր բնույթի գիտական աշխատություններ և հարյուրավոր հայրապետական կոնդակներ: Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիան, բարձր գնահատելով Վազգեն վեհափառի գիտական վաստակը, միաձայն նրան ընտրեց ակադեմիայի պատվավոր անդամ:

Մեզ բոլորիս բախտ է վիճակվել ակադեմիայի ժողովներում լսել վեհափառի խորիմաստ ելույթները և կանխատեսումները ազգային գիտությունների զարգացման մեծ հեռանկարների մասին:

Մի անգամ Վազգեն վեհափառի մոտ ուղեկցեցի Մոսկվայից ժամանած բարձրաստիճան զինվորականներ՝ մարշալներ Դմիտրի Ուստինովին և Հովհաննես Բաղրամյանին: Նրա քննախույզ միտքը հարցականի տակ էր դնում շատ խնդիրներ: Հարցերի մի ամբողջ շարք շոշափելով անծանոթ կետից, տալիս էր անսպասելի պարզաբանումներ:

Վերադարձին, երբ նրանք մտքեր էին փոխանակում, երևաց, որ նրանց վրա մեծ տպավորություն էին թողել երկու բան՝ Էջմիածնի հնագույն վանքը և Վազգեն վեհափառը: Հպարտությամբ եմ հիշում մարշալ Ուստինովի խոստովանությունը Վազգեն կաթողիկոսի մասին. «Հայոց նշանավոր հուշարձաններից հետո տեսա մի նոր, կենդանի հուշարձան»:

Նա հոգով, էությամբ շատ կարեկից սրտի տեր էր: Տկար լիներ մեկը կամ հիվանդ ունենար, կհետաքրքրվեր նրանց վիճակով, մանրամասն հարցուփորձ կաներ հիվանդության ընթացքի մասին և խորհուրդներ կտար, թե ինչ միջոցներ պետք է գործադրել առողջանալու համար: Ու երբեմն նա ցուցաբերում էր մի բժշկի գիտելիքներ:

Նրա հայրական հոգատար վերաբերմունքը մշտապես զգացել է ՀՀ ԳԱԱ-ն: Ու չգիտեմ, թե նրա մեջ գիտնականի նժա՞րն է ծանր, թե՞ արվեստաբանի կամ հոգևորականի: Կուզեի ներկայացնել Վազգեն վեհափառի մի նամակը՝ գրված 1961 թվականին:

«Ս. Էջմիածին, 6 հոկտեմբերի 1961թ.

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետին կից
Հայ Եկեղեցու Գործերի խորհրդի նախագահ
պրն Ս. Գասպարյանին

Մեծարգո պարոն Գասպարյան.

Ինչպես հայտնի է հարգո Խորհրդիդ, սույն հոկտեմբերի 15-ին պետք է տեղի ունենա Մայր Աթոռի տպարանի պաշտոնական բացումը: Տպարանը գրեթե ամբողջովին պատրաստ է և մոտ ապագայում կարելի է այն շահագործման հանձնել:

Տպարանի ներկա կազմածոներու վրա առաջիկային պետք է ավելանա գունատիպ օվսեթ տպագրական մեքենան և ցինկոգրաֆիական սարքավորանքը, որոնք արդեն պատվիրված են: Այսպիսով Մայր Աթոռը կունենա արդիական մեքենաներով օժտված տպարան:

Հանգամանքից օգտվելով՝ կուզենք մեկ անգամ ևս հիշեցնել, որ տպարանը ամբողջովին ամերիկահայ հավատացյալ ժողովրդի նվերն է Ս. Էջմիածնին, որով մերազն ժողովուրդը մի անգամ ևս վկայեց իր անսահման սերն ու նվիրվածությունը հայրենի սրբությունների հանդեպ՝ արժանանալով Մեր և Մայր Աթոռի խորին երախտագիտության և օրհնության:

Սիրելի պարոն Գասպարյան, ինքնին հասկանալի է, որ Մեզ հետաքրքրում է տպարանի հետագա վիճակը, նրա իրավական կացությունը և շահագործման եղանակը: Եթե առաջին երկու հարցերը Մեզի համար պարզ են, ապա վերջին հարցի, այսինքն՝ շահագործման եղանակի կամ, ավելի շուտ, տպարանը շահագործող հաստատության վերաբերյալ Մենք կկամենայինք բերել Մեր առաջարկությունը:

Մենք ջերմապես կփափագենք, որ տպարանը շահագործվեր Հայաստանի Գիտությունների ակադեմիայի կողմից, Մայր Աթոռի հետ համատեղ և համախորհուրդ: Ակադեմիայի հրատարակությունները, որոնք գերազանցապես գիտական բնույթ ունեն, մանավանդ պատմական ու հայագիտական բովանդակությամբ, հետևաբար, միանգամայն պիտի համապատասխանեին մեր տպարանի բնույթին ու խնդիրներին, քան եթե այդ տպարանը շահագործվեր Պոլիգրաֆ վարչության կողմից:

Հարկ է նկատի ունենալ նաև, որ տպարանը Ակադեմիայի կողմից շահագործվելու պարագան շատ ավելի պիտի խոսեր և միանգամայն համապատասխաներ նվիրատուների իղձերուն, քան եթե այլ վիճակ ստեղծվեր: Սա շատ կարևոր հանգամանք է:

Որով, Ձեր նկատառմանը հանձնելով այս պարագան, պիտի խնդրեինք, որ հաճեիք այս հարցը վերադաս պատկան մարմինների ուշադրության հանձնել և ամեն կերպ աշխատել լուծելու հարցը դրական իմաստով:

Մնամ կանխահայտ շնորհակալությամբ և հարգանոք

ՎԱԶԳԵՆ Ա
Կաթողիկոս Ամենայն Հայոց»:

Վազգեն վեհափառի կյանքի ու գործի, մատուցած ծառայությունների մասին կարելի է խոսել անվերջ, քանզի վեհափառն հայոց պատմության ձայնն է, մենք զգում ենք մեր ժողովրդի՝ հազարամյակների խորքը հասնող պատմության արձագանքը հանդիսացող այդ ձայնը որպես անփոխարինելի մի կամուրջ, որ հայոց հին դարերը կապում է մեր ժամանակների հետ:

Աղոթենք, որ ամեն մեկս ներշնչվենք նրա հավատքով՝ մեր ուժերն ու կարողությունները ի սպաս դնենք մեր հայրենիքի և հայ ժողովրդի բարգավաճմանը:

«ՊԱՏԻՒՍ ՊԱՐՏԱՒՈՐԱՑ ՀԱՐԿՍ ՀԱՐԿԱՒՈՐԱՑ»

20-րդ դարակեսի խառն ու հակասական երևույթների համակցության մեջ եթե փորձենք Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն վեհափառի առաջին իսկ ծրագրերից առանձնացնել ու արձանագրել այն հատկանշական թեմաները, որոնք շոշափելիորեն ուրվագծում են նրա կերպարը, առավել ամբողջական ու համադրված, ապա կունենանք հարցադրումների ու բացահայտումների այնպիսի տեսք, որի զարգացման հիմնական փուլերը ներկայացնում է Սևանի Վազգենյան դպրանոցի հայ եկեղեցու պատմության դասախոս, Արվեստի և գրականության արխիվի տնօրեն Սանդրո Բեհբուդյանը:

1955թվականի հոկտեմբերի 2-ին վեհաշուք հանդիսավորությամբ, համազգային ցնծության մթնոլորտում ս. Էջմիածնի Աստվածակառույց Մայր Տաճարի մեջ տեղի ունեցավ Վազգեն Առաջին նորընտիր Ամենայն Հայոց կաթողիկոսի օծումը:

Առաջին իսկ օրվանից երիտասարդ, հավատք ու տեսիլք ունեցող, բացառիկ հայրենասեր հայրապետը հետևողականորեն, եռանդով ու գործիմացությամբ ձեռնարկեց, նույնիսկ շատերի համար անհավատալի թվացող կազմակերպչական, շինարարական և հոգևոր-մշակութային ու տնտեսական կյանքի վերակազմակերպման աշխատանքները:

Այսօր թերևս ոչ ոք ի վիճակի չէ լիակատար կերպով ներկայացնել այն վիթխարի, բազմաբովանդակ, եռանդուն ու գերմարդկային գործունեությունը, որ նա ծավալեց իր գահակալության 39 տարիների ընթացքում, հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ ու արգելքներ: Վազգեն կաթողիկոսը տեսավ ու զգաց, որ հարկավոր է նախ և առաջ սկսել մեր ազգային Մայր եկեղեցու խախտված ու խաթարված բարոյա-կրոնական և մտավոր շենքի վերակառուցումից և այդ շենքը վեր բարձրացնել, զարդարել ու ամրապնդել նոր, ամրակուռ ու մնայուն քարերով, ոչ միայն ազգը պանծացնող, այլ նաև օտարներին պատկառանք ներշնչող:

1956 թվականից սկսած, իր Լիբանան և Եգիպտոս կատարած առաջին հայրապետական շրջագայությունից հետո Վազգեն Առաջին լուսապայծառ հայրապետը հատուկ դիմումներ է հղում Հայաստանի կառավարությանը՝ հորդորելով աշխուժացնել մշակութային կապերը Սփյուռքի հետ, պարբերաբար Հայաստանից Սփյուռք գործուղել խմբեր և գործիչներ, ամեն կերպ նպաստել հայրենասիրական ոգու վերազարթոնքին:

1960թ սկսած ամեն տարի հունվարին վեհափառն ինձ հանձնարարում էր ներկայացնել սպասվող հոբելյանական կարևոր տարեթվերը, որը ես սիրով էի կատարում: Այդպես համազգային տոնախմբությամբ ու ցնծությամբ նշվեց Մեսրոպ Մաշտոցի ծննդյան 1600-ամյակը: 1961թ թույլտվություն ստանալով կառավարությունից, օգոստոսի 25-ին հայրապետական կոնդակով հորդորում է համայն հայ ժողովրդին, բոլոր հաստատություններին ու կազմակերպություններին «համազգային հանդիսությամբ տօնել, պանծացնել սուրբ հիշատակը Մեսրոպ Մաշտոց Վարդապետին, անոր ծննդեան

1600-ամեակի առիթով, հոկտեմբերի 14-ին, Թարգմանիչ Վարդապետներու տօնին»:

Նույն ձևով նշվեցին Առաքել վարդապետ Դավրիժեցու, Ներսես Աշտարակեցու, Ներսես Շնորհալու և բազմաթիվ համազգային այլ մեծությունների հոբելյաններ: Այդ տոնախմբության օրերին հայ ժողովուրդը վերստին կարողացավ ի մի բերել իր հերոսական ջանքերը, ցուցադրել իր հոգևոր կարողությունները, լույս աշխարհ հանել իր նոր հայրենասիրական ստեղծագործությունները մշակույթի ու հայագիտության բնագավառներում, հանդես եկան մեր ազգային պատմության նոր հետախույզներ ու նորանոր անուններ:

Բազմազան էր, հետաքրքիր Վազգեն վեհափառի հղացումներով ձեռնարկած մշակութային գործունեությունը: Նրա հայրապետական կոնդակներով կատարվող համազգային ամեն մի տոնախմբություն հոգևոր զարթոնքի նոր վերելք էր բերում, մոտեցնում անկախության հաղթանակը:

Բնականաբար, հարց է ծագում, թե Վազգեն կաթողիկոսը ի՞նչ ժառանգություն էր ստացել:

Երբ 1954թ մայիսի 9-ին վախճանվեց Գևորգ Զ Չորեքչյան Ամենայն Հայոց հայրապետը, Մայր Աթոռը գտնվում էր նյութական դժվարությունների և քաղաքական ճնշումների տակ: Ես «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» 6-րդ հատորում ներկայացրել եմ այդ ժամանակաշրջանի պատմության տխուր էջերը: Բազմաթիվ արձանագրություններ ու նամակներ կան Հայաստանի կառավարությանն ու Մոսկվայի Ռուսաց պատրիարքարանին ուղղված՝ Մայր Աթոռի ֆինանսական ծանր կացության և օգնություն խնդրելու մասին: Բերենք մեկ օրինակ:

1954 թ մայիսի 12-ին Գերագույն հոգևոր խորհրդի նախագահող Վահան արքեպիսկոպոս Կոստանյանը Գևորգ Վեցերորդի հուղարկավորության առիթով հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահին գրում է «Մայր Աթոռը ներկայումս կանգնած է խոշոր ծախքերի առաջ և, ցավ ի սիրտ, ի վիճակի չէ հոգալու իր առջև ծառացած խիստ անհրաժեշտ ծախքերը:

Ինչպես Ձեզ հայտնի է, Վեհափառ Հայրապետի մահվան առթիվ թե արտասահմանից և թե Սովետական Միության սահմաններում գտնվող կրոնական համայնքներից մեծ թվով հյուրեր են սպասվում, որոնց հյուրասիրության ծախքերը Մայր Աթոռն է հոգալու: Մայիսի 20-ին ս. Էջմիածնի միաբաններին, աշխատակիցներին ու հոգևոր ճեմարանի դասախոսական կազմին բաշխելու ենք մոտավորապես 50 000ռ աշխատավարձ...»: Այնուհետև թվարկվում է նաև մի շարք այլ ծախքեր:

Այդ՝ այս բոլորի մասին Ձեզ իրազեկ դարձնելով՝ խնդրում եմ Ձեր միջամտությունը՝ Էջմիածինը դրամական այս ծանր վիճակից հանելու համար»:

Այդ ժամանակ ես ճեմարանի երկրորդ կուրսի ուսանող էի: Անհնարին է նկարագրել մեր ծայրահեղ աղքատության, սննդի և հագուստի ողբերգական վիճակը: Իսկ Վազգեն վեհափառի ընտրությունից հետո, շատ կարճ ժամանակում, վիճակը փոխվեց, և կյանքը աշխուժացավ: Նույնիսկ ճաշացուցակին ինքը անձամբ էր հետևում:

Ահավասիկ, ինչ ժառանգություն էր ստացել Հայոց հայրապետը: Ողբերգություն, անմխիթար ու ավերված վիճակ: Իսկ իր կատարած հրաշագործությունները բոլորիս աչքի առաջ են: Հայրապետը իր հոգատար հայրական սրտով հասավ նաև Սփյուռքին և իր ալեկոծող

30-ից ավելի այցելությունների միջոցով տարավ սուրբ Էջմիածնի օրհնությունն ու պատգամը աշխարհասփյուռ ողջ հայությանը՝ մխիթարելով ու ոգեշնչելով նրան:

Իր արտասահմանյան ուղևորությունների ժամանակ հայոց հովվապետը պարտականություն է համարել պաշտոնական հանդիպումներ ունենալ տվյալ երկրի պետական, քաղաքական ղեկավարների և բարձրաստիճան անձանց հետ: Իր տաղանդի և մեծ հեղինակության շնորհիվ կարողացել է բոլոր ազգերին ծանոթացնել հայ եկեղեցուն, հայ ժողովրդին, նրա պատմությանը: Վազգեն Առաջին կաթողիկոսը միջազգային համաժողովների և համագումարների բեմերից խոսելիս չի մոռացել նշել ու դատապարտել 1915 թվականի ցեղասպանությունը:

Վազգեն Առաջին կաթողիկոսը որպես գործակիցներ իր շուրջը միշտ ունեցավ բազմաթիվ հանձնաժողովների անդամներ, հայ եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներ և հայրենաբնակ վաստակաշատ, անվանի մտավորականներ, ճարտարապետներ, ինժեներներ, արվեստագետներ, որոնք իրենց մասնակցությունը բերեցին նրա եկեղեցաշեն բազում ծրագրերի իրականացման գործին:

Վազգեն Առաջին կաթողիկոսի ուշադրության կենտրոնում էր Մայր Աթոռի և ներքին թեմերի վարչական, տնտեսական գործունեությունը: Կազմակերպում է նոր թեմեր: Վազգեն Առաջին հայրապետի ուրախություններից մեկը եղավ 1930 թվականին բռնությամբ փակված Արցախի թեմի վերականգնումը և նոր եկեղեցիների ու Գանձասարի վանքի վերաբացումը, որի համար տարիներ շարունակ ինքը դիմում էր իշխանության ամենատարբեր ատյանների:

Միայն 1988 և 1989 թվականներին բացվել են 30-ից ավելի վանքեր ու եկեղեցիներ Հայաստանում, մերձավոր և հեռու արտասահմանում:

Տեղի ունեցան Հայոց հայրապետի և քույր եկեղեցիների պետերի բազմաթիվ փոխայցելություններ, որոնցով առավել ևս ընդարձակվեցին ու ամրապնդվեցին հայ եկեղեցու կապերը քույր եկեղեցիների հետ: 1969 թվականին Մայր Աթոռում ստեղծվեց միջեկեղեցական հարաբերությունների բաժին:

Նա իր գահակալության առաջին իսկ օրերից մեծ ուշադրություն է նվիրել Մայր Աթոռ ս. Էջմիածնի և հայ եկեղեցու նվիրապետական Աթոռների, բոլոր թեմերի կապերի ամրապնդմանը, միասնությանը:

1990 թվականին պատմական շրջադարձ են ապրում մեր ժողովուրդը, հայ եկեղեցին:

Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհուրդը 1991 թվականի հունիսի 11-ին պատմության մեջ առաջին անգամ օրենք ընդունեց խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին՝ «Ճանաչելով Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին որպես հայ ժողովրդի ազգային եկեղեցի, նրա հոգևոր կյանքի շինության ու ազգապահպանման կարևոր պատվար»: Միաժամանակ շեշտվում էր, թե Հայ Առաքելական Եկեղեցին արտերկրում «ենթակա է Հայաստանի Հանրապետության պաշտպանությանը միջազգային իրավական նորմերի սահմաններում»: Հայ եկեղեցին ճանաչվեց որպես իրավաբանական անձ:

Երջանկահիշատակ հայրապետի օրհնությամբ Հայաստանի հողի վրա սկսվում են կառուցվել դաժան ժամանակներում մոլուցքով քանդված եկեղեցիների փոխարեն նոր եկեղեցիներ, աղոթքի տներ:

Վազգեն Առաջինի օրոք Մայր Աթոռի մշակութային գործունեության մեջ կարևոր տեղ են գրավում եկեղեցական արվեստի թանգարանների կազմակերպումն ու հաստատումը: Վեհափառի օրոք են ձեռք բերվել բարձրարժեք ձեռագրեր, հնատիպ գրքեր, սրբանկարներ, հին դրամների հավաքածուներ, ասեղնագործության նմուշներ, գորգեր, եկեղեցական սպասքներ և այլն:

Նրա գործունեության մեջ հիմնական տեղ է գրավում նաև աշխարհի խաղաղության պահպանման և ամրապնդման եռանդուն մասնակցությունը: Մեծ հայրապետը ապրեց նաև հայ ժողովրդի տագնապալի օրերը՝ Ղարաբաղյան շարժումը և իր արդար խոսքն ու բողոքը ուղղեց աշխարհի բոլոր ատյաններին՝ վերականգնելու համար մեր արդար իրավունքը:

1962 թվականից սկսած՝ Վազգեն կաթողիկոսի օրհնությամբ հայ եկեղեցին անդամակցում է Եկեղեցիների համաշխարհային խորհրդին և մասնակցում նրա գործունեությանը, իսկ ավելի ուշ՝ եվրոպական եկեղեցիների կոնֆերանսին և խաղաղության քրիստոնեական կոնֆերանսին:

Սկսվել է Վազգեն Առաջին կաթողիկոսի արխիվի ցուցակագրումը: Վիթխարի է արխիվը և խիստ արժեքավոր, գրեթե բոլոր փաստաթղթերը գրված են իր ձեռքով և իր իմաստուն մտքի արգասիքն են: Նախապատրաստվում է մեկ հատորյակ՝ այս օրերին հրատարակելու համար: Մի քանի հատոր կարող են կազմել այն նամակներն ու գրությունները, որ գրել է երջանկահիշատակ հայրապետը նվիրապետական Աթոռների համերաշխության և համագործակցության, Էջմիածին-Անթիլիաս հարաբերությունների մասին: Դեռևս 1968 թվականի հունիսի 10-ին Նյու Յորքի Առաջնորդարանի մեջ Հրանտ արքեպիսկոպոսի հետ տեսակցության ժամանակ Վազգեն վեհափառը նշում է. «*Ամբողջ հարցը, հիմնականը, մեր եկեղեցու միությունը վերականգնելն է:* Փաստորեն եկեղեցին երկուքի կբաժնվի, երկու նվիրապետություններ սկսած են արդեն ուրվագծվիլ: Միջազգային միջեկեղեցական հարաբերութեանց մեջ երկու աթոռներ կան, երկու կեդրոններ կան, երկու հայ եկեղեցիներ կան: Հայկական եկեղեցի՝ Կիլիկյան Աթոռ, հայկական եկեղեցի՝ Էջմիածին: Եվ օտար մը միայն երկու եկեղեցիով կրնա հասկնալ այս դրությունը: Ուրիշ կերպ չի կրնար հասկնալ: Ադիս-Աբեբայի մեջ հինգ եկեղեցիներ հրավիրված էին, բայց որովհետև Խորեն կաթողիկոսը չընդունեց, որ մեկ պատվիրակություն ըլլանք, այնտեղ վեց եկեղեցիներ եղանք, պարզ է, Ժնևի մեջ միջեկեղեցական հարաբերության մեջ նույնն է կացությունը: Երկու եկեղեցիի վերածված ենք, բառերը օգտագործենք թե չօգտագործենք, հերձված ըսենք կամ չըսենք, հակաթոռ ըսենք կամ չըսենք, իրողությունը հերձված է, իրողությունը հակաթոռություն է: Անկախ մեր զգացումներեն և մեր մեկնաբանություններեն: Եվ ասիկա վտանգավոր է»:

Նույն թվականի հունիսի 16-ին «Ամերիկայի ձայնից» իր կոչի մեջ վեհափառը շեշտում է. «Մեկ ժողովուրդ, մեկ եկեղեցի, մեկ նվիրապետություն ս. Էջմիածնի Աստվածային օրհնության ներքև, այս կպահանջեն մեր եկեղեցվո նվիրապետական կարգն ու կանոնը, մեր պատմությունը, մեր ժողովուրդի հոգևոր և ազգային հիմնական և տևական շահերը»:

Այս խոսքերից անցել է 35 տարի, շատ փոփոխություններ են եղել քաղաքական ասպարեզում, մեր հայրենիքը անկախացել է, միասնականացել, դարձել բոլորինը ու բոլորի համար: Սակայն եկեղեցական կյանքում վիճակը մնացել է նույնը և, ընդհակառակը, գնալով խորա-

նում է, որովհետև ոտնձգություններն ու անջատողական բնույթ ունեցող տագնապները շարունակվում են:

Իր բարդ ու դժվարին պատմության խաչուղիներում Հայ Առաքելական Եկեղեցին բազմիցս հանդիպել է անհաղթահարելի թվացող դժվարությունների, եղել են մռայլ ու ամուլ դարեր՝ կապված ժամանակաշրջանի դաժան պայմանների հետ: Սակայն միշտ լույսը հաղթել է խավարին:

Մեր եկեղեցու պատմության մեջ այդպիսի ժամանակահատված եղան աստվածամերժ 70 տարիները, երբ փորձեցին ժողովրդին կտրել եկեղեցուց՝ դիմելով բռնության բոլոր միջոցներին: Թեև ժողովուրդը պահեց իր հոգու ներքին լույսը, այնուամենայնիվ նա անհաղորդ էր մնացել հայ եկեղեցու և նրա հայրապետների գործունեությանը, ընդհատվել էր հայ նահատակ եկեղեցու գործունեությունը:

Սակայն երջանկահիշատակ Վազգեն Առաջին Աստվածապարգև հայրապետի գահակալության շրջանին հայ եկեղեցին կարողացավ դուրս գալ նեղ շրջանակներից և ընդարձակել իր գործունեությունը, իսկ Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակմամբ հայ եկեղեցին ստացավ իր նախկին կարգավիճակը: Սակայն Վազգեն կաթողիկոսը կարողացավ ճեղքել նաև այդ պատնեշը և 1990-ական թվականներից դիմեց պետանվտանգության մարմիններին՝ տեղեկություններ ստանալու հայ եկեղեցու անմեղ զոհերի, նրանց բռնաղատության վերաբերյալ:

1992 թվականին որոշ, շատ քիչ փաստաթղթեր պաշտոնապես հանձնեցին իրեն: Վեհափառ հայրապետը այդ նյութերն ինձ տրամադրելով՝ հանձնարարեց հոդվածով հանդես գալ, որպեսզի աշխարհը իմանա մեր օրերի նահատակ ու անթաղ սրբերի նկատմամբ կիրառված անարդար վճիռների ու դրանց գործադրման, հայ

հոգևորականների հայրենասիրության ու անսասանության մասին:

Այդպես Վազգեն վեհափառի օրհնությամբ սկիզբ դրվեց «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մատենաշարին, որի 11 հատորներն այսօր լույս են տեսել և դեռ շարունակելի է: Նա նույնիսկ առաջին և երկրորդ հատորների համար առաջաբան գրեց. «Վշտալի հայրապետներ» և «Մեր տխուր խոսքը», սակայն, դժբախտաբար, հնարավոր չեղավ հատորների հետ Վազգեն վեհափառի վշտալի ու տխուր խոսքերը հրատարակել:

Անշուշտ, ես ականատես եմ եղել վեհափառ հայրապետի գահակալության 39 տարիների գործունեությանը և նրա նվաճած համաժողովրդական համակրանքին ու սիրույն:

Ինձ վրա շատ է տպավորվել, երբ 1955 թվականին, օծումից հետո, ծաղկյա դահլիճում միաբանները, Գերագույն հոգևոր խորհրդի անդամները և հյուրերը հերթով մոտենում և համբուրում էին վեհափառի օծյալ աջը: Հերթը հասավ բանաստեղծ Ավետիք Իսահակյանին: Վարպետը խոնարհված մոտեցավ նորաօծ հայրապետին: Վեհափառը կարմրեց, ձեռքը քաշեց և փորձեց թույլ չտալ, որպեսզի մեծ և ծերունազարդ Վարպետն այդքան խոնարհվի:

– Սիրելի վեհափառ, ես Հայոց հայրապետի նորաօծ աջն եմ համբուրում, այլ ոչ թե երիտասարդ Վազգեն եպիսկոպոսի,– ասաց Վարպետը և համբուրեց վեհափառի աջը, այնուհետև երկու մեծերը գրկախառնվեցին:

Վազգեն վեհափառի կաթողիկոսական նշանաբանն էր. «Հավատ, սեր և միություն»: Տա Աստված, իրականություն դառնա Մեկ ազգ, Մեկ եկեղեցի, Մեկ Հայրենիք միությունը՝ ընդ հովանյավ Ամենայն Հայոց ընդհանրական հայրապետության:

ԵՎ ԳՆԱՑ ԱՇԽԱՐՀԻՑ ԱՆԱՐԾԱԹ ՀՈՎՎԱՊԵՏԸ

Այսքան չարիք թե մոռանան մեր որդիք.
Թող ողջ աշխարհ հայուն կարդա նախատինք:

Ավետիս Ահարոնյան

Ինչպես ընդհանուր եկեղեցական գրականությունը, այնպես էլ մեր հին մատենագրությունը հարուստ են հոգևոր հայրերի գրած քարոզներով: Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը, յուրովի հանրագումարի բերելով հայ նշանավոր քարոզիչների ու մեկնիչների բազմադարյան նվաճումները (Եղիշե, Ներսես Լամբրոնացի, Վարդան Արևելցի, Եսայի Նչեցի, Գրիգոր Տաթևացի և այլք), նաև յուրացնելով համաշխարհային մշակույթը՝ Հոմերոսից մինչև Շեքսպիր ու Գյոթե, հաղթահարեց քարոզխոսության բարձունքը՝ սերունդներին նվիրելով թևավոր խոհ ու խոսք. «Առանց արդարության չկա ներդաշնակություն, առանց ներդաշնակության չկա խաղաղություն, բայց մանավանդ մարդկային աշխարհի՝ արդարության և խաղաղության աղբյուրը հաշտությունն է, խաղաղությունն է Աստծո և մարդու միջև: Ո՞վ որ խաղաղություն կփնտրե՝ զԱստված կգտնե»:

Հայոց հայրապետն ուսումնասիրել էր մեծանուն հայրերի քարոզների համեստ, պարզ ու մոնումենտալ ձևերը և այդ ամենը ձուլեց իր ստեղծագործական քուրայում ու գրեց իր նախնիների նման պերճ ու իմաստուն: Վիթխա-

րի երևակայությամբ օժտված բնատուր տաղանդ է նա, որ նորարարի խիզախությամբ ներդաշնակեց հին և նոր քարոզխոսության ավանդները ու մտածելակերպը: Համբուրելի արևմտահայերենի և գրաբարի նրբությունները միմյանց պատշաճելով՝ Վազգեն վեհափառը ստեղծում է եկեղեցասիրության, հայրենասիրության գեղեցիկ դարձվածքներ, հզոր շեշտեր: Լեզվի պարզության, կուռ ու ձուլածո կառուցվածքի շնորհիվ է, որ գրաբար ոճերը չեն խանգարում նյութի ընկալմանը՝ նույնիսկ ժողովրդական խավերի համար: «Մենք պիտի ուզեինք վերստին հավաքումի կոչել մեր հավատացյալ ժողովուրդը և Հայաստանյայց եկեղեցվո բոլոր ուխտյալ սպասավորները, մեծով և պզտիկով, որպեսզի հավատքի հրով և միության կամքով շաղախված՝ դառնայինք իրավ եկեղեցի մը, այսինքն՝ հոգևոր մեկ մարմին՝ անբաժանելի և անսասանելի: Սուրբ հավատքի միությունը հայ ժողովրդի գոյության զորավորագույն ամրոցն է, մանավանդ Սփյուռքի կյանքի պայմաններուն մեջ: Հավատքով և միությամբ մենք պիտի կարողանանք լեռներ շարժել»:

Հայոց հայրապետի քարոզների նյութը կրոնաբարոյական է, որի նպատակը՝ ձգտումն է եղել ուսուցանել քրիստոնեական հավատք, քարոզել բարեպաշտություն, արմատավորել սրբություն և առաքինություն: Նորին Սուրբ Օծությունը ահռելի թանձրույթի մեջ ներծուլվեց իր ժողովրդի հետ, ներապրեց նրա հոգսերով և սրտով հասկացավ, որ հայ ժողովրդի հաղթանակի ուժը թաքնված է ժողովրդի հավատքի միասնության մեջ:

Նա, ինչպես ամեն մի ճշմարիտ հովվապետ, փորձեց գտնել իր օրերում ապրող մարդկանց էության մեջ ձևավորվող, հասունացող այն ապրումներն ու խոհերը, այն գլխավոր հոգեվիճակները, հարաբերությունները և

կենսական մտահոգությունները, որոնցով ապրում են 20-րդ դարակեսի մարդիկ:

Հայոց հայրապետը ծայրագույնս բծախնդիր է եղել իր գրչի հանդեպ: Յուրաքանչյուր բառ ու միտք թաթախել է իր ծով հույզերի ավազանում և նոր միայն հանձնել թղթին. «Երազ և իրականություն դարելու հետ կիյուսվին, երազ և իրականություն դարերու հետ կբարձրանան և դարերու հետ ծնունդ կուտան՝ հայոց հավատքի փառքը երգելով: Հայ ժողովուրդ, «զգոյշ լեր աւանդիդ, որ քեզդ հաւատացաւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ»: Մնացիր հավատարիմ քու սուրբ հավատքիդ, քո մայրենի քաղցրախոս լեզվիդ, քու սրբություններուդ, քու մշակույթիդ լույս արժեքներուն, վերածնված քու Մայր հայրենիքիդ և ամենասուրբ ս. Էջմիածնիդ»:

Այսպիսի հեղինակությամբ, հայրական շեշտով ու խանդաղատանքով Վազգեն վեհափառը միայն կարող էր խոսել:

Ձեռքին մեսրոպյան Այբ, Բեն, Գիմը՝ որպես վահան, իսկ մեծ մտածողի կոչը՝ «Այսքան չարիք թե մոռանան մեր որդիք, թող ողջ աշխարհ հայուն կարդա նախատինք»՝ որպես սուր, Հայոց հայրապետը շրջեց երկրեերկիր, քաղաքեքաղաք և իր հոտի զավակներին, լուսավորչական հարցերից զատ, շեփորահարեց հայրենասիրություն, քարոզեց հույս, արիություն և մաքառում հայ մնալու դժվարին գործում: «Եթե մեր ազգին վիճակված է տակավին բաժանյալ և ցրվյալ ապրիլ ի սփյուռս աշխարհի, ապա ուրեմն մեր հոգևոր առաջնորդներն ու մշակները, մեր դաստիարակներն ու գրչի մարդիկ իրենց սեպուհ պարտքը պետք է համարեն մեր բաժանյալ հոտի մարմինը հոգեպես միավորյալ պահելու, ի մի ձուլելու զայն, մեր Սրբություն Սրբոց ս. Էջմիածնի և մայր հայրենիքի

սիրո կրակով, «զի ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, եւ տուն բաժանեալ յանձն կործանի»:

Այո, իրավամբ, Վազգեն վեհափառը իրավունք ուներ ասելու՝ սրտի մեջ կրում է իր ժողովրդի զավակներին, որ «կրծքի տակ կտրոփե»: Նրա հոգեշունչ քարոզները՝ երազ-իրականություն մտատիպարներով, սուրբ աղոթքներով, պայմանավորված էին նաև քաղաքական իրադարձություններով, հայկական ջարդերից մինչև Արցախյան շարժում և մեր պատմական ընթացքի ճգնաժամին կանգնեց աշխարհի առջև՝ իբրև հայ ժողովրդի վշտի և ցասման, արդարության և սիրո բոցաշունչ թարգման. «Հավաքված ենք Մայր տաճարին մեջ, մեր աղոթքը երկինք վերառաքելու, վասն խաղաղության հոգվոց մեր երկու միլիոն հայ քրիստոնյաներու, որոնք 1915 թվականին ապրիլի 24-ին նահատակվեցան Արևմտյան Հայաստանի մեջ, սուլթանական Թուրքիո կառավարության ծրագրով ու կազմակերպությամբ: Ամբողջ ժողովուրդ մը տեղահանվեցան և կոտորվեցան զարհուրելի տանջանքներու մեջ: Իրենց հոտին հետ նահատակվեցան նաև չորս հազար հոգևորականներ: Քանդվեցան ու հրկիզվեցան վանքեր ու եկեղեցիներ, ոչնչացվեցան բազմահազար հին ձեռագրեր, եկեղեցական սրբություններ ու արվեստի արժեքներ»:

Արդ, բացահայտվում է աշխարհի անարդարության դեմ ընդվզող Հայոց հայրապետի կերպարը, որն իր վրա է վերցրել հայրենիքի բախտի ծանրությունը:

Ի՞նչ գաղտնիք է տիրապետում նրա լեզուն:

Նրա ձայնը հնչում է ինչպես հայոց աղխի եղեգան փողը՝ մերթ ծուխ, մերթ բոց ժայթքելով: Եղեգան փողից ելնում է նրա հոգու ճիչը. «Հայ ժողովուրդը իր պատմության ամենամեծ այս ողբերգության հիշատակին առջև

կսգան իրենց նահատակները և չեն մոռնար երբեք իրենց ավերված երկիրը հայրենական՝ Արևմտյան Հայաստանը, և կսպասեն, որ արդարություն ըլլա իրենց, և օր մը անոնք բոլորը վերադառնան իրենց ազատագրված Մայր երկիրը»:

Սերտորեն կապված լինելով հայ իրականության հետ, խորապես ինքնատիպ՝ ազգային են նրա քարոզները, ելույթները, որով նա իր զգայուն սրտի ողողանջով թափանցում է ունկնդրի հոգու ամենախուլ խորշերը, հուզում նրան, համակում անբացատրելի թախիծով, խինդով և այս բոլորի մեջ ընդհանուրն այն է, որ ներկայանում է որպես խոշոր դիվանագետ, գեղագետ, ինքնատիպ իր ոճով, պատկերավոր մտածողությամբ, հարուստ բառապաշարով, պատմելու մեծ տաղանդով ու հյութեղ ոճով, իր խոհականությամբ, փիլիսոփայական մտորումներով, դատողություններով:

Բայց այն, ինչ որ գրել է՝ քարոզներ, կոնդակներ, ելույթներ, պատմաբանասիրական հոդվածներ, տոգորված են մեր խնկելի նախնիների հայրենասիրության ու եկեղեցասիրության ոգով, որոնք իրենց գիտական բարեխղճությամբ, ինքնատիպ գրելաոճով արժանի տեղ են ապահովել Վազգեն վեհափառին հոգևոր գրականության ասպարեզում:

Կարո՞ղ է պատմություն շարադրող որևէ ակնարկ այնքան կենդանի ու առինքնող լինել, այնքան թրթռուն կյանք պարունակել իր մեջ, որքան այն հատորները, որոնց կազմին գրված է. «Վազգեն Ա հայրապետ հայոց»:

Անհնար է ընթերցել Հայոց հայրապետի գրքերը առանց ապրումներ ունենալու, միաժամանակ չզարմանալ ու հիանալ գեղարվեստական խոսքի այն ճոխ բազ-

մազանությամբ, որով խոսում է նա իր ընթերցողի հետ: Համոզված եմ, որ բազմաբովանդակ հատորները դեռ երկար տասնամյակներ կփոխանցվեն սերնդից սերունդ և կընթերցվեն հետաքրքրությամբ:

Եվ գնաց աշխարհից անարծաթ հովվապետը, որի խոհն ու խոսքը հնչում էր արժանապատվությամբ և սրտի խորքից Նարեկյան ուժով պոռթկացող վշտով ու ցասումով:

Տարիները կբոլորեն, Վազգեն վեհափառի հայաշունչ և հրաշունչ խոսքը հանուր հայության հավաքական սրտի սիրելի հանկերգը կդառնա:

«ՄԱՏԵԱՆՆ ԱՀԱ ՁՈՐ ԽՈՍՏԱՑԱ»

«Ազգապատում»... Գիրքը պատմում է «առանց հողի մարդկանց մասին և առանց մարդկանց հողի մասին», որն Աստված արևածագի շողերով և վաղորդյան ցողերով կոչեց Հայաստան: Այդ հինավուրց երկրի հուշարձանների նման մի մոնումենտալ կոթող է Թուրքիայի Հայոց պատրիարք Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանը: Աննկուն հոգևորականն ու քաղաքական գործիչը, ոգևորությամբ օրհներգելով հայրենաշունչ պատմահոր՝ Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» փառավոր գիրքը, շրջեց պատմության բոլոր կեռմաններում և արշալույսի երկունքով բռնկված՝ ստեղծեց իր ամենախոշոր երկը՝ «Ազգապատումը»: Երեք ստվարածավալ հատորներում հարուստ նյութ է ամփոփված ոչ միայն հայ եկեղեցու, այլև հայ ժողովրդի քաղաքական, մշակութային պատմության վերաբերյալ:

«Ազգապատում» ոսկե բանալիով պատմության փակ դռները բացեց դոկտոր Զավեն քահանա Արզումանյանը. անձնուրաց ծառայությամբ փոշիներից մաքրեց, ուսումնասիրեց և ժողովրդի դատին հանձնեց մեզ անհայտ ու հայտնի, տխուր և ուրախ պատմություններ, փաստաթղթեր, որոնք հրատարակել է մատենաշարով:

Բոլոր հատորները մի յուրատեսակ ազգակցություն ունեն: Նրանք կարծես ամբողջի տարբեր մասերն են, որոնք մի տեղ կապակցվում են: Անմշակ փաստաթղթերը

նա հավաքել, դասակարգել ու գրի է առել՝ դարձնելով այդ բոլորը հանրամատչելի գիտական արժեքներ: Համառ ու տևական է եղել դոկտոր Արզումանյանի գիտահետազոտական գործունեությունը: Եթե դրան ավելացնենք նրա հետևողականությունը, ապա միանգամայն պարզ կդառնա, որ նա կարողացել է կարճ ժամանակամիջոցում կատարել մի ամբողջ գիտական ինստիտուտի աշխատանք:

Հպարտությամբ կարող ենք ասել, որ «Ազգապատում» մատենաշարի լույսընծայումն անխզելիորեն կապված է հեղինակի բարեկամ, բազմաթիվ հայրենական և միջազգային կոչումների ու մրցանակների արժանացած, Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի պատվավոր դոկտոր Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանի անվան հետ, քանզի սրբազան հայրը ոչ միայն հովանավորել է, այլև իր իմացությամբ ու իմաստությամբ նպաստել, որպեսզի ի մի բերվեն և ճիշտ դասակարգվեն գզրոցներում և արխիվներում պահպանվող փաստաթղթերը:

Սուրբ Էջմիածնի և Հայոց հայրապետության պատմական արժեքը և Հայ եկեղեցու կրոնական, քաղաքական և հովվական գործունեությունն իր բոլոր կողմերով արդարացի գնահատելու մտահոգությամբ դոկտոր Արզումանյանը պատրաստեց և հրատարակեց մատենաշարի չորրորդ հատորը: Այն նվիրված է երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի գահակալության (1955-95 թվականներ) տարիներին, քանզի, ցավոք, քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ բացահայտ թյուրըմբռնումներով կամ խեղաթյուրումներով են հաղորդվում Հայոց հայրապետի մտորումները՝ նրան վերագրելով դատողություններ, կարծիքներ ու տեսակետ-

ներ, որոնք միանգամայն անհարիր են նրա աշխարհայացքին ու մտածողությանը, նրա ճաշակին ու գեղագիտական չափանիշներին:

Բնականաբար, գրքի ուսումնասիրությունը կնպաստի մտորելու և սրբագրելու պատմական մեր հիմնական թեությունները ներկա իրականության մեջ: Հատորում տեղ գտած փաստաթղթերը բացահայտում և հաստատում են Վազգեն վեհափառի մտքի և հոգու մեծությունը, արգելափակումների, դաժանությունների ու հալածանքների պայմաններում անգամ նրա կատարած եկեղեցաշեն, հայրենանվեր գործունեությունը՝ սփյուռքահայ թեմերի ստեղծումն ու ամրապնդումը, աշխարհասփյուռ հայ հոգևորականության համախմբումը Մայր Աթոռի և Մայր հայրենիքի շուրջ և նրանց ազգօգուտ գործունեության ծավալումը՝ խիզախորեն իր հովանավորության ու պաշտպանության տակ առնելով չեկայի «ցուցակում» հայտնված հոգևորականներին:

Վազգեն վեհափառին հասու էր «օրենքները չեն ստեղծում մարդկանց, այլ մարդիկ են օրենքներ ստեղծում» թեզը, ուստի, երբ պարզվում էր, որ այս կամ այն օրենքը չէր բխում եկեղեցու շահերից, օգտվում էր բարոյական օրենքներից: Արդարամիտ Հայոց հայրապետը դիվանագիտորեն միջնորդեց և փրկեց Երուսաղեմի մատենադարանից գողացված և Լոնդոնում աճուրդի հանված հայոց ծաղկյա մատյանները:

Հեղինակը որոնել, ճշտել և արժևորել է այն ամենը, ինչ գտել է, ինչը կապ ունի ուսումնասիրվող շրջանի հետ, որը կազմված է ժամանակագրական սկզբունքով: Որքան այնտեղ Վազգեն վեհափառն իր սեփական զգացմունքների մասին է խորհում, դրանով բովանդակությանը տալով հուզիչ անմիջականություն, բայց և

նույնքան օբյեկտիվ ճշգրտությամբ այդ փաստաթղթերը վկայում են, որ հայոց եկեղեցին, շնորհիվ իր եկեղեցանվեր ու հայրենանվեր հովվապետի, դիմակայել է բոլոր հարվածներին և անաղարտ հասել մեր օրերը: Հայոց հովվապետը հետաքրքիր էր առաջին հերթին իր անկրկնելիությամբ, որի չափանիշը անհատականությունն էր, որով էլ պայմանավորված էր նրա ծրագրերի ինքնատիպությունը:

Դոկտոր Արզումանյանի «Ազգապատում» մատենաշարի չորս հատորները կազմված են գիտնականի բարեխիղճ, բծախնդիր, տքնաջան աշխատանքով, որի կարիքն այս օրերին անչափ զգացվում էր եկեղեցու և ժողովրդի պատմության սպիտակ էջերը լրացնելու համար: Կասկածից վեր է, որ հեղինակը շնորհակալ գործ է կատարել՝ դյուրացնելով ապագա պատմաբանների, ուսումնասիրողների աշխատանքը՝ առավել ամբողջական ու մանրակրկիտ ուրվագծելով հայ ժողովրդի և եկեղեցու վերջին մեկդարյա պատմությունը: Բայց սրանով հարցը ոչ թե սպառվում է, այլ սկսվում է միայն:

Ուստի շնորհավորում ենք տաղանդավոր գիտնական Զավեն քահանա Արզումանյանին և սպասում նրա նոր գրքերին:

ՆՐԱՆՔ ԾԱՇԱԿԵՑԻՆ
ՓՈՐՁՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿԸ ՑՄՐՈՒՐ

Մի առիթով բրազիլացի գրող Ժայմե Ադուարը ասել է. «Հույները ունեն մշակութային նույնպիսի ավանդներ և արժեքներ, ինչպես հայերը, տարբերությունն այն է, որ հույները այդ ավանդները պահպանել են ավերակների մեջ, իսկ հայերը հասցրել են մինչև մեր օրերը»:

Անվերապահորեն, հպարտությամբ կարող ենք ասել, որ հայ ժողովրդի մշակութային գանձերը ստեղծվեցին ու պահպանվեցին շնորհիվ հայոց եկեղեցու, նրա իմաստուն, ազգային շահերով ապրող, հայրենիքին անմնացորդ նվիրված գիտնական ու քաղաքագետ Հայոց հայրապետների և հոգևոր դասի: Նրանցից քանի-քանիսն արյամբ և կյանքով են ապացուցել իրենց նվիրվածությունը ազգին ու հայրենիքին՝ գրերի գյուտից և Ավարայրից՝ Սարդարապատ:

Վեհափառ հայրապետ Վազգեն Առաջինը այդ նվիրյալներից էր, որի ողջ կյանքը հարազատ ժողովրդին անձնվեր ծառայելու անզուգական օրինակ է: Նա դարձել է մեր ժողովրդի հավատը, որը որոնում, ընթացք ու լուծում է տալիս իր հոտի զավակներին հուզող բազմաթիվ հարցեր:

1988 թվականի արցախյան շարժումից հետո, որին հաջորդեց ամենակարևորը՝ մտքի, խոսքի ազատությունը, «Գլավլիտի» իսպառ վերացումը, Հայոց հայրապետը

իր մոտ հրավիրեց արվեստի և գրականության արխիվի տնօրեն, Սևանի հոգևոր դպրանոցի հայ եկեղեցու պատմության և Երևանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դասախոս Սանդրո Բեհբուդյանին և հանձնարարեց, որպեսզի ներհուն գիտնականը ուսումնասիրի չեկայի արխիվներում պահպանվող փաստաթղթերը:

Ժամանակին Վազգեն վեհափառը մատենաշարի հրատարակության մասին գրել է. «Անարդար պիտի լիներ մոռացության տալ այդ դաժան ժամանակներում Հայ Առաքելական Եկեղեցու կրած տառապանքներն ու ավերումները: Ահա թե ինչու մենք պարտք ենք համարում հրապարակել ցարդ գաղտնի մնացած արխիվային փաստաթղթերից մի կարևոր մաս, որ մեր ձեռքի տակ ունեցանք, փաստաթղթեր, որոնք վկայում են 1922-1938 թվականներին հայ եկեղեցու դեմ սանձազերծված հալածանքներն ու բռնությունները»:

Անուրանալի է Սանդրո Բեհբուդյանի ծառայությունը մեր ժողովրդի կյանքում: Նա իր հայրենանվեր գործունեությամբ արդեն իսկ հաստատել է իրեն՝ հարազատ զավակի պես փայփայելով, փոշիներից, խոնավությունից, ցրտից պահելով, պահպանելով արխիվի հարստությունը, որպեսզի հետագա սերունդները հնարավորություն ունենան ուսումնասիրելու մեծանուն արվեստագետների թողած ժառանգությունը, պատմությունը, որը մեր ժողովրդի ճշմարիտ պատմությունն է: Եվ նրա անձնուրաց ծառայությունը մեկ անգամ ևս հաստատվեց. ուսումնասիրելով, ինչպես նաև ի մի բերելով 7 տասնամյակից ավելի արգելված, Պետական անվտանգության կոմիտեի գզրոցներում պահվող եկեղեցական գործերին վերաբերող փաստաթղթերը և դրանք ամփոփելով մի

քանի գրքերի մեջ՝ Սանդրո Բեհբուդյանը այն հանձնել է ժողովրդի դատին:

«Չարը միշտ տրտմում է ու նախանձում առաքինության հետամուտ մարդկանց»՝ Ղևոնդ Ալիշանի այս միտքը անվերապահորեն վերաբերում է Հայաստանում խորհրդային կարգերի ձախողակ ծնունդ անվտանգության կոմիտեին: Շահախնդիր մարդիկ բուռն կրքով խեղդում էին ամեն մի ազատ մտքի դրսևորում, կեղծ մեղադրանքներ հարուցում, մահապատժի կամ աքսորի դատապարտում ժողովրդի բոլոր խավերից, իսկ հոգևորականներին հատկապես, որի հաստատումն են Հայաստանի պետական արխիվային վարչությունում պահվող փաստաթղթերը, որոնցից յուրաքանչյուրը մի ողբերգական ճակատագրի ու կյանքի պատմություն է: Սիրտ ու արյուն չունեցող, սարդի հոգեբանությամբ, ատելության մոլուցքով լցված, զրպարտությունների իր ոստայնը հյուսած, Բերիայի զինվորագրյալ գործակալների կատարած սահմռկեցուցիչ ոճիրներն են արձանագրված փաստաթղթերում:

Ահա թե ինչ է ասում հեղինակն այդ մասին. «Իմ «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» գրքի առաջին հատորը լույս տեսավ 1994թ., որը խմբագրվել և պատրաստվել էր երջանկահիշատակ Վազգեն Ա կաթողիկոսի օրհնությամբ, դժբախտաբար ինքը չտեսավ: Այնտեղ ընդգրկված փաստաթղթերը վերաբերվում էին 1921-38թթ. և տպագրվում էին առաջին անգամ: Գիրքը հրատարակվեց հայ եկեղեցու լավագույն նվիրյալ, անբասիր հոգևորականներից մեկի՝ ԱՄՆ-ի Արևելյան շրջանի և Կանադայի Կիլիկյան թեմի առաջնորդ բարձրաշնորհ Մեսրոպ արքեպիսկոպոս Աշճյանի հովանավորությամբ: Այնուհետև նրա իսկ խնդրանքով ես աշխատեցի Խորեն Ա կաթողիկոսի աճյունը Ամենայն Հայոց կաթողիկոս

Գարեգին Ա-ի նախաձեռնությամբ տեղափոխելուն, որը վերջնականապես հաստատվեց Մայր Աթոռ ս. էջմիածնում, խաղաղորեն ննջող նախորդ կաթողիկոսների աճյունների կողքին: Փաստաթղթերի մեծ մասը գրված է Խորեն Մուրադբեկյան Ամենայն Հայոց կաթողիկոսի ձեռքով, նույնիսկ ինքն է պաշտոնական փաստաթղթերը մեքենագրել, քանզի վերջին տարիներին գրեթե մենակ էր ու անօգնական: Բարձրաստիճան հոգևորականների մեծ մասը բանտարկված էին ու գնդակահարված»:

Էջ առ էջ թերթելով գիրքը՝ կարդում ես Խորեն կաթողիկոսի անձնական նամակը Գևորգ արքեպիսկոպոսին՝ «ազատ եկեղեցականների գործունեության, իր ապրած դառն ժամերի, Թիֆլիսում տիրող իրադրության մասին», «Խորեն Ա կաթողիկոսի դիմումը ՀՍԽՀ ներքին գործերի ժողկոմ Վ. Խվորոստյանին՝ Երևանի ս. Սարգիս եկեղեցու, Հայաստանի տարածքում մոտ 800 եկեղեցի բռնությամբ փակելու մասին» և այլ փաստաթղթեր:

Զայրանում, վշտանում և ափսոսում ես, թե ինչպիսի տիտանական մտքի ու հոգու տեր հոգևորականներ են կտտանքների ենթարկվել, որքան բարձրարժեք, գիտական, մշակութային ձեռագիր աշխատություններ են ոչնչացվել ու անհայտ կորել, քանի կյանքեր են անմեղ զոհ դարձել, որոնց մեծագույն մեղքը հոգևորական կոչումն է եղել:

Վարչակարգը փորձում էր ժխտել և քանդել Հայաստանյայց եկեղեցու գոյության և պատմական զարգացման հիմքերը, ու եթե չհաջողվեց, պատճառը, անշուշտ, պետք է որոնել շուրջ երկհազարամյա նվիրագործված ավանդույթներին և իրողություններին, որոնք անհնար էր արագորեն և նույնիսկ տասնամյակների ավերիչ գործողություններով խեղաթյուրել և ոչնչացնել, թեև այդ ըն-

թացքում կորուստներ եղան, որոնք տկարացրին ազգի և եկեղեցու միասնությունը:

«Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մատենաշարի 3-րդ հատորը նվիրված է Մայր Աթոռ ս. Էջմիածնի ուխտապահ և իր կոչմանը հավատարիմ բացառիկ միաբաններից մեկին՝ Արտակ եպիսկոպոս Սմբատյանցին, որին գնդակահարել են 1937թ. ՀՍՍՀ ՆԳԺԿ-ի Եռյակի որոշմամբ:

Ահա թե ինչ է ասում սարկավագ Բեհբուդյանը. «Մահասարսուռ այդ փաստաթղթերի միջով սարսափահար անցնելիս առաջինը նկատեցի ձերբակալման թույլտվությունը՝ օրդերը, հաջորդ փաստաթղթերը՝ խուզարկության արձանագրությունն է, ըստ որի՝ բռնագրավել են ելից-մտից 5 մատյաններ, 15 «ազգայնամոլական բնույթի» գրքեր, անձնական նամակներ: Դժբախտաբար արժեքավոր այդ բոլոր նյութերը առայժմ անհայտ են: Ի վերջո, Արտակ եպիսկոպոսի գործը շինծու մեղադրանքով ներկայացվում է «Եռյակի» դատին:

Ահավասիկ արձանագրությունը. «Լսեցին.– Հայկ. ՍՍՀ ՆԳԺԿ-ի պետանվտանգության վարչության 4-րդ բաժնի հ. 18698 մեղադրական գործը՝ 1887թ. ծնված եպիսկոպոս Արտակ Եփրեմի Սմբատյանի մասին: Մեղադրվում է նրանում, որ լինելով կաթողիկոսի հավատարիմը, նշանակվել է Երևան քաղաքի եկեղեցիների ներկայացուցիչ՝ դրանով իսկ դառնալով կապող օղակ կաթողիկոսի և հակախորհրդային տարրերի միջև, ակտիվացրել է եկեղեցիները, թաքցրել և հովանավորել է եկեղեցական մոմերի անլեգալ պատրաստումը, քարոզների միջոցով պարբերաբար հակախորհրդային ազգայնամոլական քարոզչություն է արել եկեղեցիներում, հանգանակություն կազմակերպել և նյութական օգնություն է ցույց

տվել քաղաքսորյալներին: Որոշեցին.– Արտակ Եփրեմի Սմբատյանին գնդակահարել»:

Թերթելով այդ գրքերը՝ սառը, մահաբեր քրտինք է պատում, երբ մտածում ես, թե մի ժողովուրդ, որի ողնաշարը կոտրել էր 1915թ. եղեռնը, ապրեց երկրորդ՝ սպիտակ և կարմիր եղեռն:

Մատենաշարի 4-րդ հատորը նվիրված է երջանկահիշատակ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանին:

Ընթերցողի սեղանին դրվեց նաև բազմավաստակ, բանիբուն մտավորականի ուշագրավ և բազում տեսակետներով կարևոր «Վավերագրեր հայ եկեղեցու պատմության» մատենաշարի 5-րդ հատորը: Այս անգամ ևս հարգելի հեղինակը ուսումնասիրել է բոլոր արխիվները:

Գիրքը բաղկացած է ներածությունից, փաստաթղթերից և 1920թ. Մայր Աթոռում լույս տեսած «Էջմիածին» պաշտոնաթերթի հիմնական հոդվածներից: Պարոն Բեհբուդյանը կարողացել է ընդհանուր և ճիշտ դասակարգել բոլոր փաստաթղթերը, ուր կան ժամանակաշրջանի ճշմարիտ պատկերը գծող բնութագրումներ, պատմական, քաղաքական, հասարակական և մշակութային նկարագիր: Նա մեծ զուրգուրանքով է մոտեցել նյութին: Ուսումնասիրելով փաստաթղթերը՝ համոզվում ես, որ հայ ազատագրական պայքարի մեջ հայ ժողովրդի բոլոր զավակները՝ հոգևորական, թե աշխարհական, կռվել են կողք կողքի, և մղած մեծ ճակատամարտերը թշնամիների դեմ իր ձևով ու բովանդակությամբ, կռվող ուժերով ու պայքարի մեթոդներով նոր հանգրվան են նշանավորել իրադարձություններով հարուստ մեր պատմության անդաստանում:

Չես կարողանում թաքցնել հուզմունքդ, երբ կարդում ես «Երևանի փոխթեմակալի գրությունը կաթողիկոսին՝ զինվորական քահանաների համար հատուկ հրահանգ կազմել տալու խնդրանքով և Խորեն արքեպիսկոպոսի կազմած հրահանգի նախագիծը»:

Փաստաթղթերը վկայում են, թե Գևորգ Ե կաթողիկոսը ինչպիսի խորությամբ է ըմբռնում ազգային-հայրենասիրական նշանակության արժեքը, իր որոշումներով, քարոզներով, հորդորներով արթնացնում հայրենասիրական անթեղը մարդկանց հոգիներում:

Ուշագրավ է Ամենայն Հայոց կաթողիկոսի նամակը Պողոս Նուբար փաշային՝ միջազգային կոնգրեսում հայ ժողովրդի դատը պաշտպանելու և նրա արմատական լուծումը վաստակելու նպատակով ուղարկվող պատվիրակության մասին, Գևորգ Ե կաթողիկոսի կոնդակը ուղղված հայ ժողովրդին՝ Հայաստանի կառավարության շուրջ համախմբվելու և ձեռք բերած ազատությունը պաշտպանելու մասին:

Ահավասիկ փաստաթղթեր, որոնք խոսում են հայ ժողովրդի անկրկնելի ոգու մասին. Ակսել Բակունցի, Վահան Համբարձումյանի և Հ. Մանուկյանի դիմումը՝ ճեմարանի լսարանական բաժինը վերաբացելու մասին, Գևորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի ողջույնը համալսարանի բացման առիթով: Հատկանշական է, որ Հայոց հայրապետի, պետական այրերի, մտավորականների համատեղ ուժերով հիմնադրվում է համալսարան մի այնպիսի ժամանակ. երբ երկիրը սովի, թշվառության, դժվարին կացության մեջ էր:

Թերևս այդ դժվարություններն էին, որ զգաստության կոչ էին հնչեցրել՝ համախմբելու ազգի բոլոր ուժերը:

1918-1920թթ. իշխում էր մեկ ազգ, մեկ եկեղեցի, մեկ պետություն կարգախոսը:

Անհնար է խոսել այն բոլոր փաստաթղթերի մասին, որոնք պատմում են մեր բարեշնորհ սուրբ հայրերի, եպիսկոպոսների տառապանքների, հալածանքների, խիզախումների, անմնացորդ հայրենասիրության մասին:

Սանդրո Բեհբուդյանը անտարբեր չէր կարող գտնվել Արցախի ժողովրդի կրած տառապանքների, թշվառությունների և հալածանքների հանդեպ: Դժվար չէ պատկերացնել և զգալ այն մորմոքը, այն տառապանքը, որով նա պատրաստել ու հրատարակել է «Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմը 1813-1933 թթ.» հատորը:

Հայ Եկեղեցու Արցախի թեմի պատմությունը ի սկզբանե համընթաց է եղել Մայր Աթոռ ս. Էջմիածնի գործունեությանը, որը սակայն, դաժան ժամանակների արգելքների պատճառով, մինչև օրս մատնվել էր անուշադրության, մանավանդ արխիվը տեղափոխվել էր Բաքու: Ահա այդ բացը լրացնելու և Արցախի թեմի վերջին 200 տարվա պատմությունը մեր ժողովրդի սեփականությունը դարձնելու համար լույս տեսավ 975 էջանոց ժողովածու, ուր ընդգրկված են 712 վավերագրեր:

Մատենաշարի տասներորդ հատորը նվիրված է Հայ Եկեղեցու շնորհազարդ հոգևորական (1874-1884 թթ.) Կ.Պոլսի պատրիարք Ներսես արքեպիսկոպոս Վարժապետյանին:

Ժողովածուն նրա կյանքի տարեգրությունն է, որտեղ տեղ են գտել հոգևոր և հասարակական-քաղաքական, մշակութային գործիչների նամակները՝ Գևորգ Դ կաթողիկոսին, Խրիմյան Հայրիկին, Մատթեոս արքեպիսկո-

պոս Իզմիրլյանին, Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանին, Մինաս Չերազին, Ծերենցին և այլն:

Մեծ արժեք են ներկայացնում Սան Ստեֆանոյի և Բեռլինի վեհաժողովների վերաբերյալ նյութերը: Ոչ պակաս հետաքրքիր են Սուլթան Համիդի հետ նրա ունեցած հանդիպումների մասին փաստաթղթերը:

Զգալի տեղ է հատկացված Կ.Պոլսի ազգային ժողովի արձանագրություններին:

Այդ տասը ստվարածավալ հատորներում ընդգրկված են հայ ժողովրդի և եկեղեցու վերջին մեկդարյա եղերական պատմությունը լուսաբանող հազարավոր փաստաթղթեր, որոնք վերաբերվում են երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոսներ Խրիմյան Հայրիկի, Մատթեոս Բ Իզմիրլյանի, Գևորգ Ե Սուրենյանի, Խորեն Ա Մուրադբեկյանի, Գևորգ Զ Չորեքչյանի, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի գահակալության շրջանին: Խոնարհվելով նրանց սևով երիզված հիշատակի առջև՝ կրկին ու կրկին ասենք. «Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»:

ՎՇՏԱԼԻ ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐ

Թերևս պարտականության ու անհրաժեշտության պատճառներն էին, որ ստիպեցին Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին գրիչը թաթախել իր հոգու հույզերի և հիշողության ավազանը՝ գրելու «Վշտալի հայրապետներ» ակնարկը: Եվ, բացի պարտականություն լինելուց, նաև հետմահու մի խորհրդավոր հոգեհանգիստ է սգակիր կաթողիկոսների հիշատակին, իսկ արցունքախառն մտքերը լուսավոր հոգիների համար շուրթերից մրմնջացող «ալելույա»:

Ամենայն Հայոց Գևորգ Ե կաթողիկոսը իրավամբ ստորագրում էր «Վշտալի կաթողիկոս»: Նրա հայրապետության օրոք տեղի էր ունեցել Հայոց պատմության մեծագույն ողբերգությունը, 1915-16-ի ցեղասպանությունը: Նա տեսել էր Վասպուրականի ժողովրդի գաղթը Հայաստան, հայ ազգի բազմահազար որբերին և մեր ժողովրդի զավակների բազում տառապանքները: Նա ապրել էր 1918 թվականի ահավոր օրերը, երբ թրքական զորքերը հարձակվել էին Հայաստանի վրա՝ շարունակելու համար իրենց ցեղասպանության ծրագիրը և բնաջնջելու Արևելյան Հայաստանի բնակչությանը:

Այդ օրերին, Գևորգ Ե կաթողիկոսը ցուցաբերել էր քաջարի վերաբերմունք՝ հայրենասիրական կոչեր ուղղելով մեր ժողովրդին, հատկապես կռվող զորքերին՝ հաղթանակի հավատ ներշնչելով բոլորին: Կռվի նախօրյա-

կին հայ զորքերի հրամանատարը լուր էր ուղարկել կաթողիկոսին, որ միաբանության հետ միաժամանակ հեռանա ս. Էջմիածնից և ապաստանի Սևանա կղզում, որովհետև Էջմիածինը, մոտ լինելով սահմանին, կարող էր թշնամու ձեռքն ընկնել:

Հայտնի է ծերունազարդ հայրապետի պատասխանը՝ «Ես ս. Էջմիածնից չեմ բաժանվում, բոլոր միաբանների հետ մայր տաճարում կհավաքվենք աղոթքի՝ մեր զորքերի հաղթանակի համար և կռվի օրերին հրահանգ կտանք հնչեցնել Էջմիածնի և ողջ Հայաստանի եկեղեցիների զանգերը»:

Այդպես էլ վարվեց և հոգեկան մեծ մխիթարությունն ունեցավ ողջունելու Սարդարապատի հաղթանակը ու ապա Հայաստանի անկախ Հանրապետության հռչակումը, որը տևեց մինչև 1920-ի աշունը:

Գևորգ Ե կաթողիկոսը կրկին դժբախտությունը ունեցավ ապրելու վտանգի և տառապանքի պահեր, երբ 1920-ի հոկտեմբերին Հայաստանի վրա հարձակվեցին քեմալական Թուրքիայի զորքերը, Քյազիմ Կարաբեքիր փաշայի հրամանատարությամբ: Այս անգամ էլ Հայոց հայրապետը սրտառուչ կոչերով հանդես եկավ՝ ուղղված հայ մարտիկներին, սակայն թրքական զորքերը հաղթեցին՝ գրավելով Ալեքսանդրապոլը ու պարտադրեցին Հայաստանի կառավարությանը ստորագրելու «Ալեքսանդրապոլի սև դաշնագիրը», որով հայ ժողովուրդը ծնկի էր գալիս թուրքերի առաջ:

Այդ օրերին էր, որ Հայաստան մտավ խորհրդային բանակը՝ չեղյալ հայտարարելով «Ալեքսանդրապոլի դաշնագիրը», մի քանի ամիս կռվելով՝ դուրս քշեց թրքական զորքերին Հայաստանից և այնտեղ հաստատեց խորհրդային կարգեր: Այդպես է, որ թեև ֆիզիկապես

հայ ժողովուրդը փրկվեց, սակայն նաև վերջ գտավ Հայաստանի անկախությունը:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո մեծ սահմանափակումներ պարտադրվեցին եկեղեցական կյանքին՝ հասցնելով մինչև իսկ խստությունների՝ եկեղեցական կալվածքների գրավումով ու նույնիսկ հոգևորականների աքսորումով: Սկսվեցին փակվել բազմաթիվ աղոթքի տներ՝ աթեիստական անանց պրոպագանդայի պայմաններում: Այդպիսի ծանր պայմաններում է, որ Գևորգ Ե կաթողիկոսը իր աչքերը փակեց 1930 թվականին:

1932-ին Գևորգ Ե կաթողիկոսին հաջորդեց Խորեն Ա Մուրադբեկյան կաթողիկոսը: Նրա օրոք խստությունը եկեղեցու դեմ ավելի ու ավելի սաստկացավ, հետզհետե եկեղեցիները փակվեցին ու քանդվեցին, իսկ պատմական վանքերը դադարեցին գործելուց՝ նկատվելով ճարտարապետական պատմական հուշարձաններ միայն՝ պետության հովանու ներքո:

Մինչև 1930 թվականը փակվեցին Լեռնային Ղարաբաղում գործող 18 վանքերը և 105 եկեղեցիները, մեծ մասամբ հոգևորականները աքսորվեցին, իսկ ոմանք ստիպված թողեցին իրենց եկեղեցական կարգն ու հեռացան կրոնական ասպարեզից: Ղարաբաղի առաջնորդը՝ Վրթանես եպիսկոպոսը, հանդուգն և քաջարի հոգևոր առաջնորդ, մինչև վերջ մնաց իր աթոռի վրա, Գանձասարի վանքում, հրաժարվելով վերադառնալ Էջմիածին: Ինչ-որ շինծու մեղադրանքներով նրան ձերբակալեցին և բանտարկեցին Բաքվում մի քանի ամիս, ապա ազատ արձակեցին, պայմանով, որ ոտք չկոխի Ղարաբաղ ու վերադառնա Մայր Աթոռ:

Այդ տարիներին, դեռևս Գևորգ Ե-ի օրոք, մութ ուժերը կազմակերպեցին այսպես կոչված «Ազատ եկեղեցի» շարժումը՝ հայ եկեղեցին ներքուստ քանդելու և տկարացնելու: Այդ շարժման գլուխն էին կանգնել Աշոտ եպս. Շխյանը՝ Շիրակի թեմից, Բենիկ վարդապետը, Եղիշե վրդ. Վաթյանը Թբիլիսիից և հայտնի քարոզիչ Մելյան քահանան: Տարիներ շարունակ հայ եկեղեցու ներքին կյանքը ալեկոծվեց, նաև «անաստված» միությունների հիմնադրումով:

Մայր Աթոռին հավատարիմ բարձրաստիճան հոգևորականները, գլխավորությամբ Գևորգ Ե և ապա Խորեն Ա կաթողիկոսների, անհավասար պայքար մղեցին ուխտադրուժ հոգևորականների դեմ՝ տևապես ենթարկվելով հալածանքների ու վիրավորանքների: «Անաստվածյան» շարժումը հետզհետե բորբոքվեց, նաև Հայաստանում փակվեցին գրեթե բոլոր եկեղեցիները, իսկ ս. Էջմիածինը դարձավ մի մենաստան, որ հազիվ փոքրաթիվ հավատացյալներ, պառավ մայրիկներ կարողանում էին աղոթել այնտեղ:

1937-ի վերջերին կամ 1938-ի սկզբներին Էջմիածնի ֆինբաժինը նույնիսկ վաճառքի հանեց կաթողիկոսական վեհարանի կահույքն ու գորգերը, իբր «վանքի պարտքերի դիմաց», Խորեն կաթողիկոսի աչքի առջև: Վանքի միաբանների թիվը հետզհետե նվազում էր, նույնիսկ վեհարանի երկու շաթիրները՝ Գեղամ և Հրանտ, 1938-ի մարտի սկզբներին ձերբակալվեցին: Ծերունազարդ հայրապետը մնացել էր գրեթե մենակ, մի քանի ծերունի միաբաններով և մեկ-երկու ժամկոչներով: Վանքի շուրջ մթնոլորտը հետզհետե մթագնում էր, և պայմանները դառնում էին անտանելի: Այդ պայմաններում է, որ 1938

թվի ապրիլի 5-ի առավոտյան Խորեն կաթողիկոսը վեհարանում գտնվեց մահացած:

Ինչպես հայտնի է, արտասահմանում տարածվեց հայրապետի մահվան գուժը, որ նա խեղդամահ է եղել վեհարանում չար ձեռքերով: Պաշտոնական հաղորդագրությամբ, սակայն, Հայաստանից հաղորդվեց, որ Խորեն կաթողիկոսը մահացել է սրտի կաթվածից և թաղվել ս. Գայանեի վանքում:

Իրական ճշմարտությունը հայտնաբերելու համար երևի հարկ կլինի ուսումնասիրել այդ շրջանի հին արխիվային նյութերը, մանավանդ պետական անվտանգության մարմինների՝ չեկայի գործերը:

Այս ողբերգության վերաբերյալ պարտք եմ զգում գրի առնելու այն, ինչ-որ ես անձնապես լսել եմ Հայաստանում:

1951թ, հրավիրվել էի Մայր Աթոռ՝ եպիսկոպոսական աստիճան ստանալու: Նույն նպատակով հրավիրվել էին նաև Երուսաղեմից երեք վարդապետներ. Եղիշե Տերտերյանը, Նորայր Պողարյանը և Պարգև Վրթանեսյանը, որոնք սակայն մոտ մի ամիս ուշացումով եկան Հայաստան: Այդպիսով ես ստիպվեցի սպասել նրանց ժամանման: Բնակվում էի Երևանի «Ինտուրիստ» հյուրանոցում: Էջմիածնի վանքում ոչ մի բնակության հարմարություն գոյություն չուներ այդ ժամանակ: Միաբանության բնակելի մեծ շենքում՝ «Երեմյան» շենքում, բնակվում էին ընտանիքներ: Իսկ այլ վանական շինություններ կիսավեր վիճակում էին և անբնակելի: Կային մի քանի խուցեր, ուր ապրում էին մի քանի հոգևորականներ, մի մասը աքսորից վերադարձած, բոլորովին անմխիթար, վատթար պայմաններում: Նույնիսկ վեհարանում բնակվելու հնարավորություններ չկային, ոչ ջեռուցում կար, ոչ

էլ ջուր, բոլորովին տարրական պայմաններ չունեին ոչ մի տեղ:

Գևորգ Զ կաթողիկոսը բնակվում էր Երևանում, Նալբանդյան փողոցում, երկուսենյականոց շատ համեստ բնակարանում, կիրակի օրերը գալիս էր Մայր Աթոռ՝ պատարագի արարողությանը ներկա լինելու: Սպասելով երուսաղեմացիների ժամանման, ես ապրում էի Երևանում՝ մասնակցելով պատարագի արարողությանց Մայր Աթոռում կամ Երևանի եկեղեցիներում կամ երբեմն այցելություններ տալով ռումինահայ ինձ ծանոթ ներգաղթողներին՝ հետաքրքրվելու համար նրանց կյանքի պայմաններով, պայմաններ, որոնք բավական ծանր էին և դժվարություններով լի:

Գևորգ Զ կաթողիկոսը հաճախ էր ինձ հրավիրում ճաշի Երևանի իր բնակարանը: Իմ այդ այցելությունները շատ հետաքրքիր էին ինձ համար, քանի որ ծերունազարդ հայրապետը պատմում էր ինձ անցյալ շրջանների լավ օրերի մասին, մինչև առաջին համաշխարհային պատերազմը:

Մի օր, երբ նորից ճաշի էի հրավիրված նրա մոտ Երևանում և մենակ էինք կաթողիկոսի հետ, խոսք բացեց Խորեն Ա կաթողիկոսի մահվան պարագաների մասին՝ ինձ պատմելով հետևյալը.

«1938-ի առաջին ամիսներին էր, երբ Էջմիածնի Մայր Աթոռում կյանքը արդեն անտանելի էր դարձել: Մի քանի հոգևորականներ հավաքվեցինք Խորեն կաթողիկոսի հրավերով՝ մտածելու համար, թե ինչ անենք, որ այս դրությունից ազատվենք կամ գոնե որոշ չափով կյանքը տանելի դարձնենք: Գիտեինք, որ չենք կարող հույս դնել Հայաստանի իշխանությունների վրա, որովհետև նրանք էլ անզոր էին, և բոլորը վախենում էին ընդհանուր

ստեղծված կացությունից: Որոշեցինք հուսահատական մի քայլի դիմել, այն է՝ հատուկ գրությամբ ներկայանալ այդ օրերին Թբիլիսի, ամենազոր Լավրենտի Բերիային՝ բացատրելու նրան Մայր Աթոռի դժբախտ կացությունն ու անտանելի պայմանները, խնդրելով նրա օգնությունը՝ մեր կյանքն ինչ-որ չափով բարելավելու համար: Դիմումը ստորագրեց Խորեն կաթողիկոսը և ինձ, որպես պարտականություն հանձնարարեց գնալ Թբիլիսի, ներկայանալ Բերիային ու տալ նրան աղերսագիրը: Ինձ վիճակվեց այդ պարտականությունը՝ նկատի ունենալով, որ իբրև նախկին Թիֆլիսի առաջնորդ, ես քիչ թե շատ ծանոթություններ ունեի այնտեղ: Մի երկու օր հետո ժամանեցի Թբիլիսի, մարտի վերջերին, և խնդրագիր ուղարկեցի Բերիայի հիմնարկին, որպեսզի նա բարեհաճեր ինձ ընդունել: Անցան 7-8 օրեր, և որևէ պատասխան չստացա: Սպասում էի անհամբեր, երբ ապրիլի 5-ին ստացա մի հեռագիր Էջմիածնից, ուր ասվում էր, որ անմիջապես վերադառնամ Մայր Աթոռ: Ես չհասկացա, թե ինչու էին ինձ հրավիրում, քանի որ դեռևս իմ առաքելությունը չէի կատարել: Համենայն դեպս, որոշեցի հաջորդ օրը մեկնել Էջմիածին, սակայն հենց նույն օրը առավոտյան ստացա պատասխան Բերիայի հիմնարկից, որ նա ինձ ընդունելու է հաջորդ օրը ճշտված ժամին: Որով ես հետաձգեցի իմ վերադարձը: Ներկայացա Լավրենտի Բերիային, հանձնեցի Խորեն կաթողիկոսի աղերսագիրը՝ խնդրելով, որ իր բարձր հեղինակությամբ բարելավի մեր եկեղեցու կյանքի պայմանները Հայաստանում: Նա ուշադրությամբ կարդաց աղերսագիրը և խոստացավ իր օգնությունը: Գոհունակ սրտով ապրիլի 8-ի շուրջ ետ վերադարձա Էջմիածին: Մտնելով վանքից ներս, լսեցի կատարվածը և տեսա նաև, որ վանքում ոչ մեկը չկար, բոլոր

մի քանի ծառայողները՝ ժամկոչներ, շաթիրներ և այլն, հեռացել էին: Միայն տաճարի շուրջ կային մի քանի միլիցիոներներ՝ հսկողի դերով: Չգտա ոչ մեկին, որի հետ կարողանամ խոսել: Իմացա միայն, անշուշտ, որ Խորեն կաթողիկոսը մահացել է և թաղվել ս. Գայանեի վանքում, մի հասարակ անկյունում, առանց կրոնական որևէ արարողության:

Շփոթված և հուզված գնացի Էջմիածին քաղաքի ոստիկանատուն և ասացի. «Ասացեք, խնդրեմ, Էջմիածնի վանքը փակո՞ւմ եք, ի՞նչ եք մտադիր անելու»:

Միլպետը, ինքն էլ մի քիչ շփոթված, պատասխանեց. «Ոչ, սրբազան, այդպիսի կարգադրություն չկա, մի վախենար: Ես անմիջապես հրահանգ կտամ, որ միլիցիոներները վանքից հեռանան: Դուք շարունակեցեք այնտեղ ապրել և գործել»:

Վերադարձա վանք, հեռացած մի քանի միաբանների հրավիրեցի, որ ետ գան, նրանց հետ նաև մի քանի աշխատողների: Այսպիսով փորձեցինք շարունակել մեր հոգևոր գործունեությունը նույն ծանր պայմաններում: Այդ օրերին Էջմիածնի չեկայի պետը Խվորոսյան անունով մի անձնավորություն էր, որի գիտությամբ էր, անշուշտ, կատարվել կաթողիկոսի մահվան հետ կապված ողբերգությունը: Խորեն կաթողիկոսի մահվանից մի քանի ամիս հետո, սակայն, ինձ անծանոթ պատճառներով Խվորոսյանն ինքն էլ ձերբակալվեց և գնդակահարվեց իբրև ժողովրդի թշնամի»:

Ահա թե ինչ ասաց ինձ Գևորգ Զ կաթողիկոսը 1951 թվականին Խորեն կաթողիկոսի մահվան առնչությամբ: Թե ինչպես էր մահացել Խորեն կաթողիկոսը՝ սրտի կաթվածով, թե խեղդամահ եղել, այդ մասին նա ինձ հստակ չարտահայտվեց:

Խորեն կաթողիկոսի շաթիրներից Գեղամը 1955թ. աշնանը վերադարձել էր աքսորից, այսինքն՝ իմ կաթողիկոս ընտրվելուց հետո և ներկայացավ ինձ: Ես նրան անմիջապես աշխատանքի ընդունեցի նույն պաշտոնով իբրև վեհարանի շաթիր: Թեև տարիքն առել էր, բայց բավական աշխույժ և շատ բարեխիղճ աշխատող էր: Նա խոր հարգանքով և վշտով էր խոսում մանավանդ Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսի մասին, պատմում էր այն ծանր պայմանները, որոնք այն ժամանակ ստեղծված էին Մայր Աթոռում:

Հիշում եմ՝ ինչպես մի օր ինձ պատմում էր հետին մանրամասնություններով, թե ինչպես կաթողիկոսի մահից մի քանի ամիս առաջ ֆինբաժինը աճուրդի էր հանել վեհարանի գորգերն ու կահույքը Խորեն կաթողիկոսի աչքի առաջ: Արտասուքը աչքերին նա ինձ ասաց, որ կաթողիկոսի մահից շուրջ մեկ ամիս առաջ նրան և Հրանտ շաթիրին ձերբակալել ու բանտարկել էին Երևանում, ու թե ինքը բանտում էր լսել նրա մահվան մասին:

Մայր տաճարի ժամկոչ Գրիգոր Մանուկյանը, որն այդ պաշտոնի վրա էր 1938-ին, իմ կաթողիկոս ընտրվելուց հետո ես նրան վերցրի իբրև երկրորդ շաթիր ու որոշ մանրամասն տեղեկություններ ստացա նրանից Խորեն կաթողիկոսի մահվան կապակցությամբ: Նա ինձ պատմեց, որ 1938-ի ապրիլի 4-ի երեկոյան Խորեն կաթողիկոսի մոտ էին եկել չորս կամ հինգ անձինք, որոնցից մեկը կին՝ Փիրուզա Նահապետյան անունով, իսկ մեկը՝ գարաժի Լևոն անունով: Երկուսը մտան Խորեն կաթողիկոսի մոտ, իսկ երկուսը մնացին Վեհարանի մուտքի դռան մոտ, որից մի 30-40 րոպե հետո բոլորը մեկնեցին: Հա-

ջորդ առավոտյան Խորեն կաթողիկոսը գտնվեց մահացած: Կասկած կա, որ նրան խեղդել են, և այդ ոճիրը կատարողը եղել է գարաժի Լևոն կոչեցյալը»:

Երկար տարիներ ես հետաքրքրվել եմ և հարցուփորձ արել Խորեն կաթողիկոսի մահվան պարագաների մասին ու գրեթե նույն տեղեկություններն եմ ստացել: Ինձ տեղեկացրել են նաև, որ տարիներ հետո, երբ գարաժի Լևոնը բնական մահով մահացել է ու թաղվել, Էջմիածնեցիները գիշերով երկու անգամ նրա գերեզմանը քարուքանդ են արել:

Ուզում եմ ավելացնել մի վկայություն ևս:

1966-67թթ. ինձ մոտ էր գտնվում, իբրև հյուր, Փարիզի առաջնորդ Սերովբե արքեպիսկոպոս Մանուկյանը: Ամառ էր և բավական շոգ: Հրավիրեցի նրան, որ մի քանի օրով գնանք Արզնի՝ հանգստանալու: Գնացինք, ուր մեզ ընդունեցին ջերմ հարգանքով և հոգածությամբ:

Հաջորդ օրը առավոտյան շուտ ես առանձին դուրս եկա քայլելու առողջարանի շուրջ՝ դեպի փոքրիկ անտառը: Ոչ ոք դրսում չկար, մի տասը րոպե քայլելուց հետո, սակայն, տեսա մի այլ հանգստացող, որն ինքն էլ էր քայլում դանդաղ քայլերով:

Նա ինձ նկատեց և կանգ առավ, մոտեցավ ինձ և հարգալից ողջունեց, ու սկսեցինք խոսել և քայլեցինք: Խոսակցության ընթացքում նկատեցի, որ շատ տեղեկություններ ունի հայ եկեղեցու և ս. Էջմիածնի գործունեության մասին:

Ասաց, որ ինքը կանոնավոր կարդում է «Էջմիածին» ամսագիրը և գնահատում իմ գործունեությունը: Լսելով այդ բոլորը՝ ես նրան հարցրեցի, ինչպես է, որ այդքան հետաքրքրում է մեր Եկեղեցին և ս. Էջմիածինը:

Նա պատասխանեց. «Ես Էջմիածին քաղաքի ռայկոմի առաջին քարտուղար եմ եղել մի քանի տարիներ շարունակ»:

Հարցրեցի. «Որ թվականներին»: Նա հասկացավ իմ հարցման իմաստը և պատասխանեց. «Վեհափառ, դժբախտաբար այդ թվականներին»:

Այդ որ ասաց, ես կանգ առա և բացականչեցի. «Ո՞հ, ուրեմն Դուք տեղյակ եք ամեն ինչից»:

Նա պատասխանեց. «Այո, Վեհափառ, տեղյակ եմ,– և շարունակեց.– Դուք այժմ չեք կարող երևակայել, թե ինչպիսի պայմաններում էինք գործում այդ ժամանակներում:

Ձեզ կարող եմ ասել հետևյալը, որ իբրև ռայկոմի առաջին քարտուղար, 1937-38 տարիներին մանավանդ զգում էի, թե ինչ է կատարվում Մայր Աթոռի շուրջ:

Տեղյակ էի, թե հետզհետե ծերբակալվում և աքսորվում են միաբաններ, և անտանելի պայմաններ ստեղծվում կաթողիկոսի ու նրա գործակիցների համար: Զգում էի, թե ինչպես օղակը հետզհետե սեղմվում է Էջմիածնի շուրջ, և Խորեն կաթողիկոսի մահից մի երկու-երեք ամիս առաջ ինքս ծանր մտահոգված գնացի Հայաստանի Կոմկուսի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի մոտ՝ խոսելու նրա հետ այդ կացության մասին, ակնկալելով, որ մի բան արվի, և վերանա այդ ծանր կացությունը, որ տիրում էր ս. Էջմիածնում:

Նա պատասխանեց ինձ. «Սիրելիս, ես էլ եմ լսել այդ բոլորի մասին, բայց անզոր եմ որևէ ձևով փրկելու կացությունը, ես ինքս էլ չգիտեմ, թե վաղն այս Աթոռի վրա կլինեմ, թե ոչ: Դժոխային պայմաններում ենք ապրում»:

Եվ Էջմիածնի ռայկոմի նախկին քարտուղարը շարունակեց վկայություններ բերել այդ մասին, եզրակացնելով, որ «այդ բոլոր չարագործությունները ղեկավարվում էին չեկայի կողմից, որ գործում էր Լավրենտի Բերիայի սև ձեռքով»:

Ահա այն ամենը, ինչ-որ ես կարողացել եմ լսել մեր նահատակ հայրապետի ողբերգական մահվան մասին:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ
Կաթողիկոս Ամենայն Հայոց:

«ՏՆԿԵՍՑԻ ՍԵՐ ԵՎ ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆ ՅԵՐԿՐԻ»

«Այսօր, սեպտեմբերի 30-ին, ուրբաթ օրը ցերեկվա ժամը 5-ին, ս. Էջմիածնի Մայր տաճարում 137 պատգամավորների ներկայությամբ գումարված ազգային-եկեղեցական ժողովը, 125 ձայնով, Ամենայն Հայոց կաթողիկոս ընտրեց Ռումինիայի և Բուլղարիայի հայոց թեմի առաջնորդ, գերաշնորհ Տ Վազգեն եպիսկոպոս Պալճյանին»:

1955թ Հայոց Եկեղեցու զանգերը դողանջեցին ազդարարելով Ամենայն Հայոց ծայրագույն պատրիարք և կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Վազգեն Առաջին հայրապետի ընտրությունն ավետող լուրը: Մինչդեռ նորընտիր կաթողիկոսին սպասվում էր ժամանակի վարչակարգի հրեշավոր գաղափարախոսությունը «Քրիստոնյա հոգևորականությունը՝ թշնամաբար է ընդունել հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը, ծավալել հակասովետական և հակակոմունիստական գործունեություն... պայմաններ են ստեղծվում մարդկանց գիտակցությունը կրոնական հայացքներից ազատելու համար: Այս գործում խոշոր դեր ունի աթեիստական դաստիարակությունը»:

Ահա այս դառն ու մահացու ապրումներն էին պաշարել Հայոց հայրապետին, և այսքանից հետո խոցված ու վիրավորված՝ իր արժանապատվության ձայնն է բարձրացնում արդարատենչ մեծ հոգին: Արիասիրտ Վազգեն

վեհափառը հաղթահարում է բոլոր դժվարությունները, և նրա գործնական միտքը հարթում է ծառացած խոչընդոտները ամենայն հաջողությամբ ու մեզ վերընծայում է մեր հավատը, մեր խիղճը:

Միավասիկ, վեհափառը հնչեցնում է հայոց եկեղեցու կոչնազանգը...

«25 մարտի 1959թ
Ս. Էջմիածին

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՄԵԾԱՐԳՈ ՊԱՐՈՆ ԱՆՏՈՆ ՔՈՉԻՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆ

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի պարոն Նախագահ

ՀԿՊ և Հայկական ՍՍՌ պաշտոնաթերթ «ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ»-ի 1959 թվականի մարտի 20-ի համարում մեծ զարմանքով կարդացինք Վ. Սկյանի հոդվածը *«Կրոնական բարոյականության հակաժողովրդական էությունը»* խորագրի տակ:

Մեզ և ամեն մի սովետական գիտակից քաղաքացու քաջ հայտնի է, որ մեր հայրենիքում շատ հստակ ու ճիշտ կերպով լուծված է խղճի ազատության հարցը, Սովետական Միության Կոնստիտուցիայի մեջ արձանագրված սկզբունքով, որով ամեն մի քաղաքացի ազատ է լինելու հավատացյալ կամ աթեիստ, հավատացյալներին ապահովված լինելով կրոնական համայնքներ հիմնելու և եկեղեցիներում իրենց հոգեկան մխիթարությունը գտնելու իրավունք, սահմանված պետական օրենքների սահմանում:

Մեզ համար շատ պարզ է նաև, որ ամեն մի ոչ հավատացյալ քաղաքացի իրավունքը պետք է ունենա, նույն խղճի ազատության սկզբունքի վրա, իր աթեիստական հայացքները ունենալու և արտահայտելու ազատ ու անկաշկանդ կերպով: Եվ, անշուշտ, ոչ մի հավատացյալ կամ Եկեղեցու ներկայացուցիչ իրավունք չունի այդ բանի համար վրդովվելու կամ վիրավորվելու:

Վ. Սկյանի հոդվածում սակայն հանդիպեցինք կրոնի և Եկեղեցու նկատմամբ հայտարարությունների և վերագրումների, որոնք անմիջապես դուրս են գալիս «գիտա-աթեիստական» ընդունված պրոպագանդայի սահմաններից:

Վ. Սկյանը մեր ժողովրդի առաջ հրապարակավ մեղադրում է Հայոց Եկեղեցուն, որպես թե՝

1. Եկեղեցին ներշնչում է աշխատանքի և հավաքական սեփականության դեմ անբարյացակամություն և այդպիսով վնասում մեր հայրենիքի սոցիալիստական վերաշինության առաջընթացին:

2. Եկեղեցին սովետական սոցիալիստական բարոյական նորմաների ճիշտ հակառակն է քարոզում:

3. Եկեղեցին մարդատյացություն և «մարդը մարդուն գայլ» վարդապետությունն է քարոզում՝ լինելով կեղծ՝ խաղաղության և ժողովուրդների բարեկամության համար մղվող պայքարում:

Այսպիսի ամբաստանություններ չափազանց ծանրակշիռ են և ոչ մի կապ չունեն խղճի ազատության արդար սկզբունքի վրա հիմնված գիտա-աթեիստական լուրջ պրոպագանդայի հետ:

Վ. Սկյանի հոդվածից հետևում է, թե կրոնն ու մեր Եկեղեցին պարզապես թշնամիներ են մեր ժողովրդին ու Սովետական Հայրենիքին:

Հոդվածագիր Սկյանը միայն մի քանի օրինակներ բերելով արևմտյան եկեղեցական պատմությունից՝ ընդհանրացումներ է անում և այդ բոլորը վերագրում առհասարակ բոլոր կրոններին և բոլոր եկեղեցիներին: Թեև նա ուղղակի չի հիշում Հայ Եկեղեցու անունը, սակայն պարզ և որոշ երևում է, որ նրա բոլոր ասածները ամբողջապես վերաբերում են նաև մեր կրոնին և Հայոց Եկեղեցուն:

Հետևաբար, հանուն ճշմարտության և արդարության և հիմնվելով մեր հայրենի Սահմանադրությամբ նվիրագործված խղճի ազատության սկզբունքի վրա, այլև նկատի ունենալով 1954 թվականի նոյեմբերի 10-ին ՍՍՌՄ Մինիստրների Սովետի Նախագահ Նորին Վսեմություն պարոն Խրուշչովի հատուկ հայտարարությունը, մենք պարտք ենք համարում հայտնել մեր խոր հուզումը և կատարել հետևյալ ճշտումները՝ ի գիտություն Ձեզ և մեր հայրենի բարեխնամ ու արդարադատ կառավարության՝ պարտն ու պատշաճը տնօրինելու խնդրանքով:

ա) Քրիստոնեական կրոնն ընդհանրապես և Հայ Եկեղեցին աշխատանքը նկատել են ու նկատում են նվիրական պարտականություն՝ հիմնվելով Ս. Գրքի Նոր Կտակարանի վարդապետության վրա, ուր ասվում է «ՈՎ ՉԻ ԱՇԽԱՏԻ՝ ՉԻ ՈՒՏԻ»:

Ի մասնավորի Հայ Եկեղեցու ամենամեծ առաքինություններից մեկն է եղել աշխատանքի սերը և գնահատումը, և այսօր էլ նա քարոզում է և մղում իր հավատացյալներին՝ հավատարմորեն և նվիրումով աշխատելու՝ ի շինություն մեր Սովետական Հայրենիքի և ի ծաղկումն սոցիալիստական տնտեսության:

Հայ Եկեղեցին ոչինչ չունի ընդհանուր բուրժուական հասարակարգի հետ և ոչ մի պատճառ և ցանկություն չունի հակադրվելու սոցիալիստական-կոմունիստական հասարակարգին կամ հակառակ լինելու հավաքական սեփականության սկզբունքներին: Ընդհակառակը, մեր քրիստոնեական մտածելակերպի և հատկապես Հայ Եկեղեցու համար առավել հարազատ են այդ սկզբունքները:

Մեր Եկեղեցին ոչ մի պատճառ չունի *անհատական սեփականության* ջատագովը լինելու:

Թե անցյալում կամ ներկայումս արևմտյան որոշ կրոնապետներ (հատկապես Հռոմի եկեղեցականության ծոցում) գործակցում են բուրժուական իմպերիալիստական քաղաքականության և նույնիսկ գործիք են դառնում նրանց ձեռքում և փորձում են անհատական սեփականությունը ներկայացնել իբր հաստատված աստվածային կարգ՝ դա ճշմարիտ է անշուշտ, սակայն այդ բոլորը չեն վերաբերում Հայ Եկեղեցուն և հայ հավատացյալին: Նման երևույթներ Սկյանի կողքին մենք ևս դատապարտում ենք, իբրև Հայ Եկեղեցուն և մեզ խորթ, հակաժողովրդական, հետադիմական ու նաև հակաքրիստոնեական մտածելակերպ և գործելակերպ:

Սկյանը ոչ մի ապացույց չի կարող բերել այսօր այս ուղղությամբ մեր Հայրենիքում գործող Հայ Եկեղեցու գործունեության մասին: Նույնպես չի կարելի ասել, որ Հայ Եկեղեցին անցյալում հլու հպատակ գործել է. ճիշտ հակառակն է: Գոնե վերջին մի քանի հարյուրամյակների ընթացքում մեր Եկեղեցու ամենամեծ դեմքերից շատերը պայքարել են տիրող բռնատիրական իշխանության դեմ և երբեմն նույնիսկ նահատակվել: Ներսես Աշտարակեցի, Խրիմյան Հայրիկ, Մատթեոս Իզմիրլյան

կաթողիկոսները հրապարակավ ընդունեցել են և պայքար կազմակերպել պարսկական, ցարական և սուլթանական իշխանության դեմ:

Մեր ժողովրդի վերջին չորս-հինգ հարյուր տարիների պատմությունը լիքն է ժողովրդանվեր և հայրենասեր խիզախ հոգևորականների անշահախնդիր նվիրվածության գործերով՝ ընդդեմ տիրող իշխանությանց: Ծանոթ է անշուշտ նաև բոլորին, որ 1915-1917 սև տարիներին ամբողջ արևմտահայ հոգևորականությունը աքսորի ճանապարհների վրա նահատակվեց իր ժողովրդի հետ և զեն ի ձեռին կռվեց տիրող բռնակալների դեմ:

Հայ Եկեղեցին ինքը նահատակ է եղած անցյալում իմպերիալիստական և բուրժուական բռնակալության լծի տակ, սուլթանական Թուրքիայում և ցարական իշխանության օրերին, և այժմ երջանիկ է, որ հայ աշխատավոր ժողովուրդն իր արդար քրտինքով ու հանճարով, քաղաքական-սոցիալական խաղաղ պայմաններում, ապրում ու զարգացնում է իր սոցիալիստական տնտեսությունը և Պետությունը:

Եվ Հայ Եկեղեցին երջանիկ կլինի, եթե այսօր մի քար էլ ինքը ավելացնի Սովետական Սոցիալիստական Հայաստանի շենքի վրա:

բ) Սկյանը պնդում է, թե կրոնական-քրիստոնեական բարոյականությունը հակաժողովրդական է և հայտարարում է, թե կրոնական բարոյականությունը հակադրվում է կոմունիստական բարոյականությանը, այսինքն՝ «կոլեկտիվիզմի, բարեկամության, ընկերական փոխադարձ օգնության և համագործակցության սկզբունքներին, որը խարսխված է անձնական և հասարակական շահերի ներդաշնակ զարգացման, անձնական շահերը հասարակականին գիտակցաբար ենթարկելու վրա: Այս-

տեղ մարդը մարդու համար ոչ թե թշնամի է, այլ բարեկամ, եղբայր, ընկեր»:

Այս սկզբունքներին և վեհ գաղափարներին ոչ թե հակառակ է քրիստոնեական Հայ Եկեղեցին, այլ դրանց պաշտպանն ու տարածողը դարերից ի վեր: Ուղիղ հասկացված քրիստոնեական վարդապետությունը ամբողջությամբ հիմնվում է այդ բարոյական ըմբռնումների վրա: Քրիստոնեական հավատը, իբրև կրոնական ապրում և մտածում, մեզ համար բարոյական մի կատեգորիա է: Այդ այդպես է մանավանդ Հայաստանյայց Եկեղեցու համար, որը գոնե վերջին ժամանակաշրջաններում իր ճակատագիրը և իր առաքելությունը կապել է ոչ թե իշխող պետությունների և դասակարգերի հետ, այլ ընդհակառակը, կանգնել է ժողովրդի լայն զանգվածների կողքին՝ ընդդեմ տիրող կարգերի, ընդդեմ իմպերիալիստների, ընդդեմ ժողովուրդների ազատությունը խեղդողների, ընդդեմ անարդարությունների և բարբարոս ազգասպանների:

Հրավիրում ենք Սկյանին, որ գոնե մի հատ կոնկրետ ապացույց ներկայացնի Հայ Եկեղեցու մեր ներկա կյանքից՝ իր ասածները հաստատելու համար: Թե՛ հայ հավատացյալների և թե՛ նույնիսկ հայ հոգևորականների շարքերում կարող են գտնվել անհատներ, որոնք գործեն նշված բարոյական նորմաների դեմ, ինչպես այդ երբեմն պատահում է նաև աթեիստների շարքերում: Նման մեղքեր և հակաժողովրդական բարոյական արարքները դատապարտվում են առաջին հերթին նույնինքն Եկեղեցու կողմից և այդպիսի արարքներ գործողները համարվում են ոչ միայն ժողովրդի, այլ նաև Եկեղեցու վնասարարներ:

Մեզ համար անչափ ուրախալի է կարդալ կոմունիստական բարոյականության նորմաների մասին, ըստ Վ. Սկյանի վերոհիշյալ շարադրության, որոնք ամբողջապես և առանց մնացորդի հարազատ են մեզ և նվիրական:

գ) Վերջապես Սկյանը մեր քրիստոնեական կրոնը և Հայ Եկեղեցուն ներկայացնում է որպես «մարդը մարդուն գայլ» դատապարտելի տեսության պաշտպան, կեղծ խաղաղասեր և ժողովուրդների միջև թշնամություն, ատելություն սերմանող հաստատություն: Սակայն այս մասին նա ոչ մի կոնկրետ փաստ չի բերում: Նա չի էլ կարող բերել: Այնուամենայնիվ նա մեղադրում է Հայ Եկեղեցուն և հայ հավատացյալին, անպատասխանատու կերպով:

Թե Եկեղեցու ծոցից և թե հավատացյալների շարքերից անցյալում դուրս են եկել սոցիալիստական հասարակարգի և Սովետական Հայրենիքի անհարազատ տարրեր, այդ ճիշտ է, բայց այդ եղել է հեռու անցյալում, եղել են հազվադեպ պարագաներ և այդպիսիները մեղադրվել են և մեղադրվում են այսօր էլ Հայ Եկեղեցու կողմից:

Ձեզ ծանոթ պետք է լինի, որ 1956 թվականի փետրվարին, Անթիլիասում երեք եպիսկոպոսներ, երբ հայ ժողովրդի և Հայրենիքի շահերի դեմ որոշ դիրքավորում ընդունեցին, գործիք դառնալով քաղաքական մի շարք բախտախնդիրների ձեռքում ամերիկյան դիվանագետների հովանավորության ներքո, Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ, նրանց վտարեց իր ծոցից՝ իբրև հերձվածողների: Ավելի քան երեք տարի է ահա, որ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը գլխավորում է այդ պայքարը նրանց դեմ

աննահանջ վճռականությամբ և պիտի շարունակի մինչև հաղթական վերջավորություն:

Նման անհարազատ տարրեր կամ ժողովրդի թշնամիներ դուրս են եկել նաև ոչ հավատացյալների շարքերից: Այդպիսիներ ժամանակին արդար կերպով ժողովրդի կողմից դիմակազերծվել են և պատժվել՝ որպես սովետական ժողովրդի թշնամիների և Սովետական Հայրենիքի դավաճանների:

Մենք ուրախությամբ պետք է ասենք, որ հատկապես վերջին տասնամյակների ընթացքում նման վատառողջ, ոչ հայրենասիրական արարքներ մեր Հայրենիքում երբեք չեն երևացել բարեբախտաբար Հայ Եկեղեցու ծոցում և հայ հոգևորականության շարքերում:

Ավելին Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին և հայ հավատացյալ ժողովուրդը, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի գլխավորությամբ և ղեկավարությամբ, ոչ միայն Մայր Հայրենիքում, այլ նաև Սփյուռքում կանգնած են եղել և կանգնած կլինեն մեր Սովետական Մայր Հայրենիքի և ժողովրդի գերագույն շահերի պաշտպանության դիրքերում: Ս. Էջմիածինը միշտ եղել է ճշմարիտ հայրենասիրության սրբազան օջախը: Դրա վերջին պայծառ փաստն է՝ հանգուցյալ երկու մեծ հոգևորականների՝ Գևորգ Զ Կաթողիկոսի և Գարեգին Ա Հեվսեփյանց Կաթողիկոսի հայրենասիրական գործունեությունը, որոնք հայրենական Մեծ պատերազմի դժնդակ օրերին, իրենց խոսքով և ծավալած գործունեությամբ, մի մարդու նման ոտքի հանեցին ամբողջ Հայ Եկեղեցուն, բոլոր հոգևորականներին և հավատացյալներին և նրանց միջոցներով Սովետական բանակին նվիրեցին մի ամբողջ տանկային շարասյուն՝ վտանգի մեջ եղող Սովետական Հայրենիքի փրկության համար:

Հայրենասիրական զգացմունքներով տոգորված՝ մեր հոգևորականներից շատերը, Սփյուռքի դժվարին պայմաններում, դրամատիրական-բուրժուական երկրներում, վերջին 40 տարիների ընթացքում անվախ կերպով կանգնած են եղել Սովետական Հայրենիքի կողքին՝ պայքարելով հանուն խաղաղության և ժողովուրդների բարեկամության: Նրանցից ոմանք համամարդկային այդ գաղափարների կենսագործման համար խոշտանգվել են, դատապարտվել և մեղադրվել՝ որպես համայնավար գործակալների, իսկ ոմանք էլ իրենց արյունն են թափել այդ պայքարի ճանապարհի վրա, ինչպես Հյուսիսային Ամերիկայի հայոց առաջնորդ նահատակ Ղևոնդ արքեպիսկոպոս Դուրյանը, որը 1934 թվականի դեկտեմբերի 25-ին Նյու Յորքում, օրը ցերեկով եկեղեցում սպանվեց հակասովետական քաղաքական գործակալների կողմից: 1935 թվականին Աթենքում նույնպիսի մարդկանց կողմից խոշտանգվեց ծերունազարդ Կարապետ արքեպիսկոպոս Մազլումյանը, իսկ 1950 թվականին Փարիզում՝ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմելյանը, խաղաղության համար մղած իր պայքարը վճարեց իր կյանքի գնով:

1956 թվականից սկսյալ հետաղիմությունը Բեյրութում հալածում և խոշտանգում է այն հոգևորականներին, որոնք հայրենասիրական գործունեություն են ծավալում և մնում են Էջմիածնի գլխավորած ազգային-եկեղեցական միասնության շարքերում:

Այսօր էլ այն ժամին, երբ Սևյանը, նստած իր խաղաղ տանը, հակակրոնական-հակաեկեղեցական իր հոդվածն է խմբագրում, Սփյուռքում մեր հոգևորականներից շատերը և մեր հավատացյալներից տասնյակ հազարավորներ, մեր Ս. Եկեղեցին և Ս. Էջմիածինը իրենց պայ-

քարի դրոշը դարձրած, դժվարին պայմանների մեջ, հալածանքի, բանտի և գնդակահարության սպառնալիքի տակ, մարտնչում են խաղաղության, ժողովուրդների ազատագրման ու բարեկամության և առաջադիմական գաղափարների հաղթանակի համար, անկաշառ հավատարմությամբ դեպի Սովետական մեր Մայր Հայրենիքը:

Ինչպես երեկ, նաև այսօր, Հայ Եկեղեցին և հայ հավատացյալները, ընդ հուր և ընդ ջուր են անցնում ճիշտ այն գաղափարների համար, որոնք թանկ են նաև Սևյանին: Այս տեսակետից մենք կասկածի տակ չենք դնում Սևյանի անկեղծությունը, բայց իրավունք ունենք պահանջելու նրանից և բոլոր մեր համաքաղաքացիներից, որ կասկածի տակ չդնեն մեր հայ հոգևորականների, հայ հավատացյալների քաղաքացիական, հայրենասիրական անկեղծությունը, նվիրվածությունը դեպի մեր Երկրի սոցիալիստական կարգերը և դեպի Սովետական մեր Հայրենիքի գերագույն շահերը:

Մենք խորհուրդ կտայինք Վ. Սևյանին՝ ուշադրությամբ ուսումնասիրել ՍՄԿՊ Կենտկոմի կողմից տրված «Բնակչության շրջանում գիտա-աթեիստական պրոպագանդա անցկացնելու սխալների մասին» 1954 թվականի նոյեմբերի 10-ի որոշումը, ուր խոսվում է նաև հետևյալը

«Չի կարելի մոռանալ, որ մեր երկրի հավատացյալ քաղաքացիները իրենց հիմնական զանգվածով նույնպես սոցիալիստական հասարակության ազնիվ աշխատավորներ են, որոնք ակտիվորեն մասնակցում են Երկրի կյանքին: Բայց այս մարդիկ գտնվում են տաբեր տեսակի կրոնական հավատալիքների ազդեցության տակ: Հավատացյալ մարդկանց, նրանց կրոնական զգացմունքների նկատմամբ չի կարելի վերաբերվել ինչ-որ արհամարհանքով և անվստահությամբ, առավել ևս ան-

միտ և վնասակար բան է կրոնական համոզմունքներ ունենալու պատճառով նրանց քաղաքական կասկածանքի տակ դնելը» («Ինչպես վարել գիտա-աթեիստական պրոպագանդան», Երևան, Հայպետհրատ, 1958թ, էջ 6:

Ահա թե ինչու Վ. Սևյանի հոդվածը խորապես վիրավորում է Հայ Եկեղեցու հոգևորականների և հայ հավատացյալների հայրենասիրական զգացմունքները:

Մենք ավելին կասեինք այդ մասին Սևյանի հոդվածը խորքում վնասում է Սովետական Հայրենիքի գերագույն շահերին, որովհետև հավատացյալ քաղաքացիներին անարդար կերպով ներկայացնելով որպես անբարոյական, հակաժողովրդական հանցագործների, դրանով կարող է շփոթեցնել հավատացյալների հայրենասիրական գիտակցությունը, նվիրվածությունը դեպի մեր հասարակարգը և Սովետական Պետությունը: Մեր կարծիքով՝ դա մեծ սխալ է Սովետական Հայրենիքի միասնության դեմ, մանավանդ այսօրվա միջազգային քաղաքական լարված պայմաններում, երբ մեր Հայրենիքի առաջ կարող է ստեղծվել ինքնապաշտպանության դիմելու ծանրակշիռ վիճակ, մեկ օրից մյուսը, արևմտյան իմպերիալիզմի ագրեսորների դեմ երբ մեր Սովետական Հայրենիքի բոլոր քաղաքացիները գերագույն զոհաբերությանց կհրավիրվեն, ինչպես այդ պատահեց 1941 թվականին ֆաշիստական ներխուժման ժամանակ, երբ ռուս, ուկրաինացի, վրացի, հայ, մահմեդական և այլ հարյուր հազարավոր հավատացյալներ իրենց հայրենասիրական պարտքը պատվով և փառքով կատարեցին իրենց աթեիստ ընկերների հետ միասին և նրանց ղեկավարության տակ:

Ինչ վերաբերվում է Հայ Եկեղեցուն, Սևյանը և նրա նման այլ մտածողներ կարող են վստահ լինել, որ հակառակ իրենց ենթադրությունների, հայ հոգևորականներն ու հավատացյալները, ինչպես միշտ անցյալում, նույնպես այսօր ևս կանգնած են ու կանգնած կմնան հայ ժողովրդի, Սովետական Հայրենիքի գերագույն շահերի պաշտպանության դիրքերում խոսքով և գործով և պատրաստ կլինեն զոհաբերության, գերագույն ժամին իրենց կյանքն իսկ նվիրելու հանուն մեր Հայրենիքի պաշտպանության, ոչ պակաս վճռականությամբ:

Ավելին Հայ Եկեղեցու կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ծավալած հայրենասիրական աշխատանքների շնորհիվ Հայ Եկեղեցին նույն ոգով կկազմակերպի նաև արտասահմանի ավելի քան մեր մեկ միլիոն հավատացյալներին և կղեկավարի նրանց գործակցությունը, ակտիվ աշխատանքը՝ ի խնդիր Սովետական Հայրենիքի պաշտպանության և հաղթանակի:

Հայկական ՍՍՌ Մինիստրների Սովետի մեծահարգ պր Նախագահ, ընդունեցեք մեր հարգալիր ողջույնը և անկեղծ բարեմաղթությունները Ձեր հայրենանվեր գործոց հաջողության համար:

ՎԱԶԳԵՆ ԱՌԱՋԻՆ
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀՊԱԱ, ֆոնդ N 883»:

ԽՈՍՈՒՄ ԵՆ ՆԱՄԱԿՆԵՐԸ

Ամենայն Հայոց կոթողիկոս Վազգեն Առաջինի արխիվը պահպանվում է Մայր Աթոռ ս. Էջմիածնի և ՀՀ կառավարության առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի ֆոնդում: Հայոց հայրապետի նամականին հարստացնում է նրա կողմից գրված և նրան հասցեագրված բացառիկ գիտական և պատմական արժեք ներկայացնող նամակները: Նամակ-փաստաթղթերը միավորում են բոլոր այն ապրումներն ու մտատիպարների փունջը, որոնք հատկանշական են եղել Վազգեն վեհափառի համար:

Միավասիկ, Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Գարեգին Խաչատուրյան Տրապիզոնցու 1956 թվականին Վազգեն վեհափառին հասցեագրված նամակը, որը իր ժամանակի ամենաբնորոշ և լիարժեք ծրագիրն է առաջարկում հայոց եկեղեցու բնականոն առաջընթացի համար: Փաստաթուղթը պահպանվում է կառավարության ֆոնդում N 823 ցուցակում:

«ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԹՅՈՒՐՔԻՈՅ
Գումգաբը – Իսթանպուլ

Ն.Ս. Օծություն
Տ.Տ. ՎԱԶԳԵՆ Ա Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին, Հայաստան

Շնորհազարդ և սիրելի Հայրապետ մեր,

Ուշացուցի պատասխանս՝ զոր հեռագրով խոստացեր էի տալ Ձեզ հրավեր-հեռագրին: Ներողամիտ եղեք: Մոռացում չէ պատճառը, ոչ էլ չկամություն: Կունենամ ահա պատեհությունը՝ կատարելու խոստումս:

Գիտեմ, թե չեն պակսիր Ձեզի բարի կամեցողություն, նախանձախնդրություն, ողջամտություն, իմաստություն և հոգվոյ եռանդ՝ փառավորելու այն սրբազան ու բարձրագույն պաշտոնը, որուն կոչուեցաք արժանավորապես Աստծոյ ողորմածությամբ և Ազգին լրության կամքով: Տերը ըլլայ Ձեզի զորավիգ: Իսկ մենք, որչափ կներեն պայմաններն ու տարիքը, ի պարտականություն հոժար ու պատրաստ ենք բերելու Ձեզի հաճույքով մեր համեստ ու հնարավոր աջակցությունը:

Ծանր է Ձեր պաշտոնը, որ սակայն կը թեթևանա քաղցրությամբը քրիստոսատուր լուծին: Դուք, վստահաբար, կը հավատաք ասոր: Կը հավատանք նաև մենք: Այս հավատքը բարձրացուց զՁեզ Լուսավորչի գահուն վրայ՝ դարերու կռանումով դարձած ամրակուռ և անսասան: Այս հավատքն է, որ Ձեր ջանքերը պիտի ընե արդյունառատ:

Չար է ժամանակը՝ լի փորձություններով. բայց բարիին է վերջնական հաղթանակը, զոր ձեռք բերելու համար պիտի գործենք ամեն կարելի զոհողություններով: *Քրիստոնեական կրոնն ընդհանրապես և Եկեղեցին մասնավորապես, տագնապ մը կանցունեն:* Արքնությամբ հսկել հարկ է չհանգելու համար աղետի մը անդարմանելի: Անշուշտ *«ՎԵՄԸ»* կը մնայ անշարժ, զի Անոր ընդհարուող կատաղի ալիքները պիտի փշրուին: Սակայն *«վեմերը»,* որոնք պիտի շարուին Անոր վրա կառուցանելու համար շենքը քրիստոնեական կրոնին, կը վախնամ, որ խարխլին: Ինձ մտածել կուտա Տիրոջ մարգա-

ռեական *կասկածը, թե «Որդի մարդոյ եկեալ՝ գտանիցե՞ արդյոք հավատս երկրի»:*

Չենք կարող խորանալ՝ քննելու համար խիղճերը: Բայց փոթորիկները դուրս կը թափեն խիճերն ու ավազները ծովափի վրա: Ահա մարդկային ծովը՝ ալեկոծուած չորս հովերեն աշխարհի: Եվ չենք տեսներ տիղմերը, որոնք կը վկայեն պղտորությունը խիղճերու հատակին:

Կայ, սիրելի Հայրապետ, *ներքին քրիստոնեությունը,* ուր կը ցոլայ լույսն Ավետարանին, այնքան պայծառ ու ջերմիկ: Կայ. սակայն, նաև *արտաքին քրիստոնեությունը,* որ մթագնած է դժբախտաբար՝ ի չգոյե Ավետարանի այդ լույսին, խավարն ունենալով միայն *«այս աշխարհին»*՝ մատնանշուած Յիսուսեն: Եվ մենք այդ աշխարհին մեջ կը տուայտինք ողբալիորեն: Հուսահատ հոռետեսի մը խոսքերը մի նկատեք ասոնք: Բայց ինչո՞ւ ունենանք ինքնախաբեություն որ օրօրե զմեզ հույսերով և ծալլե մեր ձեռքերը հանդարտ կուրծքերու վրա:

Վստահ ենք, թե ձեռնածալ մը չեք Դուք, և պիտի չըլլաք երբեք: Հետևող եք *«Քաջ Հովիվ»*-ին: Ահա ձեռք կը կարկառեք նաև մեզի, Ձեր ուխտակիցներուն, հայրապետական քաղցր ու համբուրելի հեղինակությամբ, որ մենք ալ մեր ձեռքերը երկարենք Ձեզի՝ *սպասավորելու* հոժար տրամադրությամբ:

Հեռու ենք Վեհեդ միջոցով. բայց անանջրպետ են սրտերը: Սրտակից ենք Ձեզի գործակցական բոլորանուեր և անկեղծ ոգիով: Կտրել, սակայն, միջոցը, որ ֆիզիկապես կը բաժանե զմեզ իրարմե, անհնար է *առայժմ:* Ինչ որ կարելի է, այդ գիրն է: Ան կը լեցնե միջոցը և կմոտեցնե հեռավորությունը: Թեև մերթ ասոր համար ալ արգելքներ պակաս չեն ըլլար: Եվ ահա Ձեր մոտ եմ տկար ու համեստ գրչովս:

Գուցե նախաբանս ավելորդ. զի անկասկած նույն խորհրդածություններն ու մտահոգությունները պաշարած պիտի ըլլան նաև Ձեզ: Բայց Դուք հավատքին հետ՝ որ մերն ալ է, ավյունն ևս ունիք երիտասարդության: Պիտի չընկրկիք՝ ունենալով Ձեզ հետ նաև մեզ, մեր դեռ չսպառած փոքր ուժերով: Եվ դուք ու մենք ունինք զԱստված ապավեն:

Եթե Աստված կամենա, և պայմաններն ըլլան թույլատու, պիտի առնեմ մեքենական թռիչք գալու Ձեզի, մեր պատուական Հայրապետին:

Պիտի գամ ուխտի Միածնաէջ սուրբ Սեղանին՝ վերանորոգելու իմ այն ուխտը, զոր ըրած եմ 33 տարիներ առաջ: Չեմ գիտեր որչափ հավատարիմ եմ մնացեր այդ ուխտին: Գիտե միայն Աստված: Եվ լավ է, որ այդպես եղած ըլլա: Միայն թե ունեցեր եմ բարոյական արիությունը՝ կոչելու զիս *«ծառայ անպիտան»:* Չեմ վարանիր այսօր ալ տալու այս վկայությունը իմ մասին՝ առանց համեստության ցույց մը ընելու մեղքը գործելու: Կուզեմ, սակայն, դեռ պահել ձեռքս արորադրող մաճին վրա՝ Հայաստանյայց Եկեղեցվոյ անդաստանին մեջ, չհանդիմանուելու համար մյուս կողմե իբրև *«Ծառայ չար և վատ»:* Դուք Դեռն ու Պետն եք այժմ այս Եկեղեցվոյն: Անույշ է ձայնը Ձեր հրավերին:

Եկեղեցվոյ *«Բարեկարգությունը»* և անոր «շինությունը», որ կը քարոզի ամեն կիրակի մեր տաճարներուն մեջ,– մեծագույն մտահոգություն է անշուշտ նաև ու մանավանդ Ձեր: Բարի կարգերը *վերահաստատել* Եկեղեցվոյ մեջ, ուր արդարև կան խանգարումներ կարգերու և կանոններու: Բայց այս անհրաժեշտ վերահաստատումը պայմանավորված է, ամեն բանե առաջ, *«բարեկարգյալ» եկեղեցականությունով:* Իսկ այս բարեկարգությու-

նը կիրականանայ միայն *անգտանելի* դարձած *կենդանի հավատքով:* Ճշմարտապես ապրուած և գործի վերածուած հավատքով: Պիտի գտնե՞ մարդու Որդին զայն մեր եկեղեցականության մեջ:

Արդ, խոնարհաբար հայտնեմ, թե Ձեր և մեր ընելիքը, բարեկարգական հարցի լուծման համար, պիտի ըլլայ.

Ա.– Պատրաստել *իսկական հոգևորականություն մը,* տոգորված *ներքին քրիստոնեության* զգացումներով և ըմբռնումներով, և կատարելապես գիտակից իրենց կոչումին, որ զոհաբերության ոգին է գերազանցորեն և անձնունայնացումը ըստ օրինակին Աստուածորդոյն: Անոր որ իր Ոսկի Ուռով Սանդարամետին մեհեանը կործանեց և հիմը դրաւ մեր շողընկալ Մայր Տաճարին, լուսախորան Ս. Էջմիածնին: Այս պարտի ըլլալ գերագույն կոչումը Մայր Աթոռի Հոգևոր ճեմարանին, գլուխգործոցը Երանաշնորհ Տ. Գեորգ Զ Մեծ Հայրապետին. Երուսաղեմի Ս. Յակոբյանց վանքի Ընծայարանը, վերյառնումը Օրմանեան-Դուրիանով հիմնարկուած Արմաշու Դպրեվանքին. Անթիլիասի Դպրեվանքին, Սահակ-Բաբգեն, Շահե-Գարեգինով կյանք առած: Չեմ գիտեր, կարժե հիշել նաև մեր նորահաստատ Ս. Խաչ Դպրեվանքը, Արմաշականեն ներշնչուած, որ հազիվ դեռ երկամեայ մանուկի մը կթոտ, բայց ոչ դեղնկոտ քայլերը կառնե:

Բ.– Քրիստոնեական կրոնի խորհուրդը հարկ է հաշտեցնել գիտության այն նուաճումներուն հետ, որոնք վարկածներ և հարակարծիքներ ըլլալե վեր ճշմարտություններ են,– այսինքն՝ հայտնություններ տիեզերական խորհուրդներու կամ գաղտնիքներու: Այս ուղիով մոտենալ նաև բարեկարգության հարցին: Առանց խորհրդի կրոնքը դատարկ է, և անոր վրա հաստատուած Եկեղեցվոյ շենքը փլչելու դատապարտուած:

Գ.– Պարզել խորհրդակատարությունները՝ պահելով անոնց ամբողջականությունը իրենց էական գիծերուն մեջ:

Դ.– Պահել կուսակրոնությունը վանքերու մեջ, Դուրեան սրբազանի առ Գեորգ Ե ուղղած թուղթին բովանդակության համաձայն: Ի մտի ունենալ, որ հոգևորականությունը հիմնուած է ծայրագույն զոհաբերության սկզբունքին վրա: Նկատի ունենալ նաև Պողոս առաքեալի տեսությունը կուսակրոնության և կանամբիության մասին: Այսուհանդերձ, *«որ կարողն է տանել՝ տարցի»:* Բարձրագույն զարգացում տալ նաև ամուսնացեալ քահանաներուն՝ ներշնչելով անոնց խոնարհության և ծառայության ոգին՝ չփնտռելու արժանիքը աստիճանի բարձրացումներուն մեջ: Տիրական վավերացում ունեցող *ծառայության* մեջ է արժանիքը:

Ե.– Մայր Աթոռիս մեջ պետք է գտնուին միշտ 12 եպիսկոպոսներ, ոչ ավելի, որոնք առնուազն ճեմարանական կրթություն ստացած, վկայուած հոգևոր կոչում ունեցած և խոնարհության ու անվառասիրության ոգիով տոգորված ըլլան՝ չստեղծելու համար Աթոռին շուրջ աշխարհիկ մրցակցություն: Իրենց գլխավոր զբաղումն ըլլայ հոգևոր մարզանքն ու մտավոր աշխատանքը մշակութային մարզին մեջ: Ասոնք պետք է կազմեն նաև Ս. Սինոդը կամ Գերագույն Հոգևոր Խորհուրդը:

Զ.– *Մեր աթոռներու իրավական դիրքը և փոխհարաբերությունը:* Տարակույսե վեր է, թե Մայր Աթոռն է գլուխ բոլոր մյուս աթոռներուն, որով և *«նախամեծար»* անոնցմե: Ան է *բնեռակետը* մեր հավատքի լույսին, իբրև իջման վայրը Միածնին: Եվ առաքելական է այդ հավատքը, քրիստոնեական ըլլալե հետո: Առանցքն է այն՝ հոգևոր միության: *Միակ Գլուխը՝ Մեկ Մարմինին:* Բոլոր մյուս

աթոռները անբաժան հոդերով կապված են իրարու և իրարմով այդ միակ մարմինին, իբրև անդամներն անոր: Այս տեսությամբ անհրաժեշտ է որոշապես գծել իրավասության սահմանը և աստիճանին չափը՝ «Կիլիկեան *Հայրապետության»:*

Կըսեմ *«Հայրապետություն»,* վասնզի ընդհանրական իմաստ ունեցող *Կաթողիկոսություն* բառը կը պատճաշի միայն Մայր Աթոռին: Իմ խոնարհ կարծիքով, ժամանակավրեպ է այս Հայրապետությունը, որ կը դառնա հաճախ կռուածաղիկ հայության մեջ:

Մենք պիտի ուզեինք ջնջուած տեսնել զայն բոլորովին կամ Պատրիարքության մը աստիճանին իջեցնել,– եթե մեր առջև չցցուեր այլ անպատեհություն մը մտահոգություն պատճառող:

Ահա այսօր կա Անթիլիասի դեմ *«կաթողիկե»* պիտակին տակ նույնքան պիտակ *«Կաթողիկոսություն Տանն Կիլիկիոյ»* մը: Եվ հռովմեադավան հայ Ծիրանավոր մը, որ կը հովանավորե զայն կամ կը վարե, միշտ պետրոսեան ուղկանը պատրաստ իր ձեռին մեջ:

Ուստի պարտինք տալ մեր այնտեղի Աթոռին ևս համազոր հեղինակություն մը, բայց հեղինակավոր աթոռակալով մը: Պիտի առաջարկեի այս աթոռակալիս տալ *«Հայրապետ Տանն Կիլիկիոյ»* տիտղոսը, կաթողիկոսական-ծիսական կարգ մը իրավասություններով, օրինակ՝ մյուռոնօրհնություն և եպիսկոպոսական ձեռնադրություն: Միայն թե ասոնք ալ կատարուին գիտությամբ և հավանությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Եվ Կիլիկիոյ Հայրապետն ալ, ընտրուելե հետո իր ժողովրդեն, իր ձեռնադրությունն ընդունի Ամենայն Հայոց Կաթողիկոսեն կամ անոր ներկայացուցչի նախագահությամբ և գոնե վեց եպիսկոպոսներու մասնակցությամբ:

Վարչական-մատակարարման գործառնության և կարգապահական խնդիրների մեջ Կիլիկիոյ Հայրապետը, ինչպես Երուսաղեմի և Կ. Պոլսոյ Պատրիարքները, կը պահե իր բացարձակ անկախությունը, ի հոգևորս միշտ կապ պահելով Մայր Աթոռի հետ: Ամենայն Հայոց Կաթողիկոսին կը վերապահուի կոնքեռի տվչութեանց Կիլիկիոյ Հայրապետին, ի նշան յայտարար ասոր ենթարկության ընդհանրական Կաթողիկոսին:

Թերևս ավելի պատշաճ ձև մը պիտի ըլլար Կիլիկիոյ Հայրապետին տալ *«Աթոռակից Հայրապետ Ամենայն Հայոց Կաթողիկոսին»* տիտղոսը:

Է.– Գտնել փորձել միջեկեղեցական հարաբերությանց գետին մը խիստ զգուշավոր մերձեցումով, առանց քաջալերելու միապետական ձգտումները որևէ եկեղեցիի կողմե: Միության միակ զոդը Քրիստոս է բոլոր եկեղեցիներուն միջև:

Ասոնց աթոռակալները հավասարազոր ծառայակիցներ են իրարու ի Քրիստոս: Այս աթոռներուն ներքին վարչական կազմակերպական անկախություններուն տրուած *«հերետիկոս»* կամ *«հերձուածող»* մակդիրները՝ քրիստոնեական ոգիին հակասող մեղապարտ որակումներ են:

Ը.– *Եկեղեցին Պետություններն բաժնուած* ըլլալու իրողությունը բանավոր է: Միայն թե Եկեղեցին իր սեփական ստորոգելիներով, ուրույն և ուղիղ կեցուածքով, մեծ նպաստ կարող է բերել *ուղղափառ* պետականության մը գաղափարին, այն բոլոր պետություններով, որոնք պիտի ուզեն լուծիլ *Աշխարհակրթության նոր կառույցքին՝*

Թ.– Պետք է շրջել կրոնական և հակակրոնական բոլոր նախապաշարումները և իրարանցախատ քարոզությունները:

Իրենց ամրակուռ պատուանդանին վրա հաստատուն պահել տիեզերական անսպառ և անհասանելի խորհուրդներու կամ գաղտնիքներու տեր՝ *Աստուծոյ* և անկե բխած և աստուածային հայտնությամբ ճշմարտուած *Անմահության գաղափարն ու հավատքը:* Բարձր բռնել երկինքն ու երկիրը իրարու կապող լուսեղեն *«Մանդուխը»:*

Ահա, Պատուական Հայրապետ մեր ընդհանրական, իմ խոնարհ մտածումներս հաղորդեցի Ձեզի ամփոփ ձևով: Ձեզ կը մնայ, եթե արժանի դատեք, նկատի առնելզանոնք:

Եթե երջանիկ պատեհությունն ունենանք, ուրիշ եղբայրակիցներով հավաքուիլ Մայր Աթոռի մեջ և Ձեր շուրջը, ավելի ընդարձակորեն և լրջորեն քննության և գնահատության կենթարկենք այն բոլոր խնդիրները, որոնք կապ ունին մեր Եկեղեցվոյ բարեկարգման, ուժեղացման և զարգացման հետ:

Կը տեսնեք, որ ուշ գրեցի, բայց երկար գրեցի: Սակայն անչափորեն ընդարձակ է տարողությունն այս խորհրդածություններուն, որոնք ավելիով Ձերն ալ են անտարակույս: Եվ պետք է ըլլան բոլոր անոնցը, որոնք սրտացավորեն կը մտահոգուին Կրոնի և Եկեղեցիի ապագայով:

Մեր արևը իր մայրամուտին մոտեցած է: Վեհիդ արևը երկար թող ըլլայ՝ առաջնորդելու Եկեղեցին բարեկարգական այս ուղիով և հառաջատուական ու հաստատուն քայլերով:

Միայն թե ունենաք և հետզհետե հասցնեք այս ոգիով զինուորյալ և սպառազինյալ փաղանգ մը հոգևորականներու, որպես աննախանձ գործակիցներ Ձեզի:

Կարոտն ունիմ Մայր Աթոռին և անոր նորընտիր աթոռակալին:

Եվ կը մնամ միշտ հավատարիմ ծառան Հայաստանյայց Եկեղեցիին, և հարգանաց համբուրիվ նորա Օծելոյն՝

Ձերդ Շնորհազայլության Աջույն,

ԳԱՐԵԳԻՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Պատրիարք Հայոց Թյուրքիոյ

ՏԱՐԵՄՈՒՏԻ ԱՅՍ ՕՐԸ ՍՐԲԱԶԱՆ Է

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը կաթողիկոսական աթոռ բարձրանալուց ի վեր իր հայրական խնամքի առարկա դարձրեց հոգևոր ճեմարանը, ցանկացավ այն կրկին հիմնադիր Գևորգ Դ կաթողիկոսի գծած շավղի մեջ դնել և իսկական հոգևոր կրթարանի կերպարանք հաղորդել, դարձնել «աղբիւր բացեալ գիտութեան Աստուծոյ»:

Անշուշտ, իմաստուն վեհափառը գիտակցում էր, որ նախկինում ճեմարանը եղել է քարերի անբարբառ մի կառույց, որին կենդանություն և իմաստ են ներշնչել երջանկահիշատակ Գևորգ Դ կաթողիկոսի հավատն ու հույսերը, նրա շուրջը համախմբված մանուկների տենչը և հայ ժողովրդի մի փոքրիկ, բանիմաց հատվածի վառ իղձերը, մինչդեռ այսօր ճեմարանը պետք է լինի խոսուն ու կենդանի մի մարմին, որի աղոթքի, խոկումի և կրոնաբույր մթնոլորտում, նրա ոգեկան լույսի մեջ, բարոյական նկարագրի կերտման անխոնջ աշխատասիրությամբ ու իմաստությամբ աճեն, պայծառակերպվեն վաղվա «լուսատու ճրագները»:

Տերը Հայոց հայրապետի մարմնի կանթեղի մեջ վառել էր գիտության, լուսավորության, նոր սերնդի հոգևոր կրթությանն ու դաստիարակությանը նվիրված խանդավառ և անխոնջ հոգի, ուստի, որպես մանկավարժական գործունեության հարուստ փորձ ու բեղմնավոր անցյալ

ունեցող անձնավորություն, մեծ հոգածություն էր ցուցաբերում այդ հաստատության նկատմամբ՝ ջանալով առավել բարձրացնել նրա ուսումնական մակարդակը և այն ապահովել արդի պահանջները բավարարող հոգևորական և աշխարհական դասախոսներով: Մինչդեռ ժամանակներին համընթաց քայլ պահելու համար նոր սերունդ է պետք կրթել:

Հայոց հայրապետի մտահոգությանն արձագանքեց հայոց եկեղեցուն, ժողովրդին և հայրենիքին անմնացորդ նվիրված Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, որն իր քահանայական ծառայության 25 տարիներին միշտ բարձր է պահել Մայր Աթոռ ս. Էջմիածնի հմայքը «հաչս մեր ժողովրդի և օտար շրջանակներու»: Այդ մտահոգությամբ՝ սրբազան հայրը Վազգեն վեհափառի սրբատառ կոնդակով Սևանի գեղատեսիլ ափին, եկեղեցիների հսկողության և հովանու ներքո, վերաբացում է հոգևոր դպրանոցը:

1990 թվականի սեպտեմբերի 28-ին վերանորոգված, բարեզարդված և կահավորված դպրանոցը ընդունում է տանտերերին և հյուրերին: Սևանի հոգևոր դպրանոցը արժանի է խորին ուշադրության և անկեղծ համակրության, որի լուսավոր առանցքը, հոգևոր շաղախը Մայր Աթոռ ս. Էջմիածնի անունն ու խորհուրդն է:

Վեհափառ հայրապետին, դպրատան սաներին, դասախոսներին շնորհավորելու և բարի գալուստ մաղթելու էին հրավիրվել մի շարք հոգևոր և աշխարհիկ հյուրեր՝ մշակույթի և գիտության մշակներ, ծնողներ, իշխանության ներկայացուցիչներ: Հայոց հայրապետը ուրախ է, որ հոգևոր դպրանոցը քայլ առ քայլ, հետևողականորեն կաշխատի իրագործել այն նպատակը, որի համար

կյանքի է կոչված: Նորին Սուրբ Օծությունը լիասիրտ շնորհավորում է հոգևոր դպրանոցը, օրհնում դասախոսական կազմին, իմաստալից խրատականով գիտության բանալին հանձնում ուսանողությանը:

«Ժողովրդի դաստիարակի մը նպատակն է հեղաշրջում բերել այդ ժողովրդին կյանքին մեջ դաստիարակչական աշխատանքով, կրթական միջոցներով՝ բարձրացնելու համար ժողովուրդը դեպի ավելի լուսավոր ու ազատ գիտակցության մը, դեպի ավելի բարոյական ըմբռնումներու հորիզոն մը, դեպի մշակութային ավելի բարձր արժեքներու հասկացողություն և նաև դեպի տնտեսական ավելի բարգավաճ և ընկերային ավելի արդար վիճակ մը:

Հայ ազգը հոգեկան արժեքներու ծնունդ է և հոգեկան արժեքներու ծնունդ տվող ժողովուրդ: Հայ ժողովուրդը այլ բանի չի տենչար, բայց միայն ունենալու ափ մը ազատ հող, բաժակ մը լույս և խաղաղ կյանք՝ շարունակելու համար իր առաքելությունը, արդարացնելու համար իր կոչումը աշխարհի ժողովուրդների մեծ ընտանիքին մեջ: Թե որպես Հայաստանյայց եկեղեցու սպասավոր, թե որպես հայ ժողովրդի հարազատ զավակ, կաղոթեմ և կհավատամ, թե բարիին ուժերը պիտի հաղթանակին աշխարհի վրա, և խաղաղության սպիտակ աղավնին պիտի չներկվի արյունով»:

Տարեմուտի այս օրն անկրկնելի է, քանզի սկզբնավորվում է հորդացյալ հոգիների սերմանումը բարի հունդերով:

Նորընտիր սաները դպրանոցի կամարների տակ լույս, ջերմություն, հավատքի կայծ ստանալով՝ հետագայում պիտի լուսավորեն, ջերմացնեն իրենց շրջապատն ու մարդկանց սրտերը: Տարիներ հետո գիտելիքներ ամբարած այդ պատանիները պիտի ս. Սեղան բարձրանան, որպեսզի «ուխտեմ կալ մնալ զամենայն աւուրս կենաց իմոց սպասաւոր հաւատարիմ եւ աւանդապահ Սրբոյ և միոյ Առաքելական Եկեղեցւոյս Հայաստանեայց, եւ հնազանդ ի հոգեւորս յամենայնի, նախամեծար Մայր Աթոռ Սրբոյ Էջմիածնի»:

Պատանիների հուզված ելույթները, անմեղ հայացքները, ժպտուն, բարի աչքերը հավաստիացնում և հույս են ներշնչում, որ նրանք իրենց նվիրումով, հավատքով ու ջանասիրությամբ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու վաղվա մշակներն են լինելու, որոնց շնորհիվ հայոց բոլոր խոնարհված վանքերն ու եկեղեցիները պիտի վերականգնվեն և վերածվեն Աստծո տաճարների: Եվ այնժամ ապագա վարքագիրներն ու պատմաբանները շնորհաշատ Վազգեն վեհափառին, որ հոգ է տարել, որպեսզի գիտության և դպրության այս ածուն մշտապես դալար մնա, կնվիրեն իրենց սիրո, հիացմունքի, երախտագիտության, երազանքի փունջը՝ իբրև երախտիքի խոսք:

Ավարտվում է Սևանի հոգևոր դպրանոցի նոր ուսումնական տարվա հանդիսությունը Հայոց հայրապետի «Պահպանիչով»: Հանդիսության ներկաները ողջունում են ու նորանոր հաջողություններ մաղթում կրթական հաստատությանը, որ հետագա տարիները նույնքան և ավելի արդյունավետ լինեն՝ ի մխիթարություն վեհափառ հայրապետի սրտին, հուրախություն հայ ժողովրդի և ի պայծառություն Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Մասնակիցները գնում են բարձր տրամադրությամբ, խանդավառված, իսկ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազ-

գեն Առաջինը մնում է բազում մտահղացումների իրագործման մեծ ու փոքր հոգսերի հետ: Դեռ որքան ծրագրեր, անելիքներ կան, որ հայոց եկեղեցու փառքը և դարերի խորհուրդը պիտի ներկայացնեն աշխարհին ոչ միայն իբրև պատմական իրողություն, այլև ապրող, կենդանի կառույց:

ԳՅՈՒՄՐԻՈՒՄ ԲԱՑՎԵՑ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆ

1992 թվականի հոկտեմբերի 10-ը Գյումրիի դարավոր պատմության մեջ մի փառավոր էջ ևս բացեց. Վազգեն վեհափառ հայրապետի գլխավորությամբ և Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթյանի նախաձեռնությամբ հիմք դրվեց Գյումրիի հոգևոր ճեմարանին: Բացման արարողությանը ներկա էր Երուսաղեմի ամենապատիվ պատրիարք Գերաշնորհ տեր Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, որին վերապահվեց ճեմարանի գիտության բանալին սաներին հանձնելու պատիվը:

Անցնող 70 տարիների ընթացքում քաղաքական, ընկերային, գաղափարագիտական և այլ պատճառներ, որոնք հակառակ էին քրիստոնեության առողջ և մաքուր կենսակերպին, ստեղծեցին բաժանումներ, անհասկացողության և անհանդուրժողության անդունդ բացեցին ժողովրդի ու եկեղեցու միջև, որը, դժբախտաբար, տկարացրեց քրիստոնեական ոգին, ժողովրդին հեռացրեց եկեղեցուց:

Այսօր, երբ Հայաստանի Հանրապետությունը կերտում է իր անկախությունը, և հայ ժողովրդի դարավոր երազանքն իրականություն է դառնում, նորովի է իմաստավորվում ԱԶԳ, ԵԿԵՂԵՑԻ, ՊԵՏՈՒԹՅՈՒՆ սրբազան երրորդությունը, որոնց շուրջ կարող է համախմբվել հանրությունը: Շիրակի թեմի առաջնորդ Գրիգորիս ար-

քեպիսկոպոս Բունիաթյանը չէր կարող մի կողմ կանգնել, երբ շրջապատում ամեն բան կարիք ունի նորոգման ու թարմացման:

Հայոց Առաքելական Եկեղեցին այսօր, ավելի քան երբևէ, պահանջ ունի հավատավոր, կիրթ, գիտնական ու նվիրյալ սպասավորների. նման գիտակցությամբ էր Շիրակում հիմնադրվում հոգևոր կրթական մի նոր օջախ, որի բացմանը սրբազան առաջնորդը հետևյալ մի քանի կետերն ընդգծեց. «Շիրակ աշխարհի հոգևոր կրթօջախի բացմանը ներկա յուրաքանչյուր անհատ այս նվիրական գործի ոչ միայն մասնակիցը, այլև իրականացնողն է: Դուրս գալով անցյալի կաշկանդումներից, որոնք տկարացրին և թուլացրին հոգևոր կյանքը, այսօր եկեղեցին մի նոր փուլ է թևակոխել, որը հատկանշվում է ավելի ազատ գործունեությամբ, ազատ ծրագրեր, մտահղացումներ իրագործելու հնարավորությամբ:

Հայ Առաքելական Եկեղեցին մայր հայրենիքի հողի վրա հիմնեցին Քրիստոսի երկու աշակերտները՝ Թադեոսը և Բարդուղիմեոսը, որոնք կարողացան արմատավորել այն եկեղեցին, որի հիմները կերտեցին Ս. Գրիգոր Լուսավորիչը, Տրդատ Երրորդ թագավորը, Ս. Ներսես Մեծը, Սուրբ Սահակը, Մեսրոպ Մաշտոցը, ոսկե դարի մեր մեծ թարգմանիչները, փիլիսոփաները, գրողները: Հայոց Առաքելահիմն Եկեղեցին ճոխանալով ու շարունակաբար հարստանալով՝ հասավ մեր օրերը:

Պատմական պարտականություն է բաժին ընկել իմ սերնդին. հայոց տկարացած եկեղեցին վերստին հզորացնել: Ժամանակի բերած ավերը պատճառ դարձավ, որ գյուղերն ու շրջանները մնան անհովիվ, անքահանա, իսկ եկեղեցիներն այնպիսի անմխիթար վիճակում են գտնվում, որոնք հիմնովին վերանորոգման կարիք են

զգում: Ո՞վ պետք է իրագործի այս ամենը. անշուշտ, ժողովուրդը, իսկ ժողովրդին հոգևոր առաջնորդներ են հարկավոր, նվիրյալ, գիտակից, զարգացած, ծառայության և հնազանդության ոգի ունեցող զինվորներ:

Եվ ահա, Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի օրհնությամբ, հարմար նկատվեց, որպեսզի Շիրակի թեմը նույնպես ունենա հոգևոր ճեմարան: Այստեղ թվով տասը սաներ կանգնած են ձեր առջև: Վեցը Էջմիածնից են եկել իրենց հոգևոր ծնողի և դաստիարակի՝ Հովսեփ քահանա Հակոբյանի հետ, իսկ չորսը՝ Գյումրիից են, որոնք եկեղեցում ծառայել են, շապիկ հագել: Այսպես համեստորեն հիմքն է դրվում Շիրակի հոգևոր ճեմարանի»:

Շիրակի թեմի թեմական խորհրդի ատենապետ Մարտին Թադևոսյանն իր ելույթում ներկայացրեց պահի հանդիսավորությունը՝ մասնավորաբար նշելով. «Շիրակ աշխարհի ավերակ 17 շրջաններից 14-ն ընդգրկվում են Շիրակի թեմի մեջ, որի առաջնորդն է Գրիգորիս Բունիաթյանը: Ահեղ երկրաշարժից հետո Գրիգորիս սրբազանը, ստանձնելով Շիրակի թեմի առաջնորդությունը, մեծ բեռ վերցրեց իր ուսերին: Ահավոր երկրաշարժի ժամանակ հազարավոր զոհեր եղան, գյումրեցին կորցրեց ամեն բան՝ տուն, տարիների վաստակ, աշխատանք, ապահովություն, վերապրողներից շատերն էլ կորցրեցին հավատը, հույսը: Եվ ահա այսօր Շիրակի թեմում հիմնադրվող այս հոգևոր կրթօջախը սփոփանքն է մեր կյանքի, իսկ նրա սաները կլինեն լուսարարները լուսավորչի կանթեղի և լույս կբաժանեն, մարդկանց կվերադարձնեն իրենց կորցրած հավատը»:

Այնուհետև, վերջում ճեմարանի բացման արարողությանը իր ողջույնի և օրհնության խոսքն ասաց Երուսաղե-

մի ամենապատիվ պատրիարք, գերաշնորհ Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը. «Հատկանշական է, որ հոգևոր ճեմարան է հիմնադրվում մի այնպիսի ժամանակ, երբ բնությունը քարուքանդ է արել ամեն բան Շիրակ աշխարհում: Որքան զոհեր եղան, որքան մարդիկ մեռան՝ չիմանալով, թե ի՞նչ պատահեց իրենց հետո, ինչո՞ւ պատահեց:

Ոչ միայն Շիրակ աշխարհում, այլև ողջ հանրապետությունում դժվարին կացություն է: Մի կողմում՝ պատերազմ, շրջափակում, մահ, մյուս կողմում՝ լույս, դպրանոց, եկեղեցիների վերաբացում: Հայ ժողովուրդն աշխարհի իմաստասիրությանը, լույսին և գիտությանը փարված ժողովուրդների թվին է պատկանում, որ կարող է ամենածանր պահին իսկ չմոռանալ ոգու շինարարությունը:

Այսպիսի ծանր մի պահի Շիրակի թեմում հոգևոր ճեմարան բացելը կնշանակի, որ Գրիգորիս սրբազանը կոչված է իր ժողովրդի լուսավորության և եկեղեցու շինության սրբազան գործին: Եվ շնորհիվ այս բարի ձեռնարկության՝ տասնյակի չափ այս մանուկները գտան իրար, որոնք միայն հունդերն են, որ պիտի ընկնեն պարարտ հողի մեջ, որպեսզի կանաչեն և մեկին երեսուն, վաթսուն, հարյուր արդյունք տան: Տարիներ հետո այս մանուկները իրենց ամբարած գիտելիքները պիտի փոխանցեն հաջորդ սերունդներին: Նրանք պիտի քաջ գիտակցեն, որ մեր եկեղեցին, մեր ժողովուրդը ազնիվ ծառայողների պետք ունեն հատկապես այս օրերին:

Գրիգորիս սրբազանի ձեռնարկած գործը բարի է և ինքնին օրհնված: Թող Աստված պահապան լինի այս բարի գործի բարգավաճմանը. ամեն»:

Ավարտվում է Շիրակի թեմում հոգևոր դպրանոցի բացման արարողությունը: Մեծապատիվ հյուրերը, հանդիսության մասնակիցները հեռանում են, անշուշտ, խանդավառված, բարձր տրամադրությամբ, իսկ Գրիգորիս սրբազանը, կյանքի կոչված հոգևոր դպրանոցի դասախոսական կազմը մնում են բազում մեծ ու փոքր հոգսերի հետ:

Հոգևոր դպրանոց հիմնելը մի հարց է, պահելը, ոտքի կանգնեցնելը, նյութական ու հոգևոր ամենօրյա կարիքները հոգալը՝ մի այլ, ծանր աշխատանք է: Վազգեն վեհափառը, Շիրակի թեմի առաջնորդը և նրա գործակիցները, անշուշտ, գիտակցում են իրենց նախաձեռնած գործի ողջ դժվարությունը:

Ժամանակ կանցնի, տարիները կբոլորեն, թե Աստված կամենա, Շիրակի նորաբաց կրթօջախից առաջին շրջանավարտները դուրս կգան, նրանց կհաջորդեն նորերը, հայոց ավերակ եկեղեցիները նորից Աստծո տուն կդառնան, հոգևոր եկեղեցական կյանքը զարթոնք կապրի, և այնժամ այսօրվա հանդիսությունը՝ դպրանոցի բացումը, տարիների հեռվից առավել կիմաստավորվի:

Մաղթելով Շիրակի թեմի նորաբաց հոգևոր դպրանոցին հաջողություն՝ հավատանք նրա պայծառ ապագայի հիմքերի ամրապնդմանը օրերի հետ:

Իսկ ներկաներից յուրաքանչյուրը լի էր հավատով, հույսով և լավատեսությամբ, քանզի նրանց առջև կանգնած պատանիները, հավատարիմ մեր պապերի լույս հավատքին, վաղվա հայրենիքը կերտողներն են: Նրանք են, որ երկյուղածությամբ պիտի պահպանեն մեր նվիրական ավանդույթները, մեծասքանչ մայրենի լեզուն և հայ մշակույթի արժեքները, պիտի զարկ տան հայ գրականությանն ու ազգային մամուլին, հաստատուն ու

ծաղկյալ պահեն հայոց դպրոցները, զորավիգ լինեն հայրենասիրական, բարեգործական, եկեղեցական կազմակերպություններին՝ գերագույն նպատակ ունենալով կենդանի պահել մեր ժողովրդի ինքնագիտակցությունը, հայկական շունչը, հայրենաբաղձությունը և մեր ազգային արդար իղձերի իրականացման ուխտը:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

ՄՏՈՐՈՒՄՆԵՐ ՆՈՐ ՏԱՐՎԱ ՇԵՄԻՆ

Եթե ես անձամբ առիթ ու երջանկություն չունենայի ճանաչելու Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինին ու հեռվից հեռու հեռուստատեսությամբ դիտեի նրա հանդիպումը Խորհրդային Միության մայրաքաղաքի «Մոսկվա» հյուրանոցում հացադուլ հայտարարած ԽՍՀՄ պատգամավորներ՝ հայորդի գրող Զորի Բալայանի, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, ԽՍՀՄ ժողովրդական դերասան Սոս Սարգսյանի, Արցախի զավակներ Վաչագան Գրիգորյանի և Սեմյոն Բաբայանի հետ, կհառներ իմ առջև երկրի, ժողովրդի, եկեղեցու և համայն մարդկության հոգսերով ապրող, տառապող, մտահոգվող քսաներորդ դարի կորովի Մարդքաղաքացին, Ազգային գործիչը, հոգևոր առաջնորդը: Ու ես վստահ եմ, բոլոր այն մարդիկ, ովքեր երբեք չեն տեսել Վազգեն Առաջին Հայրապետին, բայց առիթ են ունեցել տեղեկանալու, ծանոթանալու նրա գահակալության 35 տարիներին կատարած հայրենանվեր գործերին՝ իրենց մտքի ու ոգու աչքերով ավելի պարզ ու ամբողջական կտեսնեն Հայոց Հայրապետին որպես եկեղեցու նախանձախնդիր առաջնորդի, ժողովրդի բախտով ու մտահոգություններով ապրող քաղաքագետի, որ համայն հայության համար նրա ծավալած գործունեությունը դար-

ձել է ճշմարիտ ու կենդանի, իր խոսքերով ասած՝ «Գանձարան հոգւոյս ժողովրդեան հայոց»:

Հայ ժողովրդի գոյատևման և հարատևման հարցը պտտվում է մի սրբազան երրորդության՝ Ազգ, Եկեղեցի, Պետություն առանցքի շուրջ, որ աստվածության պես մեր էության արմատն է ու կյանքի գերագույն նպատակը: Հանրահայտ են հայ ժողովրդի պատմության տեսանելի փաստերը: Սխալ քաղաքականությունը ոչ միայն չստեղծեց կենտրոնական ուժեղ իշխանություն, այլև բերեց բազում կորուստներ: Հայաստանի թուլացումը գրգռեց հզոր հարևանների ախորժակը:

Տարօրինակ, երիցս սուրբ առեղծվածային ժողովուրդ եղավ հայ ազգը՝ օժտված փորձություններին հակազդելու, դիմակայելու հրաշագործ ուժով: Ո՞րն է այն նոր գործոնը, որ միասնական կամքի մեջ պետք է ձուլի և՛ հոգևորականին, և՛ ժողովրդին, և՛ ղեկավարին: Ահա հարցերի հարցը: Այսօր մենք գործ ունենք նոր հայության հետ, որը որակապես տարբերվում է ոչ միայն մինչհոկտեմբերյան հեղափոխության ժամանակաշրջանի քրիստոնյա հայությունից, ոչ միայն 70 տարիների ժամանակաշրջանի, այլև վերջին երկու տարվա ընթացքում հասունացած հայությունից: Եվ ծնվում են նոր հարցեր, ստիպում դիտել, ուսումնասիրել, հասկանալ և ապագայի մեջ եթե ոչ ամբողջական պատկերը, գոնե նրա արմատները ճշտել, որի համար ժամանակ է պետք: Իսկ համայն հայության առջև դրված առաջին պայմանն է՝ թոթափել հին մտայնությունը, որը դյուրին չէ, քանզի ապրում ենք պատմական փոխանցման շրջան:

Հայ ժողովրդի մեջ վարդանանց ոգին նորից հարություն առավ, պարզեց պայքարի դրոշը, որ ազգի ընդերքում քնած ուժերն արթնանան և նպատակամղվեն կենսական խնդիրներ լուծելու անհրաժեշտության: Այս մտորումներով նոր տարվա նախաշեմին հարցազրույց ունեցանք Ամենայն Հայոց կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Առաջինի հետ:

– Վեհափառ Տեր, տարիներ շարունակ հայ ժողովրդի մեջ մեռցրին հավատը, այն սրբությունը, որը նրան հայ է պահել: Նոր ժամանակներ են: Ի՞նչ է անում եկեղեցին՝ հավատը զորացնելու, հոգևոր ներքին կյանքը աշխուժացնելու համար: Ինչպիսի՞ն է պատկերը հայ եկեղեցում: Ի՞նչ հիմքերի վրա է դրված մշակութային և հոգևոր կյանքը:

– Հայոց կրոնական գրականությունը քրիստոնեական աշխարհի հարուստ գրականություններից մեկն է: Սա փաստ է և իրողություն, և հազիվ թե հարկ լինի ապացուցել: Սակայն վերջին 70 տարիների ընթացքում ժամանակներ եղան, որ թվում էր, թե անցյալի ստեղծագործ ոգին ցամաքել է, որը տագնապ, տարակույս ու մտահոգություն էր հարուցում յուրաքանչյուր մտածող-հավատացյալ հայի սրտում: Թեև ժողովուրդը մշակույթի, գիտության, արտադրության ճյուղերում վիթխարի ճիգերի շնորհիվ լցրեց այդ բացը, մեղմեց խզումը:

Վերջապես հայ ժողովրդի համար բացվում են լուսավոր ժամանակներ: Դեմոկրատական ուժերի հաղթանակը հույս է ներշնչում կրոնական մշակութային կյանքն աշխուժացնելու, որ նախնիների մեր ոգեղեն արժեքները շարունակվեն, և մեսրոպյան տառերով ու մեսրոպյան հանճարով, մեսրոպյան խորությամբ և մեսրոպյան հավատքով գրվեն նոր պատմության էջեր՝ ուղեցույց ունենալով Գրիգոր Լուսավորչի մշտավառ ջահը:

Դավանաբանական հարցերում որոշ աշխատանքներ նախկինում կատարվել են: «Արմատ հաւատոյ», «Կնիք

հաւատոյ» հանրագիտարանային բնույթի գործերը, որ Օձնեցուց սկսած մինչև Գրիգոր Տաթևացի շարունակաբար հղկվել ու համալրվել են (ինչպես նաև Օրմանյանի «Հայոց եկեղեցի» աշխատությունը), որոշ գաղափար տալիս են հայ եկեղեցու դավանաբանական ուղղության մասին: Սակայն այսօր այդ ամենը թերի է, անկատար, շատ բան հնացած է, բազմաթիվ հարցեր ամբողջական լուծում չեն ստացել...

Իսկ մեր աստվածաբանական միտքն ավելի անմխիթար վիճակում է: Այս բնագավառում, անցյալում որոշ անջատ, պատահական, կցկտուր աշխատանքներ արվել են: Բայց 20-րդ դարի բարձունքից երբ նայում ենք համաշխարհային աստվածաբանական մտքի նվաճումներին հայ եկեղեցու բերած ավանդին, ստիպված ենք խոստովանել, որ հայոց բաժինն այս բնագավառում չափազանց համեստ է, աննշան: Հայ հավատացյալ ընթերցողն այսօր օդի պես կարիք ունի կրոնական գրքի, էլ չենք խոսում հոգևորականների մասին: Դրա համար մի անգամ վերահրատարակեցինք «Նոր կտակարանը»:

Ընթացքի մեջ է աշխարհաբար «Աստվածաշունչը», նպատակ ունենք նորացնել, թարմացնել, համալրել, ամբողջացնել հայ եկեղեցու դավանաբանական ստույգ, ճշգրիտ վարդապետությունը, որոնք հայ ժողովրդի, մշակույթի, եկեղեցու համար բացառիկ նշանակություն ունեն: Ստեղծվում են նոր թեմեր, կյանքի են կոչվում նոր եկեղեցիներ, որոնց համար մեծ թվով պատրաստված հոգևորականների կարիք ունենք: Այդ նպատակով Սևանում վերաբացեցինք Խրիմյան Հայրիկի հիմնադրած դպրանոցը:

– Դուք ինչպե՞ս եք մեկնաբանում հայ ժողովրդի լինելիության դժվարին խորհուրդը:

– Ուզում եմ հիշել երեց Էրիգ Մաքեյի հուշերից մի բեկոր՝ Ջորջ Բայրոնի մասին. «Բայրոնը սիրում ու հարգում էր այն բոլոր ազգերին, որոնց սիրելի էր անկախության ոգին: Այս էր գուցե հայերի նկատմամբ ունեցած նրա հիացմունքի բանալին, որովհետև Բայրոնը հայերի մեջ տեսավ մի այնպիսի ազգ, որին բռնությունն ու ազգության կորուստը չէր կարող աղավաղել կամ ընկճել, մի ազգ, որ հակառակ պարտության՝ անաղարտ էր պահել իր ավանդությունների վեհությունը, համոզմունքների գեղեցկությունը»:

Հայոց չորսհազարամյա պատմության նշանաբանը, հարատևման ամփոփագիրն ու խորհրդանիշը կարող են լինել Մաքեյի բնութագրումները: Հայ ժողովուրդը, կենտրոնացնելով իր բոլոր առողջ ուժերը, կարող է իրագործել ազգօգուտ ու եկեղեցաշեն ծրագրեր: Նոր եռանդով կառուցել, հերկել, ստեղծագործել հավերժ ծաղկուն պահելու համար նշխարաչափ այս հողակտորը, որ համայն հայության հույսն է և ապավենը:

– Վեհափառ Տեր, անհանգիստ մեկ տարի ևս հայ ժողովրդի համար պատմություն դարձավ, որ բազմաթիվ կորուստներ ու ձեռքբերումներ ունեցավ: Ի՞նչ կցանկանայիք ասել անցնող տարվա և գալիք Ամանորի մասին: Ժողովուրդը Ձեր շուրթերով արտաբերված յուրաքանչյուր իմաստուն հորդորն ու օրհնանքը ընդունում է սիրով ու երկյուղածությամբ:

– Հիրավի, որքան էլ ծանր ժամանակներ ենք ապրում և ականատես ենք բազում դժվարությունների, սակայն չտեսնել նաև մեծ ու փոքր հաղթանակները, հուսադրիչ առողջ ծիլերը, նշանակում է ոչինչ չտեսնել:

Ես լավատես եմ: Եվ հավատում եմ, որ հայ ժողովուրդը, թեկուզև դժվարին պայմաններում, կհաղթահարի և

դուրս կգա խաղաղ և ապահով հանգրվան: Հույս ունեմ, որ գալիք՝ 1991 թվականին հայ ժողովրդի համար հաջողությունների, աշխատանքի, ստեղծագործության և խաղաղության տարի կլինի: Թող երջանկություն, լավատեսություն և հանդարտություն մտնի յուրաքանչյուր հայ տան շեմից ներս:

– Ո՞րն է Ձեր քաղաքական հավատո հանգանակը:

– Ես հավատում եմ, որ փրկության գլխավոր ուղին և, հավանաբար, միակ ուղին, աշխարհում բարեհաճության ու վստահության պայմաններ ստեղծելն է: Դրան կարող է նպաստել տարբեր երկրների և ժողովուրդների, տարբեր ցեղերի և դավանանքների խաղաղ գոյակցության քաղաքականությունը: Տարբեր գաղափարախոսություններ ունեցող երկրների փոխադարձ վստահությունն ու համագործակցությունը համընդհանուր խաղաղության հասնելու բարենպաստ պայմաններ կստեղծեն:

Մարդիկ պարտավոր են հասկանալ, որ իրենց անհրաժեշտ է խաղաղության մեջ ապրելու բանաձև սահմանել: Հակառակ դեպքում մեզ սպառնում է օմնիցիդը՝ Երկրի վրա ամեն գոյավորի ոչնչացումը: Հենց այդպիսի մտածողության, այդպիսի հոգեբանության որդեգրումն եմ համարում ազգային եսամոլության, կրոնական ծայրահեղականության, սոցիալական ճնշումների հաղթահարման անհրաժեշտ պայման: Նրանք են այն մաղձոտ արմատները, որոնք դեռևս թունավորում են ժողովուրդների կյանքը և նպաստում պատերազմների ծագմանը: Քաղաքագետների շարքում դեռևս կան «ավերակների ճարտարապետներ», բայց ապագան նրանցը չէ: Ապագան շինարարներինն է:

– Իսկ Դուք ինչո՞վ եք զբաղվում հոգևորականի Ձեր բազում հոգսերից դուրս, ինչո՞վ եք հրապուրվում:

– Ընթերցանությամբ՝ հայ և համաշխարհային դասականներ, խորհրդային և արտասահմանյան ժամանակակից հեղինակներ: Եվ երաժշտությամբ:

Ամենից շատ սիրում եմ ներդաշնակ Մոցարտին, որը, իմ կարծիքով, մի ամբողջ կոնսերվատորիա է: Նա այն կատարյալ ու պայծառ անհատականությունն է, որի ավանդները ժառանգեց կոմպոզիտորների ու երաժիշտ-տեսաբանների, կատարողների հաջորդող սերունդների մի փայլուն կաճառ: Հավաքում եմ նրա ստեղծագործությունների ձայնագրությունները խորհրդային և արտասահմանյան լավագույն երաժիշտների կատարմամբ:

«ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆՆ Է ՀՈԳԻՈՅՍ»

Հայաստանյայց եկեղեցին քրիստոնեական եկեղեցու պատմության մեջ նշանակալի տեղ է գրավում: Բավական է ասել, որ աշխարհում առաջինը Հայաստանում քրիստոնեությունն ընդունվեց և ճանաչվեց պետական կրոն: Եվ առաջին քրիստոնեական եկեղեցիներն ու նվիրապետությունը, բնականաբար, Հայաստանում սկզբնավորվեցին ու ձևավորվեցին, դրան գումարած՝ կրոնական գրականությունը, նկարչությունը, արարողակարգը, վարդապետությունը և այլ ստորոգելիներ: Եթե ընդհանուր եկեղեցու պատմության մեջ Հայաստանյայց եկեղեցու դերն ու նշանակությունը և ներդրումը բավականին շոշափելի են, ապա հայ ժողովրդի պատմության ամենաճակատագրական պահերին այն գրեթե վճռորոշ է ու բացառիկ, չխոսելով արդեն ազգային մշակույթի սկզբնավորման ու զարգացման մասին, որոնց ուղղակի խրախուսողն ու նախաձեռնողը հանդիսացավ վերջին երկու հազարամյակում Հայաստանյայց եկեղեցին:

Հայ եկեղեցին իր խորհրդով ու սրբազան ավանդություններով, իր հոգևոր ժառանգությամբ, ծեսերով ու արարողություններով հսկայական դեր ու նշանակություն է ունեցել այդ սրբազան հարստությունը հայեցի պահելու համար ինչպես հայրենի երկրում, այնպես էլ օտար հորիզոնների տակ: Ոչ մի եկեղեցի այնպես չի

ձուլված իր ժողովրդի հետ, ինչպես Հայաստանյայց եկեղեցին: Սակայն Ստալինի բռնատիրական և անմարդկային քաղաքականության տարիներին փակվեցին, քարուքանդ արվեցին եկեղեցիներ, սպանվեցին կամ աքսորվեցին հազարավոր հոգևորականներ, և ինչպես ժողովուրդը, այնպես էլ եկեղեցին զգուշավորվեց, ներփակվեց իր պատյանի մեջ և մի կերպ կարողացավ պահպանել գոյությունը: Բարեբախտաբար, այսօր նոր ժամանակներ են եկել, և եկեղեցին հնարավորություն է ստացել ժողովրդի հետ իր ձայնը բարձրացնել որպես ինքնուրույն իրավական միավոր: Այսօր հայ եկեղեցին կանգնած է նորացման շեմին, և այդ առիթով հարցազրույց կայացավ Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Առաջինի հետ:

– *Վեհափառ Տեր, Դուք ընտրվեցիք ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավոր և մասնակցեցիք նրա առաջին նստաշրջանին: Ինչպիսի՞ տպավորություններ ունեցաք դրանից: Ի՞նչ նպատակամղվածությամբ էին մեր հայ պատգամավորները ներկայացել նստաշրջանին:*

– Անշուշտ, մեծ և անհրաժեշտ երևույթ է, երբ եկեղեցին մասնակցում է երկրի պառլամենտական աշխատանքներին և իր ձայնը բարձրացնում երկրի և ժողովրդի ճակատագրին վերաբերող հարցերին, իր ներդրումը բերում այնքան կարևոր ազգային հարցին:

Ես համոզվեցի, որ «վերակառուցում», «ժողովրդավարություն» արտահայտությունները լոկ խոսքեր չեն, այլ իրական համարձակամղիչ նոր գաղափարներ, նոր որոնումներ: Վերակառուցման մասին շատ է խոսվում և պիտի խոսվի՝ անշուշտ տարբեր տեսանկյուններից: Հիմնականը, սակայն, մենք կարծում ենք, թե «վերակառու-

ցում», «ժողովրդավարություն» ասելով՝ պետք է հասկանանք ընկերվարական գաղափարախոսության կենսագործման մեթոդների վերակառուցում:

Անձի պաշտամունքի տարիներին ընկերվարության անունից որդեգրված մեթոդները նույնքան հեռու էին ճշմարիտ ընկերվարությունից, ինչքան հեռու էր միջնադարյան հավատաքննությունը Քրիստոսի Ավետարանից կամ մեր օրերին՝ ատոմային ռումբը հեռու է ճշմարիտ գիտությունից:

Ես անդրադառնում եմ այս հարցին նաև որպես քրիստոնյա, որովհետև ուղիղ հասկացված ընկերվարության գաղափարները համապատասխանում են քրիստոնեական գաղափարներին թե՛ մարդկային իրավանց ու հավասարության և թե՛ ընկերային արդարության հարցերի առնչությամբ: Այս ճշմարտությունները հաստատելու համար հարկ է ուշադիր կարդալ Հիսուսի Ավետարանը, Նոր կտակարանի Պողոս առաքյալի գրությունները ու նաև առաջին չորս դարերի Արևելքի և Արևմուտքի եկեղեցական մեծ հեղինակների գործերը:

Քրիստոնեությունը համաշխարհային պատմության բեմի վրա կրոնական ոգեշնչումով ծնունդ է առել ու զարգացել առաջին չորս դարերում՝ իբրև ուսմունք և համաժողովրդական շարժում՝ ի պաշտպանություն ընչազուրկների, հարստահարվածների և հալածվածների: Թե ինչպես հետագա դարերում քրիստոնեությունը շեղվեց՝ դա էլ խնդիր է:

Հայ պատգամավորները ներկայացել էին համագումարին մեկ նպատակով՝ ամեն ինչ անել, որպեսզի Ղարաբաղի հարցը ներկայացվի հավուր պատշաճի ու ստանա իր արդարացի լուծումը: Հատկանշական է, որ ազգությունների ինքնորոշման իրավունքի նվիրագործումը և կենսագործումը ամենաապահով հիմքն է ազգերի բարեկամության ամրապնդման գործում:

– Ժառանգելով Ձեզ նախորդած հայրենասեր, շնորհաշատ կաթողիկոսների գործը, կանգնելով հայ եկեղեցու գլուխ՝ Դուք եղաք շինարար կաթողիկոս հայ ժողովրդի համար: Ի՞նչ նոր խնդիրներ և ծրագրեր ունեք առաջիկայում, և ինչպիսի՞ն է հայ եկեղեցու արդի վիճակը:

– Արցախյան արդար դատի փոթորկումների ճանապարհին հայ ժողովուրդն ապրեց ազգային գիտակցության բուռն զարթոնք, հոգեկան պայծառակերպման մի շրջան: Դրա ճանապարհին նա իր հոգու հայացքն ուղղեց նաև իր կրոնական արմատներին, իր դեմքը դարձրեց դեպի մայր դաստիարակ եկեղեցին՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցին: Իսկ դեկտեմբերի 7-ի ահարկու երկրաշարժից հետո մեր աղետյալ ժողովուրդը առավել հարեց եկեղեցուն՝ որպես հույսի և մխիթարության աղբյուրի: Առավել քաղցր հնչեցին նրա վիրավոր սրտին Հիսուսի խոսքերը. «Եկայք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանգուցից զձեզ»:

Հայ եկեղեցու առջև նոր կյանքի հորիզոն բացվեց նաև իբրև հետևանք Խորհրդային Միության վերակառուցման ընթացքի: Անձի պաշտամունքի շրջանին ծանր օրեր էր ապրել նաև Մայր եկեղեցին և ս. Էջմիածինը, մանավանդ Հայրենական պատերազմից առաջ՝ 1930-1938 թվականներին, երբ փակվել էին գրեթե բոլոր աղոթքի տները, աքսորվել բազմաթիվ հոգևորականներ: Վշտալի Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսն Էջմիածնում իր աչքերը փակել էր ողբերգական պայմաններում:

Ճշմարիտ է, որ պատերազմից հետո կացությունը որոշ չափով բարելավվեց, և մանավանդ իմ գահակալության շրջանում հնարավոր դարձավ եկեղեցական

լայն գործունեություն սկզբնավորել՝ շնորհիվ մեր պետական իշխանությունների բարյացակամ վերաբերմունքի, շնորհիվ հայրենի և արտասահմանի մեր հավատացյալ ժողովրդի զոհաբերումների և կազմակերպված աշխատանքի, որ ծավալեց ս. Էջմիածնի միաբանությունն իմ ջանքերով:

Շնորհակալ մեծ դեր կատարեց նաև հայրենի ճարտարապետների ու արվեստագետների հանձնաժողովը՝ սկսած 1957 թվականից, որը գլխավորում էր Միքայել Մազմանյանը, իսկ նրա մահից հետո՝ Վարազդատ Հարությունյանը: Ես երախտագիտությամբ եմ նշում հանձնաժողովի անդամներ Մարտիրոս Սարյանի, Ռաֆայել Իսրայելյանի, պրոֆեսոր Կարո Ղաֆադարյանի, ճարտարապետ Կոստանդին Հովհաննիսյանի, Ալեքսանդր Սահինյանի, վաստակավոր նկարիչ Գրիգոր Խանջյանի, ճարտարապետ Բաղդիկ Արզումանյանի անունները, որոնք տարիներ շարունակ անշահախնդիր կերպով, ոգևորությամբ և մասնագիտական տաղանդով ծրագրեցին ու վերահսկեցին Մայր Աթոռիս շինարարական աշխատանքները՝ ուղղակի ղեկավարությամբ ճարտարապետ Արծրուն Գալիկյանի: Վերջին շուրջ 35 տարիներին վերաբացվեցին, վերաշինվեցին ու բարեզարդվեցին մեր հայրենիքում տասնյակ պատմական վանքեր ու եկեղեցիներ: Եկեղեցական աշխատանքներն այս տարի նոր թափ ստացան 12 վանքերի ու եկեղեցիների բացումով Հայաստանում: Հույս ունենք, որ նաև Վրաստանում կբացվեն մի քանի հայկական եկեղեցիներ՝ ի մխիթարություն հավատացյալ ժողովրդի: Մոտ ապագայում կբացվեն ևս 15 վանքեր ու եկեղեցիներ Հայաստանում:

Հարկ է կազմակերպել ու իրագործել վերանորոգումները տասնյակ նորաբաց վանքերի ու եկեղեցիների և

հարկ է օժտել նրանց հոգևոր սպասավորներով: Դա հեշտ գործ չէ: Ճշմարիտ է, որ մեր հոգևոր ճեմարանը նվիրված է այդ աշխատանքին, սակայն որպեսզի կարողանանք նոր բացված ու բացվելիք վանքերը ու եկեղեցիները գործող դարձնել, կարիք ունենք առնվազն 40-50 հոգևորականների, որոնք պետք է դաստիարակվեն հառաջիկա 3-4 տարիների ընթացքում: Մենք պետք է նախանձախնդիր լինենք, որ մեր երիտասարդ հոգևորականները լինեն հավատավոր ու նվիրյալ մարդիկ՝ լայն զարգացում ունեցող ու բարոյական նկարագրի տեր, որպեսզի հավատացյալներին հուսախաբ չանենք և մնանք միշտ «մշակներ առանց ամօթոյ»:

– Ինչպես ամեն մի քաղաքակիրթ ժողովուրդ, այնպես էլ հայ ժողովուրդը ուշադիր է իր հանդիսությունների, հոբելյանների նկատմամբ և գիտե բարձր մակարդակով նշել բոլոր սրբացած տոները: Ինչպիսի՞ միջոցառումներ եք նախատեսում Դուք հայ եկեղեցու 1700-ամյակը նշելու համար:

– Ինչպես հայտնի է պատմությունից՝ քրիստոնեական հավատքը տարածվել է պատմական Հայաստանի տարածքի վրա առաջին դարից՝ Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալների քարոզությամբ և ապա շարունակվել 2-րդ և 3-րդ դարերի ընթացքում՝ հաճախ հալածված ու արգելված: Սակայն 4-րդ դարի սկզբին Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզչական գործունեության շնորհիվ և նաև իբրև հետևանք քաղաքական որոշ իրադարձությունների՝ հայոց թագավոր Տրդատ Գ-ն ընդունել է քրիստոնեությունը ժողովրդով և 301 թվականից սկսած՝ նոր կրոնը Հայաստանում դարձել է պետական կրոն: Այդ տարեթիվը մեր եկեղեցին պետք է նշի պատշաճ հանդիսավորությամբ 2001 թվականին:

Հառաջիկա աշնանը ս. Էջմիածնում Գերագույն Հոգևոր Խորհուրդը, մեր նախաձեռնությամբ ու նախագահությամբ, գումարելու է ընդլայնված մի նիստ՝ կազմելու համար 1700-ամյակի տոնակատարության ծրագիրը: Առաջադրվել է նաև Երևանում մի նոր մեծածավալ եկեղեցի կառուցել, հոբելյանական տաճար՝ ի նշանավորումն այդ տարեթվի: Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելը ու 1700-ամյակի տոնակատարության նշանավորումը պատմական նշանակություն ունի ոչ միայն մեր ժողովրդի, այլև համայն քրիստոնյա աշխարհի համար: Դա համաշխարհային երևույթ է: Մենք՝ հայերս, կարող ենք հպարտ լինել մեր առաքելական Մայր եկեղեցիով, որ մեր ազգային եկեղեցին է 1700 տարիներ ի վեր:

Հայ եկեղեցին հայ ժողովրդի ազգային ստեղծագործությունն է: Կցանկանայի ճշտել հայ եկեղեցու դերը հայ ժողովրդի կյանքում: Հայ եկեղեցի՝ նշանակում է Ս. Գրիգոր Լուսավորիչ, Ս. Մեսրոպ Մաշտոց, հայ տառերի գյուտ և հայ գրականության սկզբնավորում, Ս. Գրիգոր Նարեկացի և Ս. Ներսես Շնորհալի:

Հայ եկեղեցի՝ նշանակում է նաև Վարդան Մամիկոնյան և Ավարայրի Վարդանանց ճակատամարտ, հայ ազգային-ազատագրական շարժման սկզբնավորում Արցախից՝ Գանձասարի վանքից, Սարդարապատի ճակատամարտ՝ ս. Էջմիածնի օրհնությամբ:

Հայ եկեղեցի՝ նշանակում է նաև Ներսես կաթողիկոս Աշտարակեցի, Գրիգոր Տաթևացի, Խաչատուր Աբովյան, Ավետիք Իսահակյան:

Վերջապես, հայ եկեղեցի՝ նշանակում է հայ դասական ճարտարապետության փառք, հայ ազգի զմայլելի

մանրանկարչություն և հայ կրոնական անմահ երաժշտություն:

Ոչ մի հայ հավատացյալ չպետք է հեռու մնա իր ազգային եկեղեցուց: Մենք պետք է, առավել ևս հիմա, դավանենք մեկ ժողովուրդ, մեկ եկեղեցի, մեկ հայրենիք սրբազան կարգախոսին: Կրոնական այլ դավանանքներ կամ հոսանքներ, աղանդներ՝ դրսից ներմուծված, հարազատ չեն և հարկավոր չեն մեր ժողովրդին: Նման կրոնական հոսանքները Հայաստանում և Սփյուռքում պարզապես իզուր տեղը բաժանումներ են ստեղծում և որոմ սերմանում մեր հավատավոր ազգի ծոցում: Հայ ժողովուրդը կարիք չունի ուրիշներից կրոնական լույս ստանալու:

Մեր հորդորն է՝ ուղղված համայն հավատացյալ մեր ժողովրդին ի Հայաստան և ի սփյուռս աշխարհի՝ անշարժ ու հաստատ կանգնած մնալ մեր առաքելական ազգային եկեղեցու վեմի վրա. «Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի»:

Սիրելինե՛ր, «ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով» այժմ և միշտ, ամեն:

1989թ., հոկտեմբեր, 31

ԿՅԱՆՔԻ Է ԿՈՉՎՈՒՄ ԱՐՑԱԽԻ ԹԵՄԸ

Քրիստոնեությունը մուտք է գործել Հայաստան մ.թ. առաջին դարում, որը իր հաստատումն է գտել բոլոր տասնհինգ նահանգներում, այդ թվում նաև տասներորդ նահանգում՝ Արցախում: Դրա վառ ապացույցն է Արցախ աշխարհի ճարտարապետական հուշարձաններից մեկը՝ Դադիի վանական համալիրը, որը ս. Թադեոս առաքյալի աշակերտներից մեկի՝ Դադիի անվան հետ է կապված: Նա առաջին դարում Արցախում քրիստոնեություն է քարոզել և այստեղ էլ նահատակվել:

301 թվականին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակվելուց հետո Արցախը հիմնական հենակետը դարձավ Հյուսիսարևելյան Հայաստանում քրիստոնեություն տարածելու համար: Արցախ աշխարհի հավատացյալ ժողովուրդը քրիստոնեության ընդունումից մինչև 19-րդ դարը պատկանել է հայ եկեղեցու նվիրապետական աթոռներից մեկին՝ Աղվանից կաթողիկոսությանը, որի գահակալները ենթարկվում էին հայոց կաթողիկոսությանը: 1815 թվականին ցարական կառավարության հրահանգով Աղվանից կաթողիկոսությունը վերացավ: Այդ ժամանակվանից սկսած նախկին Աղվանից կաթողիկոսությանը ենթակա մարզերում ու գավառներում ստեղծվեցին Էջմիածնի կաթողիկոսությանը ենթակա երկու՝ արցախի և Շամախի առաջնորդական թեմ և մեկ՝ Գանձակի հաջորդական վիճակ: Այս մտորումներով ծավալվեց մեր զրույցը Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի հետ:

– Ի՞նչ հանգամանքների բերումով հնարավոր դարձավ և ի՞նչ գործոններով է պայմանավորված Արցախի թեմի վերաբացումը:

– Արցախի թեմը գոյատևել է մինչև 1932 թվականը: Ստալինի բռնատիրական և անմարդկային քաղաքականության տարիներին Խորհրդային Միության տարածքում փակվեցին կամ քարուքանդ արվեցին հազարավոր եկեղեցիներ, սպանվեցին կամ աքսորվեցին հազարավոր հոգևորականներ, որոնց թվում նաև Արցախի վերջին առաջնորդ Վրթանես եպիսկոպոսը: Վերջինս 1931 թվականին մի նամակ էր ուղարկել Խորեն Մուրադբեկյան կաթողիկոսին՝ նկարագրելով տիրող դժվարին կացությունը, երբ օրըստօրե նվազում էր հոգևորականների թիվը: Այդուհանդերձ, նույնիսկ այդ ժամանակ Արցախում կային 276 հոգևորականներ, որոնք պաշտոնավարում էին 112 եկեղեցիներում և 18 վանքերում: Թեմի առաջնորդի աքսորից հետո այդ վանքերն ու եկեղեցիները աստիճանաբար փակվեցին և դադարեցին գործելուց: Արդեն անցել է 60 տարի, ինչ Արցախում չի գործում ոչ մի եկեղեցի: Եվ շնորհիվ վերակառուցման ու դեմոկրատիայի պայմանների՝ հնարավորություն ընձեռվեց սրբատառ կոնդակով հաստատել և վերաբացել Արցախի թեմը:

«ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՊԱՐԳԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ ՀԱՐԱՋԱՏ ՈՐԴԻՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Անհուն է Մեր հոգու մխիթարութիւնը, որ Մեր գահակալութեան այս օրերին վերստին հաստատում է հոգեւոր ճշմարտութիւնը թէ «Աստուած ընդ մեզ է»: Այսպէս

է, որ մեր հայրենի երկրում յաղթականօրէն հռչակուեց կրօնական խղճի ազատութիւնը, որով ազատ գործունէութեան հորիզոն բացուեց Մեր Մայր Եկեղեցու առաջ, և բազմաթիւ նորաբաց վանքերի ու եկեղեցիների շարքում, նաեւ Արցախի տարածքի վրայ, երկար տարիների ընթացքում անգործութեան մատնուած՝ Ամարասի եւ Գանձասարի պատմական վանքերը եւ չորս եկեղեցիներ վերաբացուեցին ի ուրախութիւն մեր հաւատաւոր զաւակներին:

Որով Լեռնային Ղարաբաղում վերահաստատուեց Արցախի պատմական թեմը, կենտրոն ունենալով Գանձասարի վանքը և առաջնորդանիստ կենտրոն Ստեփանակերտ քաղաքը՝ իր եկեղեցիով, թեմական առաջնորդի պաշտօնին կոչուելով Ձերդ Գերաշնորհութիւնը, որ ծնունդով հարազատ զաւակն էք Արցախեան աշխարհի:

Մենք վստահ ենք, թէ Դուք, Ձեր հաւատաւոր հոգով ու մտաւորական պատրաստութեամբ, այլեւ Ձեզ յատուկ հայրենասիրական քաջակորով ոգիով պիտի մխիթարէք Արցախի մեր տառապեալ ժողովուրդը եւ պաշտպան կանգնեք նրա արդար իղձերի կենսագործման:

Սիրելի Սրբազան, Ձեզ մաղթում ենք տոկուն քաջառողջութիւն, սուրբ Հոգու ներշնչանք և յարատեւութեան կորով՝ Ձեր աստուծասէր ու ժողովրդանուէր առաքելութեան ճանապարհին:

Թող բարձրեալն Աստուած մշտապէս մնայ Ձեզ օգնական եւ մարտակից՝ միշտ լուսաւոր պահելով Ձեր կեանքի ուղին:

Ընդունեցէք Մեր հայրապետական սէրն ու օրհնութիւնը՝ Ձերդ Սրբազանութեան, տիրախնամ թեմիդ հոգեւոր դասուն եւ համայն մեր հաւատացեալ ժողովրդեան յԱրցախ:

«Հոգւով եռացէք, Տեառն ծառայեցէք, յուսով խնդացէք, նեղութեան համբերեցէք, աղօթից ստեպ կացէք» եւ «եթէ հնար ինչ իցէ ձեզ, ընդ ամենայն մարդկան զխաղաղութիւն կալջիք» (Հռոմ. 12 եւ 18): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 8 Մարտի
1991 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԽ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1763»:

Արցախի հայ ազգաբնակչությանը պետք է վերադարձվի նրանից խլված մշակույթը, պատմությունը, հոգևոր կյանքը:

Անշուշտ, շատ դժվարություններ և խոչընդոտներ կան, որոնք չեն վերանա, քանի դեռ Արցախը չի միացել իր մայր հայրենիքին:

– *Վեհափառ Տեր, իր բազմադարյան պատմության ընթացքում Արցախ աշխարհը հայտնի է որպես Հայոց աշխարհի կարևորագույն կենտրոններից մեկը: Հետաքրքիր է իմանալ՝ ապագայում երկրամասի մշակութային կյանքը վերականգնելու ի՞նչ հնարավորություններ կան:*

– Հայոց եկեղեցին իր գոյության առաջին օրից մինչև այսօր ներծծված է եղել հայրենասիրությամբ և իր առաքելությունը նկատել է Աստծո խոսքի հետ քարոզել և սերմանել նաև ազգային արժեքները: Մեր փոթորկահույզ պատմության ընթացքում Հայոց Եկեղեցու տիպար հոգևորականները պայքարել են և հաճախ նահատակվել «վասն հայրենյաց, վասն Հիսուսի»:

Հայ եկեղեցին իր սկզբնավորման օրից որդեգրեց ազգային ուղեգիծ և միշտ մնալու է այդպիսին: Այսօրվա դրությամբ մեզ են հանձնվել Ամարասի վանքը, Հադրութ և Մարտակերտ շրջկենտրոնների եկեղեցիները, քննարկվում է Ստեփանակերտին կից Խնածախ գյուղի եկեղեցու վերաբացման հարցը: Հուսով ենք, որ հետագայում մեզ կվերադարձվեն այլ եկեղեցիներ ևս և առաջնորդանիստ եկեղեցին կլինի, Անատոլի Յակոբսոնի գնահատությամբ, «հայ ճարտարապետության մարգարիտը»՝ Գանձասարը, որը միշտ եղել է կաթողիկոսանիստ կամ առաջնորդանիստ աթոռ, և որի տարածքում մինչև օրս էլ գտնվում են Գանձասարի կաթողիկոսների շիրիմները: Այժմ վերոհիշյալ եկեղեցիներում սկսվել են նորոգման աշխատանքներ: Աշխատանքի ծավալը շատ մեծ է, ուստի Հայաստանի լավագույն ճարտարապետներից ստեղծված է մի հատուկ հանձնախումբ, որն արդեն անցել է նախագծման աշխատանքներին և պայմանագրեր է կնքել տեղի շինարարական կազմակերպությունների հետ: Մեր գործունեության հիմնական առանցքը պետք է լինի արցախահայությանը մշտական կապի մեջ պահել եկեղեցու հոգևոր կյանքի հետ: Վստահ եմ, որ այդ սրբազան գործը սիրով ու նվիրվածությամբ կիրականացնի հայրենասեր, առաքինի ու բարեպաշտ Պարգև եպիսկոպոս Մարտիրոսյանը: Առավել քան համոզված եմ, որ այս խառն ու խռովահույզ ժամանակներում Քրիստոսի սիրո կրակը և լույսի ճրագը կվառվի Արցախ աշխարհում:

– Հարցերից դուրս ի՞նչ կցանկանայիք ասել:

– Այսօր արցախահայությունն իր չարչրկված հողի վրա վառել է սեփական գոյության հավերժության խարույկը, իր վառ հավատով է նայում ավելի պայծառ գալիքին: Մենք աղոթում ենք առ Աստված, որ Տերն աճեցնի ու զորացնի մեր ժողովրդին մարմնով ու հոգով, ծաղկյալ ու անսասան պահի մեր երկիրը: Համոզված եմ, որ բարի, խելացի, ստեղծագործող մի հանրություն, որին դժբախտություններն ու կորուստները չեն կարողացել աղավաղել կամ ընկճել, մի ժողովուրդ, որ անաղարտ է պահել իր ավանդույթների վեհությունը և համոզմունքների գեղեցկությունը, կկարողանա հաղթահարել բոլոր դժվարությունները:

Ես կցանկանայի, որ մեր ազգը երբեք տեղիք չտար միջկուսակցական, ներկուսակցական պայքարին: Կուսակցությունները, բնականաբար, կան և պետք է լինեն: Սակայն մեզ համար քաղաքական պայքարը, եթե այն սրման և զարգացման միտում ունենա, կխանգարի մեր ազգի առջև դրված լուրջ խնդիրներին: Պարզապես, մենք չունենք ավելորդ ուժ ու եռանդ՝ ներքին ուժերի դեմ պայքարելու համար: Չէ՞ որ կան ավելի լուրջ, համազգային խնդիրներ, որոնք անհրաժեշտ է լուծել: Ղարաբաղի ժողովրդի գոյատևման երաշխիքը պայմանավորված է համայն հայության աջակցությամբ և միասնությամբ:

Այստեղ ես հատկապես կուզենայի նշել, որ Արցախը մեզ համար ոչ միայն ազատագրական պայքարի խորհրդանիշ է, այլև մեր գոյապայքարը վճռականորեն շարունակելու ուղեցույց: Այն մի տեսակ մկրտարան է, սրբազան ավազան, ուր մտնելով և դուրս գալով՝ մաքրվում է հայ մարդը, վեհանում, հայրենասիրական լիցք ստանում:

Մարկոսի ավետարանում ասված է՝ «Ով հավատում է, նրա համար անկարելի բան չկա»: Հավատացած եմ, որ մեր ժողովուրդը պիտի տեր կանգնի իր պատմական հո-

ղերին: Հայ ազգը տեսիլք, երազ ունի և հավատացած է, որ մի օր ամբողջանալու է: Այսօր դա կարող է անհնար թվալ, սակայն եթե ետ նայենք, մի՞թե երեկ Արցախի ազատագրությունը հնարավոր էր:

Մինչդեռ այսօր ազատ է Արցախը: Այսօր անհնարին թվացող երազը վաղը կարող է իրականություն դառնալ: Ես սխալված չեմ լինի, եթե ասեմ, որ ողջ ազգն է այս տեսիլքով ապրում:

ՓԱՐԻԶՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ

Դարերի ընթացքում բոլոր ժողովուրդները կրոնը հիմք են ծառայեցրել իրենց ազգային սրբությունների համար: Հայ ժողովուրդը նույնացել է քրիստոնեության հետ, որը դարձել է նրա գոյության ձևը, խղճմտանքի ձայնը, արժանապատվությունը, դրոշակը: Եվ այդ բարձր զգացումն է, որ հայ ժողովրդին մղել է պայքարի՝ հանուն քրիստոնեության, որը նրա համար իր պապերի մամռապատ գերեզմաններն էին, դարերով կերտած խաչքարերն ու եկեղեցիները, մենախցերում ծաղկած մագաղաթները, ծաղկավառ դաշտերը, անդնդախոր ձորերը, երկնահաս լեռները, բարակիրան աղջիկների հեզաճկուն պարը, հայրենի ծխանի կապույտ ծուխը:

Հայ ժողովուրդը, սկսած 301 թվականից, առաջնորդ ունենալով Ս. Գրիգոր Լուսավորիչ, Սահակ Պարթև և Ս. Մեսրոպ Մաշտոց եռամեծ հայրերին և շուրջ 130 կաթողիկոսների, կռվել է իր պատվի, ինքնության, արժանապատվության, բոլոր սուրբ նվիրական ավանդների հարատևման համար:

Իր նախորդների բարի ու լավագույն ազգաշահ գործերի կրող ու խտացնող Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը նույնպես ապրել է ազգին հուզող մտահոգություններով, տագնապներով և հույսերով, որոնք դրսևորվեցին փարիզյան ուղևորության շուրջ ծավալված հարցազրույցի ընթացքում:

– Այսօր հայ ժողովուրդը, հայ եկեղեցին և Դուք, Հայոց Հայրապետ, դարձել եք մեկ միասնական, անընդգրկելի, հավերժական «գանձարան հոգւոյն ժողովրդեան հայոց»: Ձեր գահակալության 35 տարիները եղել են արգասավոր, ազգաշահ: Ունենալով տարիների բեռ, եկեղեցական և ազգային գործունեության հարուստ կենսափորձ, ինչպես եք տեսնում հայ ժողովրդին հուզող բազում կնճռոտ հարցերի լուծման հնարավոր տարբերակները:

– Ինձ համար ծանր ու մտահոգիչ է ինչպես Արցախի ժողովրդի, այնպես էլ Ադրբեջանի տարածքից մազապուրծ գաղթած փախստականների հարցը, աղետյալ գոտու անտուն և անօթևան հաշմանդամ մեր հայրենակիցների վիճակը: Հայ եկեղեցին անում է ամեն հնարավորը, որպեսզի սատար կանգնի ազգային փոքր ու մեծ հոգսերին: Վերջին երկու տարիների ընթացքում ոչ միայն հոգևոր, այլև նյութական մեծ օգնություն ցուցաբերվեց ինչպես Արցախի ժողովրդին, այնպես էլ աղետյալ գոտուն և փախստականներին: Եկեղեցուն փոխանցված գումարների և արտասահմանյան ֆիրմաների միջոցով կառուցվում են գործարաններ, ձեռք բերվում սարքավորումներ, որը խիստ անհրաժեշտ է Հայաստանի տնտեսությունը վերականգնելու համար:

Այսօր հայ ժողովուրդը վերածնունդ է ապրում, որը նրա համար նշանակում է պարբերական ու համատարած մի անօրինակ փթթում, իսկ մահվան գերանդին վերցրած ոխերիմ դրացին հնձում է լույսի և բարու ծիլերը, ուրեմն մեզ համար վերածնունդ բառը նշանակում է, բացի մտավոր ու մշակութային, պետական ու քաղաքական, ազատ և անկաշկանդ ապրելու հնարավորությունից, նաև ու առավել ևս՝ վերակենդանություն, վերապրում, ավետարանական Ղազարոսի նման՝ մահից վերստին արթնանալու հրաշք:

Իմ գահակալության 35 տարիների ժամանակաշրջանում, վստահաբար կարող եմ ասել, հայ ժողովուրդն ապրել է բազմաթիվ վերածնունդներ, և այդ մասին գրի եմ առել տարիներ առաջ իմ «Վազգեն Առաջին Հայրապետ Հայոց» գրքում՝ «Վերածնունդ հայրենյաց» բաժնում: Մեր եկեղեցին եղել է հայ ժողովրդի հոգու գանձարան, և այդ գիտակցությունը մենք միշտ ունեցել ենք, թերևս բնազդական մի զգացումով, ներքին մղումով, քանզի դար ու դարեր ապրել ենք նախնյաց սուրբ ավանդներով, և հայոց եկեղեցին հիմնված է նահատակների արյունով հավատը պաշտպանած սրբերի, մարտիրոսների նշխարների վրա:

Հայ եկեղեցին, վաղնջական ժամանակներից քաջ գիտակցելով իր ժողովրդի ներքին էությունը, հավատարիմ այդ կոչմանը, որդեգրեց հայ ժողովրդի ստեղծագործ շունչը, կառուցող ոգին ու դարձրեց իրեն դրոշակ, բնաբան: Հայ ժողովուրդը երբեք չհպարտացավ իր մեծ ու փոքր զինու հաղթանակներով ու նվաճումներով, երբեք դրոշակ չդարձրեց ո՛չ մահը, ո՛չ ողբը, ո՛չ արցունքը, ո՛չ ուրիշներին նվաճել-տիրելու քաղաքականությունը: Հայոց եկեղեցին և հայ ժողովուրդը ի սկզբանե ըմբռնեցին, որ այս արևի տակ կարող են ապրել ու հարատևել շնորհիվ իրենց ստեղծագործ հանճարի, որն Աստծու իսկ ուզածն է, Աստծու իսկ պատգամը:

– Շուրջ 30 հովվապետական ուղևորություններ եք կատարել արտասահմանյան զանազան երկրներ, լույս և հավատք շնորհել ցիրուցան հոտի բոլոր անդամներին: Հայաստանյայց եկեղեցու տարեգրության մեջ աննախընթաց երևույթ էր Ձեր և Մեծի Տանն Կիլիկիո Գարե-

գին Բ կաթողիկոսի համատեղ այցելությունը հայկական գաղթօջախներ: Խնդրում ենք մի քանի խոսքով պատմեք ուղևորության նպատակների, իրագործումների, տպավորությունների մասին:

– Արդարև, այս ուղևորությունը պատմական է: Անթիլիասի տագնապի ստեղծման շարժառիթներն ու պատմությունը ծանոթ են բոլորին: Հասկանալի է միաժամանակ այդ տագնապի խաղաղ ու դրական լուծմանը նվիրված՝ ընդհանրապես Մայր Աթոռի և ի մասնակի իմ անշահախնդիր վերաբերմունքը, բազմաթիվ ջանքերը, խաղաղասիրական կոչերն ու առաջարկները հայ եկեղեցու ծոցում կանոնականությունը և ներքին խաղաղությունն ու միասնությունը վերահաստատելու համար: Ինձ համար ուրախալի է, որ վերջնականապես նոր հարաբերություններ մշակվեցին մեր զույգ աթոռների միջև: Խորապես զգացված հայտնեցի իմ եղբայրական ու միասնական գործելու պատրաստակամությունը՝ հայտարարելով, որ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Գարեգին Բ-ն որքան հաստատ լինի Կիլիկյան Աթոռի վրա, ես նույնքան հաստատ կզգամ ինձ Էջմիածնի Աթոռի վրա:

Մայիսի 6-ին ես և Գարեգին Բ կաթողիկոսը օծեցինք Բելգիայի հայկական նորակառույց ս. Մարիամ Մագդաղինացու եկեղեցին: Օծման արարողությանը ներկա էին բազմաթիվ օտար եկեղեցիների ներկայացուցիչներ, պետական, կառավարական դեմքեր: Մայիսի 8-ին մենք հանդիպեցինք Եվրոպական խորհրդարանի նախագահին: Մեր խորին շնորհակալությունը հայտնեցինք պարոն նախագահին այն օժանդակության համար, որ խորհրդարանը ցուցաբերեց երկրաշարժի օրերին, ինչպես նաև երախտագիտության զգացումով նշեցինք 1987 թվականի հունիսի բանաձևը, որով վավերացվեց 1915

թվականին Արևմտյան Հայաստանում թուրքերի կողմից հայ ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանության փաստը:

Մեր երկու կաթողիկոսների անունից նամակ հանձնեցինք՝ հասցեագրված Միացյալ ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար պարոն Պերես դե Կուելյարին: Ցեղասպանության 75-ամյակի կապակցությամբ ցանկություն հայտնեցինք նաև, որպեսզի հնարավորություն ընձեռվի մեզ՝ ներկա գտնվել Եվրախորհրդարանի հավաքին՝ ավելի հանգամանորեն ներկայացնելու 1915 թվականի ցեղասպանության հարցը և հայ ժողովրդին հուզող հրատապ խնդիրներ լուսաբանել:

Նախագահն ընդունեց մեր առաջարկը և խոստացավ միջնորդել պետական մարմինների առջև, որպեսզի Եվրախորհրդարանում մեր ձայնը կարողանանք բարձրացնել: Գարեգին Բ կաթողիկոսն անդրադարձավ լիբանանահայության խնդրին: Հանդիպմանը ներկա էր Բելգիայի երեսփոխան Էռնեստ Կլին, որը հայտնի է Եվրախորհրդարանում իր բերած հայանպաստ գործունեությամբ:

Բելգիայից երկու կաթողիկոսներս և մեզ ուղեկցող անձինք մեկնեցինք Փարիզ, որտեղ տեղի ունեցավ հայկական եկեղեցու սրահի բացումը, և զույգ կաթողիկոսների ձեռամբ օծվեց խաչքարը: Մայիսի 16-ին Սերքլ Էնթերալ սրահի մեջ շուրջ հարյուրավոր հրավիրյալներու առջև տեղի ունեցավ մամուլի ասուլիս, որտեղ մասնավորապես կանգ առանք եկեղեցու հարցերին և Հայաստանի ու Խորհրդային Միության այլ շրջաններում տեղի ունեցող կրոնական զարթոնքին, մեր մտահոգություններն ու խոհերը հայտնեցինք հայ կյանքի ներկա վիճակի մասին, շեշտեցինք, որ Հայաստանն է հիմնական հարցը, և

ճիշտ պետք է հասկացվի ներկա վիճակը, կոչ արեցինք, որպեսզի Սփյուռքի կուսակցությունները, կազմակերպությունները, մամուլը վերաքննության ենթարկեն իրենց դիրքը, քննության առնեն հայ ժողովրդի դարերով ապրած կյանքի իմաստը, խորհուրդը, նշանաբանը, ուղին, որով քայլել է ու պետք է շարունակի քայլել, քանզի հարատև անդուլ քայլելով է, որ երազը պետք է իրողություն դառնա, ժողովրդի դարավոր իղձերն ու ակնկալիքները մարմին ստանան:

Քանի որ այսօր խոսելու ժամանակը չէ, այլ՝ գործելու, մենք մեր անունից կոչ արեցինք և հրավեր կարդացինք Սփյուռքի մեր եղբայրներին և ցանկացողներին, որպեսզի իրենց հնարավոր նպաստը բերեն՝ հայրենիքը ոտքի կանգնեցնելու և արցախահայաթյանը ինչպես նյութական օգնություն ցուցաբերելու, այնպես էլ նրանց արդար պահանջին նեցուկ կանգնելու:

Մենք մեր մտավախությունը հայտնեցինք ինչպես Արցախի ժողովրդի կյանքի ապահովության, այնպես էլ հուշարձանների պահպանման համար, քանզի մեր աչքի առջև դատարկվեցին Արցախի Կամո, Ազատ գյուղերը, Նախիջևանի տարածքում ոչնչացվեցին հազարամյակներից մեզ ժառանգած հազարավոր խաչքարեր, սեփականացվեցին կամ թալանվեցին եկեղեցիներ: Դժբախտաբար, նման թողտվության պայմաններում երաշխիք չկա, որ վաղը բարբարոսի ձեռքը չի կրկնելու նույնը:

– Առաջիկայում իրագործվելիք ի՞նչ ծրագրեր ունեք:

– Հոգսերը, ծրագրերը և անելիքները շատ-շատ են: Նախ՝ օգտվելով առիթից, ուզում եմ հուլիսի 22-ին ցանկացողներին հրավիրել Սևանա լիճ, որտեղ պետք է տեղի ունենա հավաքական մկրտություն: Այդ արարողությանը հրավիրված են աշխարհի գրեթե բոլոր քրիստոնյա

եկեղեցիների ներկայացուցիչներ, միարարական շարժման անդամներ, պաշտոնյա անձինք, թղթակիցներ:

Ինչպես գիտեք, ստեղծվում են նոր թեմեր և բացվում են նորանոր եկեղեցիներ, իսկ մենք չունենք հոգևորականներ, որոնք կարողանան լծվել ժողովրդին ծառայելու այդ ազնիվ, մաքուր, մարդասիրական գործին: Ուստի այս տարի ճեմարանում կբացվի 2-3 տարի ժամկետով դասընթաց (ճեմարանում ուսանելու տարիները 6-7 են), որտեղ կհրավիրվեն ուսանելու Երևանի պետական համալսարանի բանասիրական և պատմական բաժինների ուսանողներ, որոնց գիտելիքներին կգումարվեն հոգևոր իմացություն, և պատրաստված կլծվեն աշխատանքի:

Սեպտեմբերի 30-ին տեղի է ունենալու հերթական մյուռոնօրհնության ծիսակատարությունը, որին ներկա կգտնվեն աշխարհի շատ երկրներից հրավիրված հյուրեր:

– Ի՞նչ կմաղթեիք հայ ժողովրդին: Չէ՞ որ Հայոց հայրապետի մաղթանքը աղոթք է առ Աստված:

– Ազգիս կմաղթեի ուժ, եռանդ, համբերություն, փորձություններին դիմագրավելու կամք: Պատմությունը մեր ժողովրդի ճակատին գրել է ոչ թե մեռնել, այլ ապրել և վերածնվել: Հայ ժողովուրդը երբեք չի ընկճվել բախտի հարվածներից և գիտցել է իր նահատակությունը վերածել հաղթանակի: Խաչելության Գողգոթային հաջորդում է հարության այգաբացը, նահատակությանը՝ վերածնունդը:

Հայը կրոնական և քաղաքական ինչ հուզումներ էլ որ ունենալու լինի, չի կարող մոռանալ իր արյունոտ անցյալը և ոչ էլ հայոց արդար դատը: Հայ ժողովուրդը դարեր ի վեր կորցրել է անկախությունը, բայց ոչ կենսունակութ-

յունը: Ազգը, որ ապրելու կամք ունի՝ չի մեռնի և իրավունք չունի մեռնելու: Եղել ենք, կանք ու կլինենք:

Բեղուն է հայ ժողովրդի արգանդը: Հայոց անկոտրում ոգին դարբնել են մեծն Մաշտոցը, Խորենացին: «Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահութիւն»: Քանի մեր ականջին կհնչեն Եղիշեի այս խոսքերը, մենք կլինենք, կստեղծագործենք և կհարատևենք:

1990թ.

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Տասը տարի առաջ, 1994 թվականի օգոստոսի 18-ին, 86 տարեկան հասակում իր աչքերը փակեց երջանկահիշատակ Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը: Այդ օրը հայ ժողովրդի սգակիր զավակները ծնրադիր Ս. Սահակ և Ս. Մեսրոպ աղոթքներով հողին հանձնեցին մարմինը հոգելույս հայրապետի, որը բովանդակ հայության էր, ինչպես բովանդակ հայությունը իրենը: Այո, ոչ ևս է Նորին Սուրբ Օծությունը, որի թաղման հուղարկավոր եղան ոչ միայն հայ ազգի արժանավոր զավակները, այլև Մայր Աթոռ ս. Էջմիածնի խոնարհված դրոշին իրենց հարգանքի տուրքը մատուցեցին աշխարհի տարբեր երկրներից ժամանած տարբեր ազգերի հոգևոր պետեր, բարձրաստիճան հոգևորականներ, պետական այրեր, արվեստի գործիչներ, քանզի նա փառահեղ մարդ էր և փառքի արժանացած հովվապետ էր:

Մեղմելու համար քույր եկեղեցու մեծ վիշտը, իր եղբայրական, մխիթարական և սփոփանքի խոսքն է ասում Համայն Վրաց պատրիարք Նորին Սրբություն Տ.Տ. Իլյա Երկրորդը. «Վազգեն Առաջին կաթողիկոսը ժրաջան և հավատավոր մի գործիչ էր՝ եկեղեցիների միջև մերձեցման և սերտ գործակցության ուղղության ճշմարիտ էկումենիկ ոգով տոգորված: Նա միաժամանակ անձանձրույթ ու հարատև քարոզիչ էր աշխարհի խաղաղության և ժողովուրդների բարեկամության նվիրական գաղա-

փարների և վերջապես Նորին Սրբությունը ջերմ մի հայրենասեր էր՝ բառի ամենաազնիվ իմաստով: Առանձնապես մեզ համար մխիթարական է հաստատել, որ Վազգեն կաթողիկոսը նախանձախնդիր էր հայոց և վրաց եկեղեցիների և ժողովուրդների անխախտ եղբայրության ամրապնդման: Վշտահար սրտով մենք խոնարհվում ենք նրա հիշատակի առջև»:

Տասը տարի է անցել այն օրից, երբ մենք հրաժեշտ տվինք մի արժանավոր տեսանողի, ազգասեր և եկեղեցասեր (ըստ միահամուռ կարծիքի համայն հայության) մի մեծ ղիվանագետի, մեր անհուն վիշտը պաշտպանողին, նաև մեր պայծառ գալիքի համար աղոթողին, որը կարծես իր գրչով ու խոհով հին պատմիչներից մնացած Եղիշե լիներ մեր օրերում: Նա իր եկեղեցաշեն վաստակով հաստատուն տեղ գտավ մեր մեծագործ կաթողիկոսների հոգևոր պատմության անմահ փառքերի աստղաբույլում, իսկ նրա մահով հայոց հողը հարստացավ մի մեծ բարությամբ:

Որտե՞ղ է նրա մեծության գաղտնիքը, նրա անվան ու գործի հմայքը: Անվերապահորեն կարող ենք ասել՝ հայ ժողովրդի և եկեղեցու հանդեպ ունեցած նրա խորունկ սիրո և պաշտամունքի մեջ է: Նորին Սուրբ Օծություն Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինն անդրդվելի հավատով բարձրացավ Լուսավորչի գահը՝ գործելու, սերմանելու Տիրոջ բարի սերմերը մեր ժողովրդի սրտում և մտքում. անխախտ պահելով կրոնական բոլոր կանոնները՝ հնօրյա ու դարերի շունչը իր վրա կրող հայոց եկեղեցին ունեցավ ղեկավարման իր ուրույն ընթացքը:

Մահվանից տասը տարի անց կարող ենք ասել, որ Վազգեն Առաջին վեհափառը երջանիկ էր, քանզի հաստուցել էր իր պարտքը հարազատ ժողովրդին, հատուցել իր հանճարեղ մտքով ու աշխատանքով: Հայոց եկեղեցու 1700-ամյա պատմության մեջ քիչ հայրապետների է վիճակվել այսքան երկարատև գահակալություն, և քչերին է հաջողվել մեր ժողովրդի կյանքում խաղալ այնպիսի կարևոր դեր, ինչպիսին ունեցավ Վազգեն վեհափառը: Նա իրավամբ պետք է դրվի այնպիսի նշանավոր կաթողիկոսների շարքում, ինչպիսիք են Ներսես Մեծը, Հովհաննես Օձնեցին, Կոմիտաս Աղձնցին և այլն: Հեշտ է թվել անցնող տարիները, բայց պետք է պատկերացնել այն մեծ եռանդը ու նվիրումը, որ սպառել է Վազգեն վեհափառը՝ հասնելու համար այն արդյունքին, որի տերն է մեր ժողովուրդն այսօր:

Նրա 39-ամյա գահակալության եկեղեցաշեն ծրագրերը բարձր է գնահատել ճարտարապետ, դոկտոր, պրոֆեսոր Վարազդատ Հարությունյանը. «Առանձնապես հիշատակության արժանի են հին և նոր վեհարանների ու Ղազարապատի միաբանական սեղանատան, ինչպես նաև ավանդական Տրդատ դռան վերականգնման արդյունքները:

Կիսախարխուլ կամ բարձիթողի վիճակից դրանք հառնեցին իրենց ճարտարապետական կուռ հնչեղությամբ, ներքնամասերի տեսքի հոյակապությամբ, շինարարական բարձր որակով: Նորոգվեցին տպարանի, ճեմարանի և Երեմյան խցերի շենքերը, դրանցից առաջինը լրացվեց երկրորդ հարկով, երկրորդին կցակառուցվեց նոր մաս: Մայրավանքի պարագիծը լրացվեց հյուրանոցի նոր շենքով, իսկ հյուսիսայինը՝ ժամացույցի աշտարակով:

Բակի կանաչապատման և ընդհանուր բարեկարգման մաս կազմեցին Եղեռնի հուշարձանն ու «Կաթնաղբ-

յուրը», Մկրտիչ Խրիմյան կաթողիկոսի հիշատակին նվիրված «Շերեփ» աղբյուր-հուշարձանը: Հետագա տարիներին հայրապետի շինարարական գործունեությունն ընդգրկեց գործող բազմաթիվ վանքեր ու եկեղեցիներ: Էջմիածնի սուրբ Հռիփսիմե տաճարում և բակում կատարվեցին վերանորոգման ու բարեկարգման մեծածավալ աշխատանքներ:

Հիմնավոր վերանորոգման ենթարկվեցին ս. Գայանե տաճարը, Էջմիածնի ս. Շողակաթ և ս. Աստվածածին եկեղեցիները (վերջինիս կցակառուցվեց մի նոր զանգաշտարակ), բակերը բարեկարգվեցին, իսկ ս. Գայանե տաճարի բակում կառուցվեց մատաղատան շենքը:

Վեհափառ հայրապետի հատուկ ուշադրության առարկան դարձավ Օշականի ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցին: Հիմնովին վերակառուցվեց ու բարեզարդվեց մեծ Սրբի դամբարանը, եկեղեցու պատերը ծածկվեցին բարձրարվեստ որմնանկարներով, որոնց հեղինակն է նկարիչ Հովհաննես Մինասյանը:

Վերակառուցվեց Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցին, որի կողքին կառուցվեց առաջնորդարանի շենքը, որը նախագծել էին տաղանդավոր ճարտարապետներ Ռաֆայել Իսրայելյանը ու Արծրուն Գալիկյանը: Եկեղեցու բարձրարվեստ քանդակապատումը կատարվեց շնորհալի քանդակագործ Արտաշես Հովսեփյանի կողմից:

Համապատասխան ուշադրություն դարձվեց նաև ներքին սփյուռքի եկեղեցիներին: Վերանորոգման ու բարեզարդման աշխատանքներ կատարվեցին Ախալցխայի, Ախալքալաքի, Թբիլիսիի ս. Գևորգ և ս. Էջմիածին, Բաքվի, Կիրավաբաղի, Օրջոնիկիձեի, Մոսկվայի և Սանկտ Պետերբուրգի հայկական եկեղեցիներում: Մայր

Աթոռը եկեղեցաշինության ասպարեզում օգտակար եղավ նաև Սփյուռքին՝ այդ գործում ներգրավելով հայրենիքի փորձառու ճարտարապետներին: Միլանի ս. Քառասուն մանկանց և Նյու Յորքի ս. Վարդան եկեղեցիների էսքիզային նախագծերի հեղինակը տաղանդավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն է, Մոնտեվիդեոյինը՝ ես: Վիեննայի ս. Հռիփսիմե եկեղեցին կառուցվել է վաստակավոր ճարտարապետ Էդվարդ Սրապյանի նախագծով: Այսպիսի արդյունավետությամբ է բնութագրվում վեհափառ հայրապետի ոչ լրիվ հիշատակված շինարարական գործունեությունը, որն արժանի է բարձր դրվատանքի»:

Ս. Էջմիածինը պաշտամունք էր Վազգեն կաթողիկոսի համար, և նա ուզում էր Մայր Աթոռը պաշտամունք դառնար նաև ամբողջ հայության հոգուն: Որպես Հայոց հայրապետ՝ Ներսես Շնորհալու նման ցանկանում էր այցելել աշխարհով մեկ ցրված իր հոտին, մտնել ամեն տուն ու երդիկ, «բերան ընդ բերան խօսել» նրանց մտահոգությունների, ինչու չէ, նաև ուրախությունների մասին:

Ահավասիկ մի պատառիկ 1963 թվականին մամուլում տպագրված Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինին հղած բարեշնորհ Վարդգես Կեռոյանի ողջույնի և բարի գալստյան ուղերձից, որը կարոտաբաղձ տարագիր հայի հոգու ճիչն է. «Վեհափառ տեր, ես այս գիշեր կուզեմ ուխտավորել հոգիիս բովանդակ ջերմությամբ, մատչելով ի համբույր Ձեր Ս. Աջույն:

Կուզեմ համբուրել Ձեր Ս. Աջը, համբուրած ըլլալու համար Աջը մեր Լուսավորիչ հայրապետին, որ իր աղոթքներուն և օրհնությանց ներքև պահեց հայ ժողովուրդը իր պատմության մռայլ դարերուն ընդմիջեն:

Կուզեմ համբուրել Ձեր Ս. Աջը, համբուրած ըլլալու համար մեր Սրբության Սրբոց ս. Էջմիածինը. որ մշտնջենապես լուսավորյալ պահեց հայ ժողովրդի հոգին, իբրև լուսավոր փարոս մը փոթորիկներուն դիմաց:

Կուզեմ համբուրել Ձեր Ս. Աջը, համբուրած ըլլալու համար Օշականի եռամեծ Վարդապետին՝ Ս. Մեսրոպ Մաշտոցի շիրիմը, որ իմացապես լուսավորեց հայուն միտքը և ջահավորեց մեր մշակույթի ոսկեդարը:

Կուզեմ համբուրել Ձեր Ս. Աջը, համբուրած ըլլալու համար մեր հայրենիքի հողը սրբազան:

Եվ վերջապես կուզեմ համբուրել Ձեր Ս. Աջը, համբուրած ըլլալու համար բազմահազար և բյուրավոր մեր խաղաղսեր և շինարար եղբայրներուն և քույրերուն, որոնք կաշխատին մեր հայրենիքին մեջ՝ հրաշակերտելու մեր ներկան և մեր ապագան քաղաքակրթության առաջին գիծերուն վրա»:

Համանման ոգով ու շնչով են դիմավորել Սփյուռքում Հայոց հայրապետին և, բնականաբար, շրջագայությունների ժամանակ ստացած տպավորությունները իրենց գեղարվեստական մարմնացումը ստացան Վազգեն վեհափառի քարոզներում, ելույթներում, որոնք նոթերի, վերհուշի, ակնարկի, տպավորության մի ինքնատիպ համաձուլվածք է:

Եվ այդպես տարիները կուտակվում էին տարիների վրա:

Բայց անողոք մահը շտապեց կտրել ամենից սիրված ու հարգված մեծանուն հայրապետի կյանքի թելը: Մինչդեռ նա մեր օրերի և գալիք ժամանակների համար միշտ կմնա իբրև մարդ՝ սուրբ հիշատակ, անլռելի պատգամ:

Հայոց մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը աշխարհի անցավոր լինելու մասին փիլիսոփայական խոկումներում հանգում է հետևյալին.

Գործն է անմահ, լավ իմացեք,
Որ խոսվում է դարեդար,
Երնեկ նրան, որ իր գործով
Կապրի անվերջ, անդադար:

Եվ այսօր, վաղը, միշտ երախտապարտ հայ ժողովուրդը իր անմահության տոնացույցում, ի նշանավորումն վեհափառ հայրապետի և մեծ բանաստեղծի, որպես ընծա կշնորհի առանց տիտղոսի, պարզ ու անպաճույճ, բայց սուրբ մի անուն՝ Ամենայն Հայոց Վազգեն Շինարար և Ամենայն Հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի հայոց եկեղեցու զանգակ աղբյուրը 3
Ամեն ինչ հիշող, ամեն ինչ հատուցող ժամանակը 10
Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա-ի
գահակալության 35-ամյակը 17
Խունկ ու օրհնություն հովվապետի և վարպետի
անթառամ հիշատակին 26
«Գերված խաչքարերը» 32
Հոգևորականն ու գիտնականը քայլեցին անկոխ
արահետներով 35
«Պատիւս պարտաւորաց, հարկս հարկաւորաց» 46
Եվ գնաց աշխարհից անարծաթ հովվապետը 56
«Մատեանն ահա զոր խոստացա» 62
Նրանք ճաշակեցին փորձության բաժակը ցմրուր 66
Վշտալի հայրապետներ 75
«Տնկեսցի սեր և արդարութիւն յերկրի» 87
Խոսում են նամակները 100
Տարեմուտի այս օրը սրբազան է 110
Գյումրիում բացվեց հոգևոր ճեմարան 115

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ

Մտորումներ Նոր տարվա շեմին 121
Եկեղեցին հայկական հայրենի տունն է հոգուոյս 128
Կյանքի է կոչվում Արցախի թեմը 136
Փարիզյան արձագանքներ 143
Որպես վերջաբան 151

ՀՏԴ
ԳՄԴ
Ս 982

Սուքիասյան Ս.
Ս 982 Մի դափնեճյուղ Վազգեն Ա-ի հիշատակին / Հոդվածներ, հարցազրույցներ: Եր.: Նաիրի, 2004. 160 էջ:

Ս ———— 2004 ԳՄԴ
705(01)2004

ISBN 5-550-01370-3

© Սուքիասյան Սիլվա, 2004

277 7.03.2005

ՍԻԼՎԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՄԻ ԴԱՓՆԵՃՅՈՒՂ ՎԱԶԳԵՆ Ա-Ի ՀԻՇԱՏԱԿԻՆ

(Հոդվածներ, հարցազրույցներ)

«Նաիրի» հրատարակչություն» ՓԲԸ
Երևան-9, Տերյան 91

100

ՀՀ Ազգային գրադարան
NL1075955

277

7. 03 2005

11

39938